




ԶՄԻՄՈՒՆ





Լ Է
ՏԱՐԻ




ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Արմ. Խ.

1980



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՈՐԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԿՈՆԴԱԿԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎԱԹՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԹՎ**

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՅ
ԵՒ ԱԹՈՌԱԿՅԻՆ ՆՈՐԱ Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ-Ի, ՊԱՏՐԻԱՐԷԻՆ ՀԱՅՈՑ
ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Տ. ԵՂԻՇԷԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐԷԻՆ
ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ Տ. ԾՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ,
ՀԱՄՐԸՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ,
ՔԱՀԱՆԱՅԻՑ. ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ
ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱԾՏՈՆԷԻՑ ԵՒ
ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Հիմաւորց մայր երկիրը Հայոց, այս տարի նոյեմբերին բոլորում է վաթսուն տարիները իր նոր պետականութեան, Հայկական Խորհրդային Հանրապետութեան:

Մօտ երեքհազարամեայ մեր պատմութեան հորիզոնի վրայ, վերջին վաթսուն տարիները հանդիսացան մի ժամանակաշրջան՝ հայ պետութեան վերականգնման ու անվտանգ գոյատևման, լայնատարած քաղաքաշինութեան, տնտեսական արմատական ծաւալում վերակառուցման, գիտութիւնների ու ազգային մշակոյթի ծաղկման՝ խաղաղութեան ու անվտանգութեան պայմաններում: Մի ժամանակաշրջան, ինչպիսին քիչ անգամներ տեսել էր բազմաշաբաթ հայ ժողովուրդը իր պատմական մայր հողի վրայ:

Վերջին վաթսուն տարիների հայրենական նուաճումները, փայլուն կերպով ցոյց տուեցին թէ հայ ազգը կարող է հպարտ լինել ոչ միայն անցեա-

լից ժառանգած իր անկորնչելի արժեքներով, այլև իր ստեղծած մոր կեանքով ու մոր արժեքներով, որոնք աննախատեսելի չափերով հարստացրին հայ ստեղծագործ մտքի ու հոգու զանազանը:

Վերածննդի այս շրջանում, հայաստանցի ժողովուրդը չմանուեց Աւետարանի այն ծառային, որ իրեն տրուած քանքարները միայն պահել-պահպանել գիտեցաւ, այլ մանուեց այն միւս ծառային, որ կարողացաւ իր ստացածը, իր ունեցածը անեցնել. բազմապատկել, որով և արժանի դարձաւ Յիսուսի գովասանքին՝ «զի ամենայնի որ ունիցի՝ տացի և յաւելցի» (Մատթ. ԻԵ՝ 29):

Այս վաթսու մտարիների ժամանակահատուածում հայաստանցի ժողովուրդը, ազատուած հազար տարիների գերութիւնից, ցրումից ու քայքայումից, դարձաւ՝ իր մայր հողի վրայ ապրող ու զարգացող ազգութիւն, օժտուած սեփական պետական կառոյցով ու ղեկավարութեամբ, իր ազգային դրօշով ու լեզուով, ոգեշնչուած անցեալի արժեքներով ու ապագայի վառ երազանքներով:

Այս շրջանում է որ Արևելահայաստանը քառապատկեց իր ազգաբնակչութեան համրանքը և ստեղծեց իր մոր քաղաքամայր Երևանը, այժմ աւելի քան մէկ միլիոն բնակիչներով:

Այս վաթսու մտարիներին հիմնուեցին ու ծաղկման հասան՝ Գիտութիւնների Ակադեմիան, Պետական Հայալսարանը, Մատենադարանը, Աստղադիտարանը և բազում գիտական, կրթական ու գեղարուեստական հաստատութիւններ: Նոր Հայաստանը հայ ժողովրդին ու պատմութեանը սլար, գնեց՝ Յովհաննէս Բաղրամեան, Վիկտոր Համբարձումեան, Հրաչեայ Աճառեան, Ալեքսանդր Թամանեան, Մարտիրոս Սարեան, Արամ Խաչատուրեան, Եղիշէ Չարենց, Պարոյր Սևակ:

Այս վաթսու մտարիներին բարձրացան յուշարձանները Վարդան Մամիկոնեանի, Ծիծեռնակաբերդի և Սարդարապատի:

Նոր Հայաստանի արևի տակ իր վերածնունդն է ապրում նաև մեր Մայր Եկեղեցին, հոգևոր կեանքի զարթոնքով, տասնեակ պատմական յուշարձան վանքերի ու եկեղեցիների վերանորոգումով և յատկապէս Սուրբ Էջմիածնի աննախընթաց շքեղացումով:

Մեր օրերի հայ մարդու ազգային խղճի տենչանքն է, որ վերածնուած Հայաստանը, հպարտ ու ինքնավստահ կանգնած վաթսու մտարիների սեմին, իր հայեացքը ուղղած դէպի ապագան, նոյն ստեղծագործ եռանդով շարունակի իր յայտնական երթը, եղբայրական ազգութիւնների առաջին շարքերում, ապահովութեան ու խաղաղութեան մոր պայմաններում, քալլ առ քալլ հասնելու կամեցողութեամբ՝ իր արդար սպասումների բարձունքին:

Մեր օրերի հայկական պետութիւնը միակ իրական ու ամրակոտ պատուանդանն է հայոց հայրենիքի ու ազգի գոյատևման, և միակ ճշմարիտ գրաւականը նրանց ապագայ Է՛լ աւելի պայծառ ճառագայթումին:

Այո՛, «անցան վշտի դարերն հայոց», եկաւ «հանութ կեանքի արշալոյսը վառ հագած» և հայոց «քաջ որդոց սուրբ արիւնով» ծնունդ առաւ մի մոր հայրենիք, հզօր հայրենիք, լոյսի հայրենիք, լոյսի հայրենիք:

Հայեր, մայր երկրից և բոլոր երկրներից, միացէ՛ք այսօր հոգով ու սրտով և փա՛ռք տուէք նախախնամողն Աստծուն, անցնող վաթսու տարիների համար, և աղօթեցէ՛ք որ հայրենական վերածննդի ու ծաղկման տարիները անվերջ շարունակուեն, որ ամէն տեսակի փորձութիւններ ու վտանգներ հեռու մնան մեր հայրենիքի սահմաններից, որ այլևս երբեք չար

ձեռքեր չքանդեն Տունը Հայոց, որ այլևս արցունք չտեսնեն մեր մայրերի և քույրերի աչքերը, որ Հայաստանը յաւիտ մնայ կանգուն ու անասան, շէն ու խաղաղ, և հայոց սեղանների վրայ միշտ առատ լինեն՝ հացն ու լոյսը, երգն ու աղօթքը, որ հայաստանցին ամէն առաւօտ իր հարեանին ողջունի աւանդական «բարի լոյս»-ով:

Նոր Հայաստանը, ապրող, շնչող ու ծաղկող Հայաստանը, վաթսուն տարեկան է՝ «Հազար շեփոր հնչեն թող այս առաւօտ»:

Օրհնութիւն և լոյս և խաղաղութիւն մեր վերածնունդ հայրենիքին, յաւերժական Մայր Հայաստանին:

Արդ, ջերմ սրտով հրաւեր ենք կարդում, որ առաջիկայ նոյեմբեր ամսին, Հայաստանեայց առաքելական բոլոր եկեղեցիներում մատուցուեն գոհաբանական մաղթանքներ վասն անասանութեան և յաւերժ ծաղկման ամենայն Հայոց մայր Հայրենիքի:

«Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդրութեամբ և խաղաղութեամբ. առաւելով ձեզ յուսով զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ»: Ամէն:

Կալ Չիֆե

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի 22 մայիսի
1980 փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԻԹ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
1020





ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ
ԺՈՂՈՎԻՆ
(Մայիս 1980)

Գերաշնորհ սրբազան առաջնորդ, ուխտապահ հոգևոր սպասավորներ
և հարգարժան պատգամավորներ,

Տիրոջ ողորմությամբ ահավասիկ կգտնվինք ձեր մեջ, Մայր Աթոռ Սուրբ
Էջմիածնեն անձամբ բերելու ձեզի բոլորիդ Մեր սիրո ողջույնը և հայրա-
պետական օրհնությունը:

Ձեզի կրեքենք մահ Մեր գնահատանքը, անցնող շրջանին ձեր ծավա-
լած եկեղեցաշեն գործունեության համար ու Մեր չերմ մաղթանքները որ
ձեր այս համագումարը մշակելիք նոր ծրագրերով և ապագա ձեռնարկնե-
րով բեղուն գործունեության նոր շրջանի մը սկիզբը հանդիսանա:

Մեր ներկայությունը այստեղ ձեր մեջ կխորհրդանշե Հայաստանյայց
Առաքելական Սուրբ Եկեղեցվո մեկությունը, անբաժանությունը և հայ հա-
վատացյալ ժողովուրդի հոգևոր միությունը Մայր Եկեղեցիով, աստվածա-
կառույց Սուրբ Էջմիածնի օրհնության ներքև:

Հայ ժողովուրդի պատմական ճակատագիրն է եղած, իր կամքեն ան-
կախ ու իր կամքին հակառակ, ցրված ապրիլ աշխարհի հեռու ճամբաներու
վրա, տակավին յոթներորդ դարեն սկսյալ: Հայ ժողովուրդը անցյալի մեջ
դարեր շարունակ չէ ունեցած ազգային ինքնիշխան պետություն, չէ ունե-
ցած տնտեսական և ռազմական ուժ, չէ ունեցած հուսալի բարեկամներ ու
զինակիցներ:

Հայ ժողովուրդը գրեթե իր ամբողջ պատմության ընթացքին, իր գո-
յությունը, իր ինքնությունը, իր հոգիի ազատությունն ու անկախությունը
պահպանելու համար ապավինած է իր քրիստոնեական հավատքին, իր
Մայր Եկեղեցիին, իր ազգային դպրության և մշակույթին:

Հայ ժողովուրդը եկեղեցի ժողովուրդ է, հայ ժողովուրդը մշակույթ ժո-
ղովուրդ է: Մեր փոթորկահույզ պատմության վճիռն է այս: Եվ մեր հավա-
տավոր ու մշակութաստեղծ ազգը այդ վճիռը վերածած է փառքի տիտղո-
սի: Այս անցավոր աշխարհի վրա հայ ժողովուրդը ապրած է ու մաքառած՝
կյանքի ոգեկան այս ըմբռնումով:

Միով և երախտագիտությամբ հրատարակում ենք Վեհափառ Հայրապետի երկու
առաջամները, որոնք պիտի ընթերցվին ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի պատգամավո-
րական ժողովում և հոգևորականաց համագումարում:

Նորին Սուրբ Օծությունը առողջական պատճառներով չկարողացավ անձամբ ներկա
լինել այդ ժողովներին և արտաամենկ հայրապետական էր խոսքը:

Այժմ «Էջմիածին» ամսագրի սույն համարում հրատարակում ենք Հայոց Հայրապետի
բովանդակալից և հոգեշեն այդ երկու պատգամները:

ԽԱՐ.

Այսօր ալ, թեև փոխված են ժամանակները և աշխարհի պատկերը, փոխված են մեր ազգային կյանքի ներքին ու արտաքին պայմանները և հեռանկարները, բայց խորքին մեջ պատմության նույն վճիռն է կախված մեր ազգային երկնակամարին վրա, հատկապես սփյուռքի հայության կյանքին վրա, սփյուռք՝ որ կներկայացնե գրեթե կեսը մեր ամբողջ ազգության: Եվ աշխարհը որու մեջ կապրի հայ սփյուռքը, փոթորկահույզ է ու ալեկոծ, ինչպես անցյալի մեջ, այնպես ալ այսօր:

Մեր ազգի մեծագույն դեմքերեն մին, վերջին դարու Հայ Եկեղեցվո թագավաստակ հովվապետը Մաղաքիա Օրմանյան պատրիարք, իր կոթողակն գործերեն մեկուն՝ «Ծոհք և խօսք»-ի մեջ, իր ժամանակի Հայ Եկեղեցվո կյանքը կամանեցնե նավի մը՝ փոթորկված ծովի մը ալիքներում վրա, և կըսե՝ իմ ուժերես վեր էր փոթորիկը դադրեցնել, իմ միակ ըրածս այն եղավ որ մոլեգնած ալիքներու ընդմեջեն մեր Եկեղեցվո նավը այնպես առաջնորդել, որ ան չխորտակվի իր ժողովուրդին հետ մեկտեղ:

Այսօր ևս, սփյուռքի մեր Մայր Եկեղեցին ու ժողովուրդը կապրին փոթորկված աշխարհի մը ալիքներում վրա: Նույնիսկ մեր մայր երկիրը որ, փառք Աստուծո, հեռու է մամա փոթորկումներե իր արդի խաղաղ ու ապահով պայմաններում մեջ, սակայն չենք գիտեր ի՞նչ կըլլա անոր ճակատագիրը, եթե համաշխարհային նոր փոթորիկ մը սանձազերծվի: Ուղիղ և արդար կըլլա հետևաբար որ այսօր ալ մենք, իբրև Եկեղեցի և իբրև Հայ Եկեղեցվո պատասխանատու առաջնորդներ, ղեկավարվինք հոգեւոյս Օրմանյան պատրիարքի իրապաշտ, պայծառ, քաջակորով դատողությամբ:

Անցյալի դառն փորձությունը երբեք մտահան չընելով, մեր բոլոր առողջ ուժերը մեկտեղենք, այսօր մեր ունեցածը պահել պահպանելու համար անվճար, ամբողջ ու ապահով:

Հեռու մեզմե և սփյուռքի հայ կյանքի սահմաններեն ամեն տեսակ անխոհեմ ու անհավասարակշիռ ձգտումներ: Արտասահմանի հայ կյանքի մեջ երբեմն կդրսևորվին երևույթներ, որոնք կմղեն Մեզ հաստատելու թե կան տակավին հայ մարդիկ և նորաբույս խմբավորումներ, որոնք արդի ապրող ու շնչող իրական Հայաստանը մոռցած, Հայաստանի անունը կհոլովեն, անոր ճակատագիրը սակարկությանց առարկա դարձուցած միջազգային շուկաներու վրա:

Մեր այս մտահոգությունները բնական է չեն վերաբերիր ձեզի, չեն վերաբերիր ձեր թեմական-եկեղեցական կազմակերպություններում ու անոնց գործունեության:

Այնուամենայնիվ մղվեցանք ձեր առջև Մեր սիրտը բանալ, եզրակացնելու և ընդգծելու համար թե արտասահմանի հայ կյանքը, անհրաժեշտ, անհետաձգելի և իրագործելի մեկ նպատակ ունի, այն է՝ պահպանել իր ազգային ինքնությունը՝ իր քրիստոնեական հավատքով, իր մայրենի լեզվով ու մշակույթի արժեքներով, իր հայրենաբաղձ զգացումներով:

Սփյուռքի հայությունը ուրիշ հարց չունի որ այս ժամանակաշրջանին իրագործելի լլա: Եվ տխուր պիտի լլար եթե մեր ժողովուրդը ստուգապես անիրագործելի ծրագիրներում զոհեր այսօր իրագործելի կենսական իր առաքելությունը:

Այս կնշանակե՝ Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցի, հայ դպրություն և Սուրբ Էջմիածին: Ահա մեր օրերու հրամայականը և իրագործելին:

Դուք, իբրև թեմական-եկեղեցական կազմակերպություն, կոչված եք

այս առաքելության, օժանդակ ունենալով ձեր եկեղեցիներու կողքին գործող՝ կրթական, դաստիարակչական միությունները:

Այս առաքելության են կոչված, Մեր կարծիքով, նաև այլ հայկական մշակութային-քարեսիրական կազմակերպություններ, մանավանդ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը՝ ազգապահպան մեծագույն հայկական միությունը, հայ սփյուռքի տարածքի վրա:

Մենք կոչ կուղղենք ձեզի հետևաբար, հավատարիմ մնալ մեր բազմադարյան պատմության փորձով նվիրագործված հրամայականին, որ է՝ պահպանել հավատքը, լեզուն և մշակույթը մեր ազգին: Այս կնշանակե ավելի ու ավելի զորացնել մեր Մայր Եկեղեցին, ավելի ընդարձակել հայ վարժարաններու ցանցը, ավելի տարածել լույսը հայ մշակույթի արժեքներուն: Նոր սերունդները պետք է դաստիարակել այս ոգիով, ծրագրված ու նախատեսաբար աշխատանքով:

Հայ հավատացյալը որ երկրի մեջ ալ բնակի աշխարհի վրա, կրոնական իր պատկանելիությամբ հավատարիմ զավակն է միևնույն Հայ Առաքելական Եկեղեցիին, իսկ քաղաքական առումով հավատարիմ քաղաքացին է իր բնակած երկրի:

Այս պատվերները կու տանք ձեզի քաջ գիտնալով թե դուք կրոնա-մշակութային դաստիարակչական ձեր գործունեությունը լայնորեն ու անկաշկանդ կերպով կրնաք ծավալել այս երկրին մեջ, մնալով միաժամանակ հաղորդակից ամերիկյան մշակութային կյանքին, իբրև երկու մշակույթներու պատկանող քաղաքացիներ:

Իրավ հասկցված ու խոր ապրված մշակույթները զիրար չեն խանգարեր, ընդհակառակը, կրնան նույնիսկ զիրար հարստացնել: Մենք գիտենք թե այս տեսակետեն բարենպաստ պայմաններ ստեղծված են Միացյալ Նահանգներու մեջ, և կմնա որ դուք հետզհետե առավել արդյունավետությամբ կարողանաք օգտվիլ այդ պայմաններեն:

Եկեղեցին հայկական, Քրիստոսի Ավետարանի պլաներեն մին Արևելքի սահմաններու վրա, Եկեղեցին հայկական, ամենավավերական ու ամենահերոսական Եկեղեցիներեն մին, որ մեր օրերուն վերածնունդ կապրի, Եկեղեցին հայկական, հոգեկան մխիթարությունն ու հարստությունն է հայ ազգին:

Եկեղեցին հայկական, սիրելիներ, ձեր Եկեղեցին է, ձեր կյանքի լույսն է, ձեր հոգիներու փրկության լատեն է: Սիրեցեք զայն, զորացուցեք զայն, փառավորեցեք զայն:

Սուրբ գրական Արարատը վկա, Սուրբ Էջմիածնի հազարամյա քարերը վկա, վասն հավատոց և վասն հայրենյաց հերոսական մեր պատմությունը վկա, թե նաև մեր օրերու փոթորիկներու ընդմեջեն, ան պիտի շարունակե իր հաղթական հոգևոր երթը դեպի նոր հեռատուններ սրևոտ, ի փառս Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի և ի պարծանս հավատավոր ազգիս հայոց:

Արդ, հրավեր կկարդանք ձեզի բոլորիդ՝ բարեջան հոգևոր եղբայրներ Մեր, և հարգարժան պատգամավորներ, որ առավելալ եռանդով ու նվիրումով ձեր գործոնն ու շինարար մասնակցությունը ընծալաբերեք, ի ծաղկումն ու զորացումն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցւո և ի պանծացումն անոր նվիրական առաքելության:

«Քանզի ո՞վ է մեր յոյս կամ խնդության կամ պատկ պարծանաց մերոց, եթէ ոչ դուք ի Տէր՝ առաջի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի նորա գալուստեանն: Զի դուք էք փառք մեր և խնդության» (Ա. Թեա. Բ 19—20): Ամեն:

**ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ՝ ՌԻԶՂՎԱԾ ՄԻԱՑՅԱԼ
ՆԱՀԱՆԳԱՑ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ
(Մայիս 1980)**

«Զոգին մի շիջուցանեք» (Ա. Թեաղ. Ե 19):

Սիրելիք Մեր,

Մեծ առաքյալի լուսավոր պատգամներեն մին է այս որ իր այժմեությունը պահած է բոլոր ժամանակներուն և պիտի պահե միշտ, ինչքան մարդիկ ապրին աշխարհի վրա:

Հոգի: Ո՞ր մարդը արդոյք իր կյանքի ընթացքին, բախտորոշ պահերուն մանավանդ, ներքին սարսուտով հարց՝ չէ տված ինքն իրեն, թե ի՞նչ է հոգին, զոր կզգա իր մարմնին մեջ, իր էության մեջ, ուրկե՞ կու գա ան և ո՞ւր կերթա:

Մեր օրերու գիտությունը որ զմայլանքի արժանի նվաճումներ կատարած է նյութական աշխարհը և տիեզերքը ճանչնալու ճանապարհին, կբավարարի հոգեկան երևույթները, այսինքն հոգիի դրսևորումները ուսումնասիրելով միայն:

Նյութական աշխարհի և հոգեկան աշխարհի միջև սահմանները այնուամենայնիվ գիտության համար ալ կմնան անհայտ, թեև հոգեկանը կդրսևորվի մարմնական միջոցալ:

Հոգին, հոգեկանը կմնա ուրույն աշխարհ մը, իր ուրույն օրենքներով, իր ուրույն օրինաչափություններով, նույնիսկ երբեմն հակադիր նյութական բնության օրինաչափությանց: Այսպես, օրինակ, նյութական բնության բնորոշ է նյութի պահպանման տիեզերական օրենքը, ըստ որո՞ւ բնության մեջ ոչինչ չի պակսիր և ոչինչ չավելանա: Մինչդեռ հոգեկան աշխարհի համար բնորոշ է՝ հարատև աճը ուժականության:

Այս հարցերու մասին կարելի է երկար խոսիլ, սակայն Մեր նպատակը այդ չըլլալով, կանգ կառնենք մեր կրոնական ըմբռնումին վրա, հավատալով թե և՛ նյութականի, և՛ հոգեկանի աղբյուրը, տիեզերքի արարիչ Աստված է:

Մենք կհավատանք թե ինչպես Աստված ստեղծեց նյութական տիեզերքը և կենդանի աշխարհը մեր երկրագունդի վրա, այնպես ալ իր արարչագործ շունչով հոգիի լույսը ցաթեցուց մարդու մարմնին մեջ:

Հիշենք Պողոս առաքյալի վկայությունը՝ «Ո՛չ գիտեք եթե տաճար էք Աստուծոյ և Հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ» (Ա. Կորնթ. Գ 16):

Մարդը աստվածային արարչագործության գագաթնակետն է իր հոգիով: Եվ գուցե ճշմարիտ կըլլար ավելցնել թե մարդը իր հոգիով լրումն իսկ է և նպատակը աստվածային տիեզերական արարչագործության:

Որովհետև Աստված, իր գերագույն շնորհը, այսինքն հոգիին լույսը մարդուն միայն պարգևեց:

Հոգին կամ հոգեկանը սկզբնական այն ճառագայթումն է, զոր մարդը իր ծնունդով խորհրդավոր կերպով կատանա իր էության մեջ, իր սաղմնավորման իսկ ընթացքին և ապա կաճի, կզարգանա, կքյուրեղանա և կարտացոլվի հիաքանչ ձևերու և դրսևորումներու մեջ, որով այս նյութական տիեզերքի մեջ գոյության կկոչվի նոր տիեզերք մը, ոգեկան տիեզերքը մարդկային:

Հոգին Աստուծմե մարդուն պարգևված շնորհ մըն է, այո՛, սակայն պետք է հաստատենք նաև թե հոգվո աստվածայինը սկզբնական ճառագայթում

մըն է, որ մարդու էության մեջ կյանքովի, կշաղախվի, մարդկային կյանքի ազատ պայմանին մեջ, մարդկային անհատական կյանքին ու պատմության ընթացքին:

Աստված հոգեկանի ճառագայթը շնորհել է հետո, մարդուն ազատություն տված է զայն աճեցնելու, բյուրեղացնելու և ստեղծագործորեն շողարձակելու, անսահմանորեն բազմազան ձևերու մեջ, լույսի անսպառ հեղեղ դարձնելով զայն:

Մենք կխորհինք թե ուղիղ է եզրակացնել, որ մարդկային հոգին, հոգեկանը, թե՛ անհատական և թե՛ հավաքական իմաստով, միատեղ աճում է և համադրումը աստվածայինի և մարդկայինի:

Այսպես է որ ամեն մարդ անհատ իր հոգեկան աշխարհով ուրույն, ինքնատիպ և ազատ աշխարհ մըն է անկրկնելի: Չկա մարդկային հոգի ընդհանրապես, այդ վերացական գաղափար մըն է լոկ. կան մարդիկ, մարդկային հոգիներ, անհատ մարդոց և մարդոց հավաքական հոգեկան աշխարհներ:

Կան, այո՛, նաև մարդկային հավաքականություններու բնորոշ հոգեկան երևույթներ, հոգեկան դրսևորումներ: Այն հավաքականությունը որ առավելապես կբնորոշե ինքնություն, տևական և ստեղծագործ հոգեկան վիճակ պատմության ընթացքին, այդ ազգային հավաքականությունն է:

Ազգային իմաստով հոգեկանը, կամ ազգային հավաքականության հոգին, արդյունք է տվյալ ժողովուրդի զավակներու հոգիներուն համակեցության և համագործակցության, տվյալ հողամասի մը վրա, տվյալ պայմաններու մեջ պատմության ընթացքին:

Դարերու հողովույթով է որ ծնունդ կառնե ժողովուրդի մը հոգեկան աշխարհը, այսինքն գանձարանը տվյալ ժողովուրդի հոգեկան ստեղծագործություններու, հոգեկան արժեքներու:

Աստուծո Սուրբ Հոգվո ճառագայթը սկզբնաղբյուր դառնալով հանդերձ բոլոր ազգերու համար հավասարապես, տարբեր ազգերու հոգեկան նկարագիրները կտարբերին, կգանազանվին իրարմե՝ աստվածայինը ընկալելու, զայն ստեղծագործորեն ապրելու և դրսևորելու ձևերուն մեջ, իրենց կարողություններուն և կյանքի պայմաններուն համաձայն:

Հայ ժողովուրդը անկասկած այն ժողովուրդներեն է որ առաքելական դարուն իսկ բացավ իր հոգին Քրիստոսի Ավետարանի լույսին և չորրորդ դարու լուսաբացին այդ լույսը դարձուց փարոսը իր կյանքին և սնունդը իր հոգիին:

Ինչ որ էապես նշանակալից է հայոց համար, այն հոգեբանական ու պատմականորեն կենսագործված երևույթն է, որ ինչպես Եղիշե պատմիչ ալ կվկայե՝ հայերը քրիստոնեական հավատքը զգեցած են ոչ իբրև զգեստ, արտաքին տարագ, այլ իբրև իրենց մարմնի գույնը որ այլևս չի փոխվիր մինչև աշխարհի վերջը:

Հայ ժողովուրդը Քրիստոսի լույսը իր մեջ կրեց և իր կյանքի ու պատմության ընթացքին արգասավորեց ստեղծագործորեն, այսինքն ստեղծեց քրիստոնյա ըլլալու և ապրելու իր ուրույն կերպը, հայկական ոճը, վավերականորեն:

Եկեղեցին, իբրև աստվածային նախախնամության գործ, անշուշտ մեկ է և տիեզերական, սակայն այդ աստվածային տնօրինության իրագործումը երկրի վրա զգեցած է և կզգենու արտաքին տարբեր տարազներ, համաձայն ժողովուրդներու հոգեկան դիմագծության և Աստուծո խոսքը ընկալելու և

ապրելու կերպին, և համաձայն պատմական իրադարձությանց ու ավանդություններուն, որոնց մեջ ծնած ու աճած են Եկեղեցիները:

Մեր Եկեղեցվո ծագման, կազմավորման ու զարգացման պատմության ու ավանդություններուն, մեր ժողովուրդին հատուկ կրոնական ապրումներուն դրսևորման ձևերուն մեջ, մենք կգտնենք մեր ազգային Եկեղեցիին քրիստոնեական հարազատությունը և վավերականությունը:

Հայ ազգը աշխարհի ամենավավերական քրիստոնյա ազգերեն մին է, իր առաքելական ծագումով, իր ուղղափառ դավանաբանական կեցվածքով, իր պատմության վկայություններով, իր հոգևոր գրականությամբ ու մշակույթով, իր բարոյական նկարագիրով, իր ինքնատիպ ծեսերով ու իր ինքնագլուխ անկախ նվիրապետական կառույցով, իբրև գլուխ ունենալով ընդհանրական հայրապետական Աթոռը ի Սուրբ Էջմիածին Դ դարեն սկսյալ:

Արդար հպարտանքով կարող ենք վկայակոչել՝

ա. Հայ տառերու գյուտը, Աստվածաշունչի հայերեն թարգմանությունը և սկզբնավորումը հայ գրականության, կատարելության բարձունքին հասնող ազգային լեզվով:

բ. Վարդանանց հերոսամարտը «Վասն Յիսուսի և վասն հայրենեաց»:

գ. Հայ եկեղեցական դասական ճարտարապետությունը, քանդակագործությունը, երաժշտությունն ու մանրանկարչությունը:

դ. Սուրբ Գրիգոր Նարեկացին և Ս. Ներսես Ծնողհային: Միջնադարյան համայն քրիստոնեության հորիզոնի վրա չկա հոգևոր կրոնական վավերական ներշնչանքի ստեղծագործություն որ հավասարի «Մատենան ողբերգութեան» գործին:

Այսօր սփյուռքի տարածքի վրա, երբ մեր Եկեղեցին և մեր ժողովուրդը կապրին բնականորեն՝ մշակութային, ընկերային, քաղաքական տարբեր պայմաններու և տարբեր ազդեցություններու ներքև, հայեցիորեն ապրելու և գործելու միակ հիմքը, միակ ճանապարհը ոգեկան իմաստով, կհանդիսանա Հայ Առաքելական Եկեղեցին, այսինքն քրիստոնեական հավատքը դավանելու և ապրելու հայկական ազգային կերպը, որ կարտահայտվի՝ յուրահատուկ նվիրականացած ավանդություններով, հոգևոր-մշակութային բազմադարյան ժառանգությամբ, Եկեղեցի և ազգություն գաղափարներու միաձուլմամբ, հոգեպես ազգովին անկախ ապրելու կամեցողությամբ:

«Աստուծո ժողովուրդ» հասկացությունը որ վերջին տասնամյակներուն շատ կօգտագործվի Էկումենիկ ըմբռնումով, անշուշտ իր արդար իմաստը ունի կրոնա-աստվածաբանական տեսակետե, ընդգծելու համար քրիստոնեական հավատքի համամարդկային հանգամանքը, ինչ որ ուղիղ է և այժմեական անհրաժեշտություն Եկեղեցիներու սիրո միության և համագործակցության լույսին տակ:

«Աստուծո ժողովուրդ» հասկացությունը կմնա իդեալական հասկացություն, քրիստոնեության ընդհանրությունը և տիեզերական եղբայրությունը բնորոշող, սակայն այդ իրողությունը չի հակասեր ազգային Եկեղեցիներու ուրույն հատկանիշներով բնորոշված՝ ապրող ու գործող եկեղեցական հավաքականություններու գոյության, ինչպիսին է պարագան Հայ Առաքելական Եկեղեցվույն:

Այնպես ինչպես բոլոր մարդիկ Աստուծո որդիներ են, սակայն կպատկանին տարբեր ժողովուրդներու ընտանիքներուն, այնպես ալ կրոնական-եկեղեցական մակարդակի վրա, Աստուծո ժողովուրդ են բոլոր քրիստոնյաները, սակայն միաժամանակ կպատկանին տարբեր Եկեղեցիներու, տար-

քեր եկեղեցական ազգային համայնքներու, տարբեր պատմական ավանդություններու:

Որով՝ Եկեղեցիներու միությունը Մենք կըղծանք իրականացած տեսնել, հավատալով թե Քրիստոսով և Ս. Ավետարանով մեկ է Եկեղեցին, և թե պատմական ազգային Եկեղեցիներու գոյությունը, այնպես ինչպես անոնք կան այսօր, չի հակասեր և չի ժխտեր Քրիստոսով մեկությունը ընդհանրական Եկեղեցիին:

Մեր օրերուն Եկեղեցիներու միության գաղափարը և առաջադրանքը պետք է բանաձևել միություն մը Քրիստոսի սիրուն մեջ, եղբայրական հարաբերության մշակումով և սերտ գործակցությամբ, փոխադարձ հանդուրժողությամբ, հարգանքի և հավասարության պայմաններու մեջ, ամեն Եկեղեցի պահելով իր դավանաբանական մտածելակերպը, իր ավանդություններն ու իր ինքնագլուխ անկախ ղեկավարությունը:

«Քոյր պատմական Եկեղեցիներու իմացության, ներշնչումի և ապրումի բյուրեղացած այդ արտահայտությունները կկազմեն այն համաքրիստոնեական, տիեզերական գանձարանը, որ իր ամբողջությամբ միայն, իր այլազանությամբ ու բազմերանգությամբ, նույնիսկ երբեմն իր հակասություններով, կարտացոլե լիությամբ տիեզերքը Աստուծո խոսքին և կճառագայթե փառքը Քրիստոսին, մտածումի տարբեր ձևերով, զգացումի տարբեր երազներով, տարբեր լեզուներով, տարբեր դաշնավորումներով:

...Պետք է սրբությամբ պահել, պահպանել զանոնք ամբողջ, անխառն ու անայլալ: Պետք չէ աղքատացնել, պետք չէ տկարացնել, պետք չէ գունազերծել Քրիստոսի Եկեղեցին» (Մեր կոնդակը՝ թիվ 530—հունիս 4, 1965):


Ինչքան իրավացի է խոսքը երջանկահիշատակ Ս. Ս. Սիմեոն Երևանցի կաթողիկոսին՝ «Հաւատքն մեր ոչ է հնացեալ զի նորոգեսցի, և ոչ է թերի զի լրացի»:

Այս խոհերով և հաստատումներով Մենք, Հայրապետ Հայոց, կդիմենք ձեզի, սիրեցյալ սպասավորներ Հայ Առաքելական Եկեղեցվո որ հիմնադրվա, և կոչ կուղղենք ձեզի ամենուր՝ «զհոգի մի շիջուցանեք», մի տկարանաք և մի տկարացնեք հայ հոգիին հավատքի լույսը ձեր եկեղեցիներեն ներս, ձեր խնամքին հանձնված հավատացյալներու գիտակցության մեջ:

Չտկարացնել, վառ պահել հայ հոգիին հավատքի լույսը՝ կնշանակե վառ պահել մեր ազգին մեջ լույսը Քրիստոսի Ավետարանին, լույսը հայ ոգեկանության, հայ լեզվին, լույսը Փրկչի Իջման Սուրբ Սեղանին, ուր Աստված խոսեցավ մեր աշխարհին ու ազգին, Սուրբն Գրիգորի տեսիլքով:

Հայոց հոգին շաղախված է Աստուծո հոգիի լույսով: Շիջուցանել հայ հոգին՝ այդ պիտի նշանակե շիջուցանել ճառագայթը աստվածային հոգիին:

Արդ, սիրելիներ Մեր, ուխտապահ սպասավորներ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո, «Յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք լելս գնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատոցն» (Եբր. ԺԳ 7): Եվ «Աստուած յուսոյ լի արարցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելով ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13): Ամեն:



ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ՝ ՈՒՂՂՎԱԾ
ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ
ԹԵՄԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՎԱԶԵ ԱՐՔԵՊ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ,
ԱՌԱՋՆՈՐԴ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ

Հոսկիվուդ-Կալիֆորնիա

Մեզի համար հոգեկան անհուն մխիթարություն է Ձեր թեմական տա-
րեկան համագումարին առաքել Մեր հայրական ողջույնը և գնահատանքը
Ձեր բարեջան հոգևորականաց թեմական պատվարժան խորհուրդի և ազ-
նըվաշուք եկեղեցասեր տիկնանց բեղուն գործնեության համար անցնող տա-
րեջրջանին:

Սուրբ Էջմիածնեն, Մեր սրտեն օրհնություն Ձեզի բոլորիդ, աշխատան-
քի անսպառ եռանդ՝ շարունակելու Ձեր աստվածահաճո առաքելությունը ի
շինություն մեր ժողովուրդի հոգևոր կյանքի Ձեր քրիստոսասեր ամերիկյան
իստավոր երկրի արևի տակ:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի
Մէնջ». ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Ա. Էջմիածին,
21 ապրիլ 1980 թ.



ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ
ԵՐԵՎԱՆԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ
(11 մայիսի 1980 թ.)

«Յանուն Հօր և Որդույ և Հոգույն Սրբոյ, ամէն»:

«Փառք Քեզ Աստուած, փառք Քեզ, յաղագս ամենայնի փառք Քեզ Տէր»:
Սիրելի հավատացյալներ, այս մաղթանքը, գրեթե, մեր ամենօրյա մաղթանքներից մեկն է:

Մեր կյանքում, մեր այս եղկրային կյանքում բազում անգամներ հանդիպում ենք դժվարությունների, երբեմն զրկանքների կամ անհաջողությունների, երբեմն նույնիսկ դժբախտությունների, մեր ընտանեկան հարկերի տակ, մեր ընկերային շրջանակում, մեր հայրենական կյանքում: Ահա թե ինչու, երբ մենք խաղաղ ու հանգիստ օրեր ենք ապրում, հոգեպես մխիթարված և բարօր կացության մեջ, մեր սրտից բխում է այս աղոթքը առ Աստված: Ահա այսպիսի մի օր է այսօր մեզ համար, և կարծում ենք նաև ձեզ բոլորիդ համար, որովհետև խաղաղ և մխիթարված սրտերով հավաքվել եք այստեղ աղոթելու և լսելու կաթողիկոսի խոսքը:

Մենք գալիս ենք Սուրբ Էջմիածնից՝ բերելու Աստուծո օրհնությունը ձեզի բոլորիդ, բերելու Մեր սերը և ողջույնը հայրական և բարի մաղթանքները, որ Աստված բոլորդ պահե, պահպանե քաջառողջ, հեռու ամեն տեսակ փորձություններից, երջանիկ ձեր ընտանեկան հարկերի ներքև և հաջողություններով ձեր աշխատանքի վայրերում:

Գալիս ենք Սուրբ Էջմիածնից՝ բերելու Մեր սիրո ողջույնը, գնահատանքի խոսքը Արարատյան թեմի Մեր փոխանորդ Տ. Կոմիտաս արքեպիսկոպոսին, նրա օգնական հայր սուրբին, քահանայից դասուն, վարչական անդամներին, պաշտոնյաներին, երգչախումբին և բոլոր նրանց, ովքեր սրբազան հոր կողքին կանգնած աշխատում են իրենց լավագույնը անել, որպեսզի Արարատյան թեմի եկեղեցիները հետզհետե բարեկարգ վիճակի մեջ մտնեն:

Այս առթիվ Մենք չենք կարող մոռանալ նաև Մեր երախտագիտությունը հայտնել մեր քաղաքային և պետական իշխանություններին, որոնք Սուրբ Սարգիս եկեղեցու վերանորոգման տարիներին և ընդհանրապես մեր շինարարական ծրագրերի ճանապարհի վրա, բացառիկ բարյացակամությամբ, հոգատարությամբ օժանդակում են մեզ:

Սիրելի ժողովուրդ, Մեր խոսքի սկզբին փառք տալով Աստծուն ասում էինք, թե ինչքան հոգեպես մխիթարված ենք ու երջանիկ, որ մենք հավաքվել ենք այստեղ, մեր մայր քաղաք Երևանի սրտի վրա, խաղաղ, ապահով պայմաններում՝ մեր հոգևոր կյանքը ապրելու համար: Այս իրողությունը Մենք ուզում ենք հաստատել այս պահին և հիշեցնել ձեզ, որ մեր օրերի Հայաստանի խաղաղ ու ապահով կյանքը, հառաջադեմ ու ծաղկուն կյանքը,



ՎԵՀԱՓԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՔԱՐՈՋԵԼԻՍ

մենք պարտական ենք այն մեծ հաղթանակին, այն աշխարհաստան հաղթանակին, որի ոգեկոչումը կատարվեց ամբողջ սովետական աշխարհում ու նաև արտասահմանում, երկու օրեր առաջ՝ մայիսի 9-ին:


Մի հաղթանակ, որ կապված է անհաշիվ տառապանքների և զոհաբերումներին հետ: Դուք գիտեք, որ Սովետական ամբողջ Միությունը, բոլոր ժողովուրդները, Հայրենական այդ մեծ պատերազմում տվեցին շուրջ քսան միլիոն զոհեր, որի մեջ փոքր չէր թիվը նաև հայոց զոհերի՝ մեր ժողովրդի թվի համեմատությամբ: Հայերն էլ քաջաբար կռվեցին և պատվով դուրս եկան այդ մեծ մարտից և իրենց բաժինը բերեցին մեծ հաղթանակին: Մի հաղթանակ, որով ջախջախվեցին յոթ գլուխները հիտլերյան հրեշի: Ահա այսպես փրկվեցինք նաև մենք՝ Հայաստանում:

Անշուշտ ձեզանից բոլոր նրանք, ովքեր այդ օրերին Հայաստանում էին գտնվում, հատկապես 1948 թվին, գիտեն որ գերմանական բանակները ահռելի ուժեր կուտակած հառաջանում էին դեպի Վոլգայի ափերը, ուր տեղի ունեցավ աշխարհի պատմության ամենամեծ ճակատամարտը, վասն հայրենիքի ազատության, փրկության, երբ ռուսական զորքերը հրաշքի համագործակցությամբ ի հայտ բերեցին և փառավոր հաղթանակով պսակվեցին: Բայց մինչ այդ հաղթանակը, այդ օրերին մեր Մայր Հայաստանի արևմտյան կողմը, Արաքսի ափերին, կուտակված էր թուրքական հզոր մի բանակ՝ զինված գերմանական զենքերով, որոնք սպասում էին այն պահին, որ Վոլգայի ափերին ռուսները պարտվեն և անմիջապես իրենք հարձակվեն Հայաստանի վրա և Հայաստանի վրաշով: Այդ դեպքում Արևմտյան Հայաստանի մեծ եղեռնը պիտի կրկնվեր նաև Արևելյան Հայաստանում և պիտի բնաջնջվեր մեր ժողովուրդը նաև այստեղ: Մոխիրի պիտի վերածվեին Երևանն ու Էջմիածինը և ամբողջ Հայաստանը:

Ահա թե ինչու, սիրելի ժողովուրդ, հայրենական մեծ հաղթանակը ոգեկոչելիս, մենք պարտք ենք համարում այստեղ մեր աղոթքը բարձրացնել դեպի երկինք ու մի անգամ ևս բացականչել. «Փառք Քեզ Աստուած, փառք Քեզ, յաղագս ամենայնի փառք Քեզ Տէր», և Մենք, իբրև Հայ Եկեղեցու առաջին պաշտոնյա և համայն Հայաստանյայց Եկեղեցին ամուր կանգնած մեր ժողովրդի կողքին, մեր հայրենիքի գերագույն շահերի պատվանդանի վրա, մաղթում ենք և աղոթում, որ Տէրը աշխարհի խաղաղությունը պահպանի ամուր և անսասան, որ ոչ մի տեղ այլևս չկրկնվեն եղեռներ և ցեղասպանություններ, որ միջազգային հարցերը, վիճելի հարցերը կարգավորվեն խաղաղ ճանապարհներով, բանակցություններով, փոխադարձ հասկացողությամբ և մարդկությունը այս արևի տակ շարունակի իր խաղաղ և շինարար կյանքը, հերջանկություն բոլոր ժողովուրդներին: Հերջանկություն նաև մեր փոքրիկ ազգին, որ ահա քանի անգամներ մահվան անդունդից փրկված, այսօր ապրում է, աճում և զարգանում և մեր հայրենիքը հետըգհետե բարգավաճում և ծաղկում է հաղթական երթով:

Թող Աստված, Հարցն մերոց մնա միշտ պահապան և օգնական մեր ազգին, մեր ժողովրդին և զորացնի մեր զավակների բազուկի ուժը, մտքի լույսը և նա նաև հետ այսու եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում հառաջավոր դիրքերի վրա հետզհետե իրականացնի իր արդար երազանքները:

«Ծնորհք և խաղաղութիւն Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, այժմ և միշտ, ամէն»:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ
ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԱՎԱԳ
ՎԱՐԴԱՊԵՏ ԱՍՏՏՈՒՐՅԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԳԵԾՆՈՐՀ Տ. ԱՒԱԳ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՍՏՏՈՒՐԵԱՆԻՆ,
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ԻՐԱՔԻ, ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ
ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱՇՆԻ ՈՂՋՈ՞ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Պատասխան

Աստուծոյ ողորմութեամբ մեր առաքելական Մայր Եկեղեցին նաեւ մեր օրերուն նուիրում է հայ հաւատացեալ ժողովուրդի հոգեւոր ու բարոյական դաստիարակութեան գործին, միշտ հաւատարիմ Քրիստոսի Սուրբ Աւետարանին ու մեր ազգային լոյս աւանդներուն:

Մենք յոյժ մխիթարուած ենք՝որ նաեւ ձեր բարեխնամ երկրին մեջ, շեն ու լալայծառ են ձեր եկեղեցիները ի հոգեւոր շինութիւն Մեր հաւատացեալ զաւակներու, որոնք խաղաղ ու բարօր կ'ապրին Իրաքեան պետութեան ապահով ու հոգատար հովանիին ներքեւ:

Մեր այս գիրով կուգանք Ձեզի Մեր ուրախութիւնը յայտնել Ձեր ընտրութեան առթիւ որպէս առաջնորդ Իրաքի հայոց թեմին, զոր Մենք կը հաստատենք Մեր հայրապետական օրհնութեամբ:

Մեր ուրախութիւնը կրկնակի է այսօր, որովհետեւ այս օրերս տեղեկացանք թէ ձեր երկրի բարձր իշխանութիւնները եւս վաւերացուցած են Ձեր ընտրութիւնը, միշտ նոյն ուշադիր եւ հոգատար ոգիով դէպի Հայ Եկեղեցին եւ հայ հաւատացեալները:

Մենք վստահ ենք թէ Դուք եւ թեմական ու եկեղեցական վարչական մարմիններդ, ինչպէս եւ իրաքաբնակ համայն հայ հաւատացեալները, բար-

ծրր կը գնահատէք ձեր հարազատ պետութեան այս քարեացականութիւնը եւ կը շարունակէք մնալ շինարար ու հաւատարիմ քաղաքացիները իրաքեան մեծ հայրենիքին:

Ձեզի, սիրելի Հայր Սուրբ, կը մաղթենք մշտատեւ եռանդ ու Սուրբ Հոգւոյ ներշնչանքներ, որպէսզի հետզհետէ առաւել արդիւնաւետութեամբ ղեկավարէք Տիրախնամ թեմիդ եկեղեցիները, ձեռք-ձեռքի տուած թեմական եկեղեցական ազգային մարմիններուն հետ:

Ձեզի եւ Ձեր գործակիցներուն եւ ձեր ժողովուրդին Մեր հայրական սէրը, Մեր հայրապետական գնահատանքը եւ օրհնութիւնը:

«Այսուհետեւ եղբարք, ողջ լերուք, հաստատուն կացէ՛ք՝ մխիթարեցարուք՝ միաբան լերուք՝ խաղաղութիւն արարէք. եւ Աստուած խաղաղութեան եւ սիրոյ եղիցի ընդ ձեզ» (Բ Կորնթ. ԺԳ 11—12). Ամէն:

Վահագն Սեփակ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի 12 մայիսի
1980 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻԹ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 1016

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ
ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ՍԵՆԹ ԳԵԹՐԻՆՋԻ Ս. ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԻՍՆԱՄՅԱԿԻ
ԱՌԻԹՈՎ

ԳԱՆԱՏԱՅԻ ՍԵՆԹ ԳԵԹՐԻՆՋԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ԵԿԵՂԵՑՈՒՅ ՀՈԳԵԻՈՐ ՀՈՎԻԻՆ,

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՅԱՐԳԱՐԺԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ԵՒ
ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՈՂՋՈ՞ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ
ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Սէնթ Գեթրինգ

Ողորմութեամբն Աստուծոյ ամենակալին, լրացան ահա յիսուն տարիները Ս. Գրիգոր Լուսաւորիչ ձեր եկեղեցւոյ կառուցման եւ օծման, որ հանդիսացաւ առաջին կազմակերպուած համայնքը Գանատայի մէջ եւ որ աւելի քան յիսուն տարիներ ծաւալեց հոգեշէն գնահատելի գործունէութիւն հոգալով հաւատացեալ ժողովուրդի կրօնական, քարոյական եւ մշակութային կարիքները:

Յոբելեան մըն է այս, որ կը հանդիսանայ Մեր հաւատացեալ զաւակներու հոգեւոր յաղթանակը Գանատայի հիւրընկալ քրիստոսաւեր ժողովուրդի ծոցին մէջ: Յոբելեան մը որ ճշմարիտ աւետիս մըն է նաեւ համայն յեր եկեղեցիին եւ յատկապէս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար:

Այս երջանիկ առիթով անհունօրէն մխիթարուած, եւ ընդառաջելով թե-

միտ բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանի խնդրանքին, ձեզի ամենուր կը բերենք Մեր հայրապետական օրհնութիւնը եւ ջերմագին մաղթանքները, որ Տէրը միշտ անասան ու լուսաւատ պահէ ձեր աղօթքի Տաճարը, որպէսզի անոր Սուրբ Սեղանէն միշտ երկնային շնորհները առատապէս բաշխուին ձեզի ամենուր, ձեր զաւակներուն եւ գալիք սերունդներուն, ի փառս Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ:

«Ձխաղաղութեան զինտ երթալք ընդ ամենեսին եւ զսրբութեան, առանց որոյ ոչ որ տեսանիցէ զՏէր» (Եբր. ԺԲ 14): Ամէն:

Գալստի

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տոա կոնդակս ի 16 մայիսի
1980 փրկական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻԹ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 1018

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ
ԱՄՆ-Ի ՆՅՈՒ ՊՐԻԹԸՆ ԳԸՆԵԹԻՔԵԹԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԻՆ,
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐԵԻԵԼԵԱՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ,
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈՐՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՐԱՊԵՏԱԿԱՆ

Նիւ Եորք

Բարին Աստուած, դարեր շարունակ իր սուրբ հովանիին ներքե կը պահէ մեր առաքելական Սուրբ Եկեղեցին, իբրեւ Մայր եւ իբրեւ դաստիարակ, որ տեսալէս իր հաւատացեալ զաւակներուն կը բաշխէ հոգեկան մխիթարութիւն եւ Սուրբ Հոգւոյ շնորհներ առատապէս:

Մենք երջանիկ ենք որ ձեր տիրախնամ թեմին մէջ գործող բոլոր եկեղեցական համայնքները լծուած են այդ նուիրական հոգևոր առաքելութեան, Ձեր բարեջան առաջնորդութեան ներքե:

Ձեր 10 ապրիլ 1980 թուակիր նամակը Մեր սիրտը շատ ուրախացուց, երբ տեղեկացանք թէ Նիւ Պրիթըն Գընէթիքէթի Ս. Յարութիւն եկեղեցւոյ համայնքը ձեռնարկած է նոր եկեղեցւոյ շինութեան, որու օծումը տեղի պիտի ունենայ յուլիս 13-ին:

Սոյն Մեր կոնդակով ջերմ սիրով կ'ողջունենք Նիւ Պրիթըն Գընէթիքէթի Ս. Յարութիւն եկեղեցւոյ տօնախմբումը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն կը յղենք Մեր օրհնութիւնները եւ ամենաբարի մաղթանքները Ձերոյ Սրբազնութեան, եկեղեցւոյ հոգեւոր հովիին, ծխական խորհուրդին ու համայն հաւատացեալ ժողովուրդին:

Փրկչի Իջման Սուրբ Վեմին առջև կը մնանք աղօթող որ Աստուած անասան ու միշտ լուսաշող պահպանէ Ս. Յարութիւն եկեղեցին և անոր Սուրբ Սեղանէն բաշխէ բոլորին սէրն ու խաղաղութիւնը եւ շնորհները կենարար Իր Միածին Որդոյն Յիսուսի Քրիստոսի:

Արդ. «Մատիցում ճշմարիտ սրտիւք լրութեամբ հաւատոց, լուսեալ զսիրտս ի խղճէ չարեաց եւ մկրտեալ զմարմին ի ջուրն սրբութեան: Պինդ կալցուք զխոստովանութիւն անշարժ լուսոյն, զի հաւատարիմ է որ խոստացան: Եւ զգուշացուք միմեանց յորդորմամբք սիրոյ և գործոց բարեաց» (Եբր. Ժ 22—24): Ամէն:

Կապույտ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի 18 մայիսի
1980 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻԹ,
ի մայրավանս Արրոյ Էջմիածնի
ՀՄՐ. 1019

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ
ԲԵՅՐՈՒԹԱԲՆԱԿ ՊՐՈՖԵՍՈՐ ԲԱՐՈՒՆԱԿ ԹՈՎՄԱՍԵԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» Ա ԿԱՐԳԻ ԾՔԱՆԾԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԵԾԱՅԱՐԳ ՊՐՈՖ. ԲԱՐՈՒՆԱԿ ԹՈՎՄԱՍԵԱՆԻՆ, ՀԱՐԱՋԱՏ
ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՐՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՐՅՆ
ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ՊԵՐՈՒՅ

Հայ ժողովուրդի պատմական գոյատեւման ու զարգացման համար այս բախտորոշ ժամանակաշրջանին, յոյժ մխիթարական է հաստատել թէ մեք հայոց սփիւթի տարածքի վրայ կան ու կը գործեն ազգային դէմքեր, որոնք կը տքնին ու կը պայքարին, ի խնդիր մեր պանդուխտ ժողովուրդի պահպանման, իբրեւ անբաժան ու հարազատ մասը մեր մայր երկրի հայութեան:

Դուք, յարգարժան Տիար, այդ ընտրեալ դէմքերէն մին կը հանդիսանաք իբրեւ ազգային հասարակական ղեկավար գործիչ, որ յստակ և ուղիղ կը տեսնէք հայ ժողովուրդի ներկան ու անոր ապագային հետ կապուած կենսական խնդիրները, պայծառ գիտակցութեամբը մեր վերածնած Հայաստանի գերագոյն շահերուն:

Այո՛, յստակ է Ձեր կողմնորոշումը, եւ ուղիղ է Ձեր գործունէութեան ճանապարհը, վասնզի մեր օրերու հայկական պետութիւնը միակ իրական պատուանդանն է հայ ժողովուրդի անվտանգ գոյատեւման եւ միակ իրական գրաւականը հայոց ազգային արդար իղձերու իրականացման:

Եւ ահա աւելի քան չորս տասնամեակներէ ի վեր միշտ մոյն պայծառատեսութեամբ, միշտ մոյն մտածումի հաւասարակշռութեամբ և անմուս-

զեյի եռանդով նուիրում էք հայրենաշէն Ձեր առաքելութեան, հաստատարիմ մեր փոթորկալոյզ պատմութեան պատգամներուն:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն Մենք կ'օրհնենք Ձեր կեանքն ու վաստակը եւ իբրեւ հայրապետական գնահատանքի արտայայտութիւն Ձեզի կը շնորհենք «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ» Ա. կարգի շքանշանը, աղօթքով սրտաբուխ որ զայն կրէք Ձեր ազնիւ կուրծքին վրայ երկար, շատ տարիներ քաջատոհմութեամբ եւ ընտանեկան երջանկութեամբ:


«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգով եւ յաւէտ օրհնեալ ի Տեառնէ եւ ի մէնջ». ամէն:

Գևորգ Դե Ռ.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 14 մայիսի
1980 փրկչական ամի,
եւ ի տումարիս հալոց ՌՆԻԹ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 1017





ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Վեհափառ Հայրապետի 1972 թվականի սեպտեմբեր 3 թվակիր կանոնական կոմիտեի մայիսի 22-ը հայտարարվել է «Յիշատակ աշխարհագորաց և զորավարացն հայոց, որք կատարեցան ի հերոսամարտի 1918 ամի, վասն հաւատոյ և հայրենեաց:

Կատարի հոգեհանգիստ յեկեղեցիս Հայաստանեայց»:

Սարդարապատի ճակատամարտի վաթսուներկուերորդ տարեդարձի ոգեկոչումը այս տարի համընկավ Հոգեգալստյան տոնի կատարման հետ, կիրակի, մայիսի 25-ին:

Այս առթիվ Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Տ. Գրիգորիս վարդապետ Բունիաթյանը:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես և եկեղեցական թափոքով առաջնորդվում է Մայր տաճար՝ ներկա լինելու օրվա եկեղեցական հանդիսություններին:

Մայր տաճարը լիքն է աղոթավոր հավատացյալների բազմությամբ:

Ս. պատարագը վեհությամբ շարունակվում է մինչև «Հայր մեր»: Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Ավագ սեղան՝ քարոզելու Հոգեգալստյան տոնի հոգևոր նշանակության մասին, առաջին քրիստոնեական եկեղեցու կազմակերպման տոնին, ապա ոգեկոչելու հիշատակը Սարդարապատի հերոսամարտի, որը մղվեց Ավարայրի նշանաբանով՝ «վասն հաւատոյ և վասն հայրենեաց»:



Զորավար Պողոս Փիրուսյան

1918 թվականի մայիսի 22—26 օրերին հայ ժողովուրդը «մի մարդու նման ոտքի կանգնեց և արդար կռվի դաշտ իջավ նաև ի Սարդարապատ և հաղթեց... Հայ ժողովուրդը իր ողջ պատմությամբ մնաց հավատարիմ ազատատենչ Հայկին և քրիստոսասեր Վարդանին», նշում է Վեհափառ Հայրապետը. Իր վերոհիշյալ կանոնական կոմիտեով:

ՎԵՋԱՓՈՒՆ ԷՍՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՁԸ
ՀՈԳԵԳԱՆՍՏՅԱՆ ՏՈՆԻ ԵՎ
ՍՍՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ
ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(25 մայիսի 1980 թ.)

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սըր-
բոյ. ամէն»:

«Եւ լցան ամենեքեան Հոգով Սրբով»:

«Եվ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով»:

Սիրելի հավատացյալներ, այսօր մեր Սուրբ Եկեղեցին տոնախմբում է հիշատակը Սուրբ Հոգվի Գալստյան: Հոգեգալուստի տոնն է այսօր:

Մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուսի մահից և հրաշալի Հարությունից ու Համբարձումից հետո Նրա աշակերտները մնացել էին անմխիթար, մնացել էին մի տեսակ որբացած և տխուր, մուլմիս գուցե հուսահատված: Հին իմանում, թե ինչ պիտի անեն իրենք հիմա առանց Հիսուսի Քրիստոսի, որ նրանց ուսուցիչն էր, նրանց առաջնորդն էր և ոգևորողը:

Ահա այսպիսի հոգեկան տխուր և անմխիթար վիճակի մեջ էին գտնվում նրանք: Եվ հաճախ հավաքվում էին Վերնատան մեջ, մի շենքում համեստ և հիշում էին Հիսուսին, Նրա պատգամները, նրա խոսքերը և ապրում էին Նրա սուրբ հիշատակով: «Գործք առաքելոց» գրքում այդ օրերի դեպքերը գրի առած հեղինակը պատմում է, թե հիսուսներորդ օրը Հիսուսի Հարությունից հետո, երբ էլի հավաքվել էին Նրա աշակերտները և Աստվածամայրը՝ Մարիամ, Վերնատան մեջ հանկարծ պատահեց մի հրաշալի դեպք: Կարծես մի քամի փչեց, ասրտաց շենքը, երկինքը բացվեց, և իջան լուսեղեն կերպարանքի մերթն բոցեղեն լեզուներ, իջան ամեն մեկի գլխի վերև: Նրանք շփոթվեցին, զարհուրեցան և չհասկացան, թե ինչ է կատարվում: Բայց քիչ հետո, երբ սթափվեցին, նրանց հոգու աչքերը բացվեցին ու հասկացան, թե Հոգին Սուրբ էր իջել իրենց վրա: Այնինչ ինքը Հիսուս, Իր կենդանի ժամանակ խոստացել էր ասելով, թե եթե ինքը մեկնի այս աշխարհից և բարձրանա երկինք, ուղարկելու է մխիթարիչը՝ Հոգին Սուրբ:

Եվ առաքյալները ոգեշնչվեցին, հոգեպետ վերածնվեցին ու հասկացան, թե իրենց մեջ իջել է Հիսուսի Հոգու զորությունը, և իմացան, թե ինչ պիտի անեն հետ այսու: Այն է՝ գնալ աշխարհով մեկ, դեպի հյուսիս, հարավ, դեպի արևելք՝ տարածելու համար Հիսուսի Ավետարանը, Հիսուսի խոսքը:

Ահա այսպես սկսվեց մարդկային պատմության մոր մեկ շրջանը, երբ քալ առ

քալ, հաճախ բազում դժվարություններով, տարածվեց քրիստոնեությունը ամբողջ աշխարհում:

Հիսուս այնևս չկար աշխարհի վրա, բայց իջել էր Նրա հոգին, Նրա աստվածային շունչը: Եվ բոլոր նրանք, որ այդ շունչից հաղորդվում էին, նրանք վերածնվում էին, մոր մարդ էին դառնում և պայծառանում էին մտքով, հոգով և դառնում էին այս աշխարհի մեջ ապրող «լուստ որդիներ»:

Հիսուսի առաքյալներից երկուսը՝ Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս, որոնք ներկա էին Սուրբ Հոգվի գալստյան օրը Վերնատան մեջ և որոնք մուլմիս քոտացել էին շնորհները Ս. Հոգու, եկան և Հիսուսի Ավետարանը քարոզեցին նաև Հայաստան աշխարհում, մեր ժողովրդին, հայ ազգին: Այսպիսով, Ավետարանի սերմերը ցանվեցին և տարածվեցին հետզհետե նաև հայ ժողովրդի կյանքում: Եվ երբ հասավ ժամանակը, աստվածային տնօրինությամբ մեր ազգը քրիստոնյա դարձավ Ս. Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի օրոք, Դ դարու սկզբին: Երբ կառուցվեց նաև այս տաճարը՝ Ս. Էջմիածնի Մայր տաճարը, կենտրոնը Հայոց քրիստոնեական հավատքի: Առաքյալների շունչը՝ Սուրբ Հոգին, տարածվեց նաև բոլոր նրանց վրա, ովքեր ընդունեցին Նոր Հավատքը բոլոր նրանց վրա, ովքեր մկրտվեցին քրիստոնյա: Ամբողջ հայ ազգը այդ օրվանից մերձնվեց աստվածային Սուրբ Հոգով: Մեր ժողովուրդըն էլ վերածնվեց, պայծառացավ մտքով և հոգով և սքանչելի գործեր կատարեց իր ողջ պատմության ընթացքում՝ մուլմ Սուրբ Հոգու ներշնչման և առաջնորդության ներքև: Մեր նախնիքների մեծագույն ստեղծագործությունը՝ հայ գրերի գյուտը, Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը, հայ դպրության և գրականության ստեղծումը կատարվեցին հրաշալի պայմանների մեջ, Ս. Մեսրոպ Մաշտոցի շնորհիվ, որ ինքն էլ Ս. Հոգուց մեծ ներշնչվածը և ներշնչողը հանդիսացավ: Եվ տակավին բազում հիշատակության արժանի գործեր, բազում արիության գործեր, մուլմպես Ս. Հոգու զորությամբ կատարվեցին Հայոց աշխարհում:

Հիշենք մանավանդ Վարդանանց հերոսամարտը: Վարդան Մամիկոնյան, Քրիստոսի Ավետարանը ձեռքին և սուրը մյուս ձեռքին, գնաց դեպի Ավարայր՝ լցված մուլմ Սուրբ Հոգու զորությամբ և շնորհներով:

Պատմության ընթացքին մեր ժողովուրդը՝ հայ ազգը, ինչ որ կարողացավ ստեղծել իբրև մշակույթ, իբրև բարոյական ըմբռնություն և գաղափարախոսություն, իբրև հայրենասիրություն, այդ բոլոր արժեքները շաղախված էին Ս. Հոգու լույսով:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԵՀԱՐԱՆԻ ԾՔԱՄՈՒՏՔԻ ԱՌԱՋ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍ ԶՈՐԱՎԱՌ ՊՈՂՈՍ ՓԻՐՈՒՄՅԱՆԻ ԴԱՏԵՐԻ ԹԱՄԱՐԱ ՓԻՐՈՒՄՅԱՆԻ ՀԵՏ

Նաև մեր օրերին, 1918 թվականին, երբ պատմական ճակատագրական դեպքերի հետևանքով Հայաստանում տիրում էր վտանգավոր կացություն, երբ Արևելահայաստանի ժողովուրդը մնացել էր մեռակ, անօգնական, իսկ իր դեմ կանգնած էին իր դարավոր թշնամին՝ թուրքական քանակները, որոնք 1915—1916 թվականներին բնաջնջել էին ողջ Արևմտահայաստանը, և անհատակվել էր շուրջ երկու միլիոն հայություն, ահա այդ նույն թշնամին որոշել էր բնաջնջել նաև արևելահայությունը և սպառնալիքով Հայաստանի դռներին էր կանգնած 1918 թվականի մայիս ամսի վերջերին:

Հայ ժողովուրդը, գիտակից այս ահավոր վտանգին, ուրքի կանգնեց հայրենասիրական բոցաշունչ մղումով: Հայոց արտերում արթնացավ Ավարայրի ոգին, հայ ժողովրդի հոգում բոցավառվեց նույն Սուրբ Հոգին, որ Վարդան Մամիկոնյանի հոգին էր եղել: Եվ նույն ոգեշնչումով հայ ժողովուրդը գնաց դեպի կոպի դաշտ՝ պաշտպանելու համար իր հավատքը, իր հայրենիքը և իր ազատությունը: Այդ կոպիները սկսվեցին մայիսի 22-ին: Մայիսի 25-ին տեղի ունեցավ վճռական ճակատամարտը Սարդարապատում, որտեղ հայերը թեև թվով շատ ավելի քիչ, ավելի վատ զինված և պատրաստված, սակայն իրենց ոգու հզորությամբ, իրենց հերոսական հայրենասիրությամբ կարողացան փախուստի մատնել թշնամի քանակները:

Հրաշալի մի հաղթանակ արձանագրեց հայ ժողովուրդը, որով Արևելահայաստանը փրկվեց մահվան անդունդից: Կոպիներ տեղի ունեցան նաև Ղարաքիլիսեում, Բաշ-Ապարանում, որոնք նույնպես հաղթությամբ ավարտվեցին: Այսպիսով բոլոր ճակատների վրա հայերը հաղթեցին և ազատեցին իրենց հայրենիքը ստույգ վտանգից: Այդ կոպիներին մասնակցեց ամբողջ հայ ժողովուրդը՝ իր բոլոր հատվածներով, նույնիսկ երեխաներ և կանայք օգնության հասան: Սարդարապատի ճակատամարտի հրամանատարը, գլխավոր հերոսը եղավ գորավար Պողոս Փիրումյանը, որի անունը ոսկի տառերով արձանագրված է մեր պատմության մեջ:

Այդ կոպիների շարքերում հայերի կողքին կոպեցին նաև ոռոս բազմաթիվ քաջարի սպաներ:

Մենք չենք կարող մոռանալ, որ այդ հերոսամարտում իրենց պատվի բաժինը բերին նաև հայ հոգևորականները, Ս. Էջմիածնի միաբաններից շատերը իրենց գլուխ ունենալով Գարեգին եպիսկոպոս և Զավեն եպիսկոպոս, բազմաթիվ վարդա-

պետներ, շատ քահանաներ, որոնք գնացին դեպի Սարդարապատ, և նրանց մասնակցությունն էլ իր դերը կատարեց ընդհանուր հաղթանակի գործը գլուխ բերելու համար: Սարդարապատի հաղթանակը համայն հայ ժողովրդի քաջության, զոհաբերության, հավատքի, Սուրբ Հոգու ներշնչանքի արդյունքն է:

Մենք, որ ապրում ենք այսօր մեր մայր հայրենիքում, խաղաղ ու ապահով, պետք չէ մոռանալ, որ այսօրվա մեր հայրենիքի հիմքերը դրվեցին 1918 թվականին, մայիսյան այդ օրերին, երբ հռչակվեց Հայաստանի հանրապետությունը և ապա երկու տարի հետո վերջնական ապահովության և խաղաղության հունի մեջ մտավ նա սովետական կարգերի հաստատումով, 1920 թվականի նոյեմբերին:

Այսպիսով, ահավաճի, վաթսուն և երկու տարիներ է ի վեր մեր հայրենիքը հետըզհետե աճում է, բարգավաճում, զորանում և ծաղկում մանավանդ իր հայրենաշինությամբ և իր ազգային մշակույթի ծաղկումով:

Մենք բոլորս երախտապարտ ենք մեր նախնիքներին, որոնք իրենց հերոսական ճիգերով և զոհաբերությամբ փրկեցին Արևելահայաստանը՝ մեր օրերի ամենայն հայոց սուրբ հայրենիքը:

Օրինակ վերցնելով մեր նախնիքներից, այսօր մենք բոլորս, բոլոր հայ ժողովրդի զավակները, պետք է գուրգուրանք մեր ներկա հայրենիքի կյանքի և ապագայի վրա, պետք է ամեն մեկս մեր պարտքը կատարենք հայրենիքի հառաջդիմության և ծաղկումին համար, պետք է ամեն մեկս մաղթենք և աղոթենք, որ աշխարհում միշտ լինի խաղաղություն, ամբողջական և վերջնական, որպեսզի մեր ազգը փոքրիկ այլևս երբեք ու երբեք չկանգնի վտանգների և սպառնալիքների առջև, և նա այս արևի տակ, երբայրական ազգությունների հետ ձեռք-ձեռքի տված, դիմի դեպի իր առավել պայծառ, առավել լուսավոր ապագան:

Թող Աստված լուսավորի հոգիները բոլոր մեր նահատակ զավակներին:

Թող Աստված օրհնի մեր մայր հայրենիքը և մեր հայ ժողովուրդը, որ ի Հայաստան և որ ի սփյուռն աշխարհի, և հաջողությամբ պսակի մեր ազգի առաքելությունը այս աշխարհում, միշտ ներշնչանքով Սուրբ Հոգու շնորհներին:

«Մեր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեւանդ. ամէն»:


Հավարտ ու պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ «կատարի


հոգեհանգիստ» ի ներկայության խոտմե-
րամ բազմության:

Ս. պատարագին և հոգեհանգստյան արարողությանը ներկա է նաև Սարդարապատի հերոսամարտի հրամանատար և գլխավոր հերոս զորավար Պողոս Փիրումյանի դուստրը՝ թիֆլիսաբնակ տիկին Թամարա Փիրումյանը՝ իր դստեր հետ:


Ս. պատարագի և եկեղեցական հանդի-

սության ավարտին Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, ուր տիկին Թամարա Փիրումյանը երախտագիտության ջերմ խոսք է ուղղում Հայոց Հայրապետին այն մասին, որ ինքը մեծապես մխիթարված է իր հերոս հոր հիշատակի ոգեկոչումով և հոգեհանգստյան արարողության կատարմամբ:





Հիօթան ՄԱՄԻԿՈՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԿԱՆԳՆԵՑՐԱԾ «ԱՄԵՆԱԲՐԿԻՉ» ԽԱՉՔԱՐԸ՝ ԻՐ ԾՆՈՂՆԵՐԻ ԳՐԻԳՈՐԻ
 ԺԵՎ ՄԱՄՔԱՆԻ ՀԻԾԱՏԱԿԻՆ։ ԿՅԱՆՔԻ ՀԱՎԵՐԺԱՑՈՒՄՆ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՂ ԲՈՒՄԱ-ՊՏՂԱՑԻՆ ՆՐԲԱՀՑՈՒՄ
 ԲԱՆԴԱԿՆԵՐԻ ՎՐԱ ԿԵՐՏՎԵԼ Է ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆԸ։ ՍՈՒՑՆ ԽԱՉՔԱՐՆ ՈՒՐԾ ԳԱՎԱՌԻ
 ՄԱՆԿՈՒՄ ԳՑՈՒՂԻՑ Է ՓՈԽԱԴՐՎԵԼ ՄԱՅՐ ԱԹՈՐ։



ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՌՈԲԵՐՏ
ՌԱՆՍԻԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Մարտի 25-ին Քենթրբերիի Մայր տաճարում տեղի է ունենում Համայն Անգլիայի եպիսկոպոսապետ ու միտրոպոլիտ Նորին Գերաշնորհություն Ռոբերտ Ռանսիի գահակալության հանդիսությունը:

Քենթրբերիի նորընտիր արքեպիսկոպոսը ծնվել է 1921 թվականի հոկտեմբերի 21-ին: Աստվածաբանական իր բարձրագույն կրթությունը նա ստացել է Օքսֆորդում: 1950 թվականին նա ձեռնադրվում է քահանա ու նվիրվում հովվական-քարոզչական գործունեության:

1970 թվականին ստացել է եպիսկոպոսական աստիճան ու նշանակվել Ս. Ալբանսի թեմի առաջնորդ:

1979 թվականին ընտրվել է Քենթրբերիի առաջնորդ՝ հաջորդելով իր տարիքի բերումով հանգստյան կոչված Քենթրբերիի նախկին արքեպիսկոպոս դոկտոր Ֆրեդերիկ Դոնալդ Կոզանին:

Նորընտիր արքեպիսկոպոս Ռոբերտ Ռանսին համարվում է Սուրբ Օգոստինի աատմական Աթոռի 102-րդ գահակալը:

Քենթրբերիի արքեպիսկոպոսի գահակալությունը տեղի է ունենում ավանդական շուքով և հանդիսությամբ:

Գահակալման արարողությանը մասնակցում են քույր Եկեղեցիների, ինչպես նաև այլ դավանությունների բարձրաստիճան հոգևոր պետեր, կառավարական պատասխանատու անձնավորություններ, դիվանական մարմնի ներկայացուցիչներ:

Հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետի, գահակալությանը ներկա են լինում նաև Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Ս. Ան-

րովբե արքեպ. Մանուկյանը, Անգլիայի հայոց հոգևոր առաջնորդ Ս. Ներսես եպս. Պոզապայանը և, որպես հյուր, Մայր Աթոռի միաբան Ս. Պսակ արքեպ. Թումայանը:

Գահակալական արարողության ժամանակ ընթերցվում է նորընտիր արքեպիսկոպոսի ընտրության պաշտոնական գրություն-մանդատը: Տաճարի ջբամուտքի առաջ հոգևորականների դասը ողջունում է նորընտիր արքեպիսկոպոսին և նրան առաջնորդում տաճար, ուր նա Քենթրբերիի պատմական Ավետարանը ձեռքին կատարում է արքեպիսկոպոսական իր ուխտը՝ հավատարիմ մնալու անգլիկան Եկեղեցու դավանությանը, ավանդություններին, կարգ ու կանոնին:

Այնուհետև նորընտիրը եկեղեցական թափորով ու Ս. Գրական ընթերցումների կատարմամբ առաջնորդվում է իր արքեպիսկոպոսական գահը, ուր նրան մատուցվում է հովվապետական գավազանը, և նա պաշտոնապես բազմում է Սուրբ Օգոստինի գահի վրա և ողջունում է բոլոր ներկաներին, տալիս իր առաջին պատգամն ու խաղաղության օրհնության իր ողջույնը:

Այնուհետև բոլոր ներկաները միասին արտասանում են Նիկիական հանգանակը:

Գահակալության հաջորդ օրը Հայ Եկեղեցու պատվիրակությունը պաշտոնապես այցելում է նորընտիր Ս. Ռոբերտ Ռանսի արքեպիսկոպոսին և նրան փոխանցում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի եղբայրական ողջույններն ու հանձնում Նորին Սուրբ Օծության շնորհավորական հետևյալ գիրը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ՝ ՈՒՂՂՎԱԾ
ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ՆՈՐԸՆՏԻՐ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԾՆՈՐՀՈՒԹՅՈՒՆ
ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՌՈԲԵՐՏ ՌԱՆՍԻՆ

Լոնդոն

Եղբայր Մեր ի Քրիստոս,

Աստուծո ողորմությամբ, այս երջանիկ պահին, երբ Ձերդ Գերաշնորհությունը բարձրանում է Քենթրյալլիի արքեպիսկոպոսության պատմական գահի վրա, ստանձնելու հովվապետությունը Անգլիկան մեծ Եկեղեցու ու համայնքի, Մենք Հայրապետը Հայ Առաքելական Եկեղեցու, ծնկի եկած մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սեղանի առաջ, ջերմապես աղոթում ենք, որ Տերը Ձեզ պարգևի կենաց երկար ու խաղաղ տարիներ, և որ Սուրբ Հոգին պաշտոններն լուսավորի Ձեր առաքելության ճանապարհը, որպեսզի իմաստությամբ, ավետարանական ներշնչումներով ու լավատեսությամբ ղեկավարեք ձեր Եկեղեցին և ձեր ժողովուրդը՝ մեր օրերի աշխարհի այս խռովահույզ ժամանակաշրջանին, երբ մարդկությունը ավելի քան երբեք կարիքն ունի ժողովուրդների միջև փոխադարձ բարի կամեցողության, արդարության և խաղաղության աստվածային պատվիրանների կենսագործման:

Ծնորհավորելով Ձերդ Գերաշնորհության ընտրությունը և գահակալությունը, այսօր

թույլ տվեք հայտնել Մեր քաղցր իղձը, որ ման հետ այսու Ձեր հովվապետության շրջանին, շարունակվեն ու հետզհետե առավել ամրապնդվեն ավանդական եղբայրական սիրո և գործակցության հարաբերությունները մեր երկու Եկեղեցիների միջև, ինչ որ հույժ մխիթարական է անձամբ Մեզ և համայն հայ հավատացյալ ժողովրդի համար:

Ձերդ Գերաշնորհություն, ընդունեցեք Մեր եղբայրական սրտագին ողջագուրումը ի Քրիստոս սիրով:

«Այլ Աստուած լուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելոյ ձեզ լուսով, զորութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13): Ամեն:


Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
4 փետրվար 1980 թ.

Այնուհետև Քնթրբերիի նորընտիր արքեպիսկոպոսի և Հայ Եկեղեցու պատվիրապետության միջև տեղի է ունենում ջերմ գրույց, էկումենիկ ոգով, որի ընթացքում Տ. Ռոբերտ Ռանսին հիշում է իր այցելությունը 1977 թվականին Ամենայն Հայոց Հայրապետին և Մայր Աթոռին, հայտնելով ման իր բարի ցանկությունը կրկին անգամ ուխտի գալու Սուրբ Գրական երկիրը՝ Հայաստան, և Հայ Եկեղեցու պատմական ու դարավոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածին:





ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է
ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԵՎ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԵՄԻ ՔԱՀԱՆԱ ՀԱՅՐԵՐԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է Արարատյան թեմի քահանաների վերապատրաստման դասընթացներ, որի ընթացքում քահանա հայրերը պետք է լսեն բազմաթիվ դասախոսություններ՝ Հայ Եկեղեցու պատմության, մատենագիտության, հայ ժողովրդի պատմության, Հին և Նոր Կտակարանների պատմության և հատկապես քաղցրահամության վերաբերյալ:

Այդ դասախոսությունները պետք է կատարվեն կանոնավոր կերպով, ամեն երկուշաբթի, Երևանի Ս. Սարգիս եկեղեցում կից առաջնորդարանի սրահում:

Ս/թ. մայիսի 26-ին, երկուշաբթի օրը, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում առաջին հանդիպումը: Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի և Արարատյան թեմի շուրջ քառասուն քահանա հայրեր:

Հանդիպմանը ներկա էին նաև Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ Ս. Սիրոն արքեպ. Մանուկյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը և փոխանորդի օգնական Ս. Գարեգին արք. Ներսիսյանը, Երևանի Ս. Սարգիս եկեղեցու եկեղեցական վարչության նախագահ Վալտեր Արամյանը:

Հանդիպման երեկոն սկսվում է Վեհափառ Հայրապետի «Հայր մեր»-ով:

Այնուհետև քաջման խոսքով հանդես է գալիս Ս. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, որը, ներկայացնելով քահանա հայրերին, հայտնում է բոլորի որդիական հարգանքը դեպի իրենց հոգևոր Պետին:

Արթզանն իր խոսքն ավարտում է՝ ասելով. «Մեր նպատակն է աշխատել, որ մեր խոսքը հասնի հավատացյալ ժողովրդին, որովհետև մեր ժողովուրդը կարոտ է Ավետարանի պատգամներին»:


Ս. Կոմիտաս արքեպանը հրավիրում է Հայոց Հայրապետին՝ Իր խոսքը և օրհնությունը տալու սույն նախաձեռնությանը:

Խոսք առնելով Նորին Արքությունը նախողջունում է Ս. Կոմիտաս արքեպիսկոպոսի այս նախաձեռնությունը՝ նշելով հոգևորականի պարտականությունների շրջանակները, և կատարում է այն հաստատումը, որ քահանան այն անձն է, որին հանձնված է հավատացյալի ավետարանական, կրոնաբարոյական, հայրենասիրական դաստիարակության գործը: Եվ այդ գործի համար անհրաժեշտ է բարեխիղճ պատրաստություն:

Նորին Արքությունն Իր խոսքն ավարտում է ընդհանուր Եկեղեցվո մեծ քարոզիչ սուրբ Հովհանն Ոսկեբերանի հետևյալ խոսքերով. «Բոլոր իր դժվարությունների մեջ քահանան մեկ օգնական ունի՝ խոսքի ուժը: Եթե նրան պակասում է այդ ուժը, իրեն հանձնված հոգիները կլինեն նման այն նավերին, որոնք մշտապես փոթորիկի են բռնված: Դրա համար քահանան ամեն ինչ պետք է անի, որպեսզի ձեռք բերի այդ ուժը»:

Հանդիպումն ավարտվում է Ս. Կոմիտաս արքեպանի շնորհակալական խոսքով:

Փոքր ընդմիջումից հետո քահանա հայրերը Վեհարանի հանդիսությունների դահլիճում դիտում են երջանկահիշատակ Ս. Ս. Գևորգ Զ և Ս. Ս. Վազգեն Ա կաթողիկոսների հայրապետական ընտրության և գահակալության հանդիսություններին նվիրված կինոժապավենները:



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մայիսի 4-ին, կիրակի.—Տօն Երեման Ս. Խաչի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հովհաննես ավագ քհն. Մարությանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Մա պահեսցէ զմեզ լամենայն փորձութենէ» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

• •

Նույն օրը ոխտավորաբար Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին է այցելում Պլովդիվի (Բուլղարիա) հայոց հոգևոր հովիվ Տ. Սահակ քհն. Մեսրոպյանը:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետը, որպես գնահատանք տեղի հոր երկարամյա եկեղեցականի ծառայության, նրան պարգևատրում է քահանայական լաճջախաչով: Այնուհետև տեղի հայրը Նորին Սրբությանը հայտնում է շնորհակալության հետևյալ իր խոսքը.

«Վեհափառ Տեր,

Թույլ տվեք մի քանի խոսք ըստ, երջանիկ եմ այս պահուն, հայրենի հողին վրա, Սուրբ Էջմիածնի այս սրբազան հարկին

տակ, մեր սիրելի սրբազան առաջնորդին և իմ հոգևոր ծնողիս միջնորդությամբ:

Վեհափառ Տեր, գնահատեցիք իմ հոգևոր աշխատանքս Պլովդիվի եկեղեցվո մեջ, նույնպես իմ ծառայությունը հավատացյալ ժողովուրդին հանդեպ: Այսպիսով արժանացա սրբատառ կոնդակի, և Դուք հիմա իմ կործքս կգարդարեք քահանայական լաճջախաչով: Ասիկա մեծ ուրախություն և մեծ բախտավորություն մըն է ինձ համար և կյանքիս մեջ չկրկնվող օր մը:

Սիրելի ու հարգելի Վեհափառ Տեր, ես խորին շնորհակալություն կհայտնեմ, մանավանդ Ձեր ուշադրությանը ու հարգանքին համար, զոր կվայելեմ այսօր: Էջմիածնա լույսը առատ է այստեղ, մանավանդ հոգևոր լույսը, որ կճառագայթե՝ մեզ հոգեպես մխիթարելով: Ես նոր լույս պիտի տալիս ինձ հետ մեր հավատացյալ ժողովուրդին, լո՛ւյսը Ս. Գրիգոր Լուսավորչին անմար կանթեղեն, Սուրբ Էջմիածնեն և անոր շատ արժանավոր Գահակալեն, Պուլկարիո մեջ ապրող բոլոր հայերու, շատ սիրված ու շատ հարգված Վեհափառն: Եվ Ձեր սուշև խոսք կուտամ, Վեհափառ Տեր, որ սպասելի մեծ եռանդով ու նվիրումով պիտի աշխատեմ պայծառացնելու, շինեցնելու

մեր եկեղեցին և հավատքը գորացնելու, սերը շատացնելու դեպի Սուրբ Էջմիածին և դեպի անոր Գահակալը, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Կհամբուրեմ Հայրապետական Ձեր օծյալ Աջը և կխնդրեմ Ձեր օրհնությունը:

Աստված առողջ, երկար կյանք պարգևե Վեհափառությանդ և հաջողություն Ձեր բոլոր գործերուն:

*
* *

Մայիսի 7-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Ս. Ստեփանոս արք. Չաքալյանը ներկայացնում է դանիացի գրող Մարիա Ջեքրայսընի «Օրագրություններ 1907—1919 թթ. Խարբերդից» փաստագրական գիրքը:

Վերջում հայր սուրբը կարդում է հատվածներ վերոհիշյալ օրագրությունից:

*
* *

Մայիսի 10-ին, շաբաթ.—Այսօր, առավոտյան, հոգևոր ճեմարանի ուսանողությունը ուխտի է մեկնում Հավուցթառի, Ս. Ստեփանոսի և Ս. Գեղարդա վանքերը:

*
* *

Մայիսի 11-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Բարսեղ քին. Ղազարյանը:

*
* *

Նույն օրը Վեհափառ Հայրապետը, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի հրավերով, ներկա է լինում ս. պատարագի արարողության Երեվանի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում:

«Հայր մեր»-ից առաջ Ս. Կոմիտաս արքեպիսկոպոսը, հանուն Արարատյան թեմի հոգևորականության, եկեղեցական վարչությունների և հավատացյալ ժողովրդի, բարի գալուստ է մաղթում Հայոց Հայրապետին և խնդրում Նրան հայրապետական Իր ողջունն ու օրհնությունը տալ Արարատյան թեմին և հավատացյալ ժողովրդին:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ Ս. Սիոն արքեպ. Մանուկյանը, հոգևոր ճեմարանի տեսուչ Ս. Գրիգորիս

վրդ. Բունիաթյանը և Վահրամ արկ. Տերտերյանը:

Վեհափառ Հայրապետի քարոզը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 14):

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, Երեվանի հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Մայիսի 12-ին, երկուշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանի հանդիսությունների դահլիճում տեղի է ունենում կինոդիտում:

Մայր Աթոռի միաբանները և հոգևոր ճեմարանի ուսանողները դիտում են երջանկահիշատակ Գևորգ Զ. կաթողիկոսի ընտրության, գահակալության, թաղման և հուղարկավորության նվիրված կինոժապավենները:

*
* *

Մայիսի 18-ին, երեքշաբթի.—Այսօր, առավոտյան, հոգևոր ճեմարանի 1978—79 ուսումնական տարվա շրջանավարտ ութ սարկավագները, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և Լեւոնգրադի հոգևոր ճեմարանի տեսչության հրավերով, մեկնում են Լեւոնգրադ՝ ծանոթանալու քաղաքի պատմական վանքերին, եկեղեցիներին և տեսարժան վայրերին:

Մայր Աթոռի սարկավագները Լեւոնգրադ հյուրընկալվելու օրերին իրենց մասնակցությունն են քերում ուս պրավոսլավ մի քանի եկեղեցիների եկեղեցական արարողություններին և պատարագներին:

Այդ օրերին Մայր Աթոռի սարկավագներին իր պաշտոնատեղիում ընդունում է Լեւոնգրադի հոգևոր ճեմարանի տեսուչ Ս. Կիրիլ միտրոպոլիտը:

Մայր Աթոռի սարկավագները մայիսի 18-ին, կիրակի օրը, լավագույն տպավորություններով վերադառնում են Մայր Աթոռ:

*
* *

Մայիսի 14-ին, չորեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին են այցելում իրաքահայ ուխտավորների մի մեծ խումբ:

Մայիսի 15-ին, հինգշաբթի.—Համբարձումն Քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում օրվա մեծ խորհրդի մասին:

Հավարտ ս. պատարագի կատարվում է Հայրապետական մաղթանքի արարողություն՝ Հայրապետական Աթոռի 1441 թ. Սահիգ Էջմիածին փոխադրության տարեդարձի առիթով:

Մայիսի 17-ին, շաբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին են այցելում բուլղարահայ ուխտավորների մի խումբ:

Մայիսի 18-ին, կիրակի.—Երկրորդ Ծաղկազարդ.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Խաչատուր քհն. Ֆրանգյանը:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգիստ Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, նորոգ հանգուցյալ դոկտ., պրոֆ. Առաքել Առաքելյանի հիշատակին:

Մայիսի 21-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

Մայիսի 22-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Սույն նիստում հրավիրվել էր նաև Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ Գառնիկ Քեհյայանը, որը հանգամանորեն ներկայացնում է Մայր Աթոռի բյուջեի 1979

թվականի կատարողականը և 1980 թվականի նոր բյուջեի նախահաշիվը:

Այնուհետև ժողովին նույնպես հրավիրված Մայր Աթոռի ճարտարապետ Արծրուն Գալիկյանը ներկայացնում է Մայր Աթոռի 1979 թ. շինարարական աշխատանքների արդյունքները և 1980 թ. Մայր Աթոռում և նրա շրջապատից դուրս կատարվելիք շինարարական աշխատանքների ծրագրերը: Թե՛ Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչի և թե՛ գլխավոր ճարտարապետի բովանդակալից զեկուցումները լսվում են մեծ հետաքրքրությամբ:

Հետ քննարկման Գերագույն հոգևոր խորհուրդը վավերացնում է 1979 թ. բյուջեի կատարողականը և հաստատում՝ 1980 թ. բյուջեի նախահաշիվը, ինչպես նաև շինարարական ծրագրերը:

Հավարտ ժողովի Վեհարանի սեղանատանը տրված ընթերցի ժամանակ նշվում է Մայր տաճարի լուսարարապետ և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Ս. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի ծննդյան 60-ամյակը:


Սեղանի շուրջ սրբազան հորը շնորհավորում են Վեհափառ Հայրապետը և, հանուն Գերագույն հոգևոր խորհրդի՝ նրա ատենապետ Ս. Սիոն արքեպ. Մանուկյանը:

Վերջում շնորհակալության և երախտագիտության խոսքով հանդես է գալիս հոբելյար Ս. Հուսիկ արքեպիսկոպոսը:

Նույն օրը Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին է այցելում աֆղանական Եկեղեցու բարձրաստիճան հոգևորական շեյխ Մոհամեդ Ալիշահը:

Վեհափառ Հայրապետի և բարձրաստիճան հյուրի միջև տեղի է ունենում զրույց՝ բարեկամական մթնոլորտում:

Մայիսի 28-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Ս. Ստեփանոս արք. Չաքալյանը ներկայացնում է «Moscov news» թերթի այս տարվա 18-րդ համարում լույս տեսած գրախոսությունը, որը նվիրված է հնդեվրոպաբաններ Թամազ Գանգրեղիձեի և Վլաշեալավ Իվանովի «Հնդեվրոպական Մայր երկրի խորհուրդը լուծված» գրքին:



ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

«Հոգեւորական սուրբ մկրտութեամբ զարդարեցեր նոքօք զօրեղերս, ի զգեստս յուսափայլս եւ նոյափետուրս»:

Ծարական

ՀՐԵՂԵՆ ԼԵԶՈՒՆԵՐ

Հոգեգալուստը տոնն է եկեղեցիին ծննդյան, հիսններորդ օրը—պենտեկոստէ—սուրբ Զատիկին:

Հոգեգալուստին երկու մշանակալից եղելություններ կաատահին:

Ա. Պենտեկոստեին Տիրամոր հետ աղոթքի համար խմբված աշակերտները հոգևոր մկրտություն կընդունին Սիոնի Վերնատան մեջ:

Ա. Հոգին հրեղեն լեզվի երևույթով կիջնե անոնցմե յուրաքանչյուրին վրա: Եվ աշակերտները կլեցվին իմաստությամբ, քաջությամբ և լեզուներ խոսելու շնորհքով:

Բ. Պենտեկոստեին այդ օրը աշակերտներու, մասնավորաբար Պետրոսի քարոզությամբ Երուսաղեմի բնիկներեն և եկվոր ուխտավորներեն երեք հազար հոգի դարձի կուգան, Հիսուսը իբր Քրիստոս կընդունին և կմկրտվին: Գործք Առաքելոց Բ 1—41:

Հոգեգալուստին այս արդյունքը երախայրիքն է աշակերտներու առաջին քարոզության, առաջին հաղթանակն ու վարձատրությունը Ավետարանի առաջին մշակներուն:

Ասոր համար ալ շարականն ու արվեստագետները կպանծացնեն Հոգեգալուստին կապված եղելությունները հոյակապ ստեղծագործություններով:

—Երկինքը կբացվի Սիոնի Վերնատան վրա: Վերեն հոսող լույսի հեղեղին մեջ կտեսնվի Ա. Հոգին աղավաղի երևույթով:

Կրակե լեզուներ կիջնեն և կհանգչին Տիրամոր և աշակերտներու գլուխներու վրա յուսամաճանչ:

Հոգեգալուստին եկեղեցիի գոյության գալուն և ապա աշխարհի հեղաշրջումին համար ունեցած քարձր մշանակության գիտակցությամբ՝ Հայաստանյայց եկեղեցին Ա. Ներսէս Շնորհալիին տնօրինությամբ յոթն օր անընդհատ կտոնե Ա. Հոգիին Գալուստը համապատասխան հանդիսություններով:

ԱՎԵՏԱՐԱՆԻ ՍՅՈՒՆԵՐԸ

Հայտնի քարոզիչ մը է. Ստանլի Չոնս իր վեկ գործին մեջ Հոգեգալուստին անդրադարձությամբ՝ Քրիստոսի Ավետարանը կանգնած կհամարի չորս սյուներու վրա:—Հիսուսի կյանքը, խաչը, հարությունը և գալուստը՝ կամ Ա. Հոգիին գալուստը մարդերու կյանքին մեջ:

Ասոնք Աստուծո միտքին մեջ կունենան հղության, երկունքի, ծնունդի և աճումի շրջաններ:

Հղությունը կհամապատասխանե Հիսուսի մարդեղության գաղափարի ծագումին: Երկունքը՝ Հիսուսի չարչարանքներուն և խաչելության:

Ծնունդը՝ կյանքին հաղթանակն է մահվան դեմ:

Աճումը՝ Ավետարանի լույսին երկինքի արքայության վարդապետության ծաղկումն է մինչև աշխարհի չորս ծագերը:

ՆՈՐ ՄԱՐԴ.

Հոգեգալուստին աշակերտները կդառնան նոր մարդ: Իրենցմով և իրենց հետ գոյության կուգա նոր մարդկություն մը այնքան տարբեր սովորականեն, որքան սովորական մարդը անասուններեն, որքան Հիսուս Ադամեն:

Աշակերտները կկոչվին քարոզ լինելու, Տեր Հիսուսն իբր Քրիստոս հռչակելու, Աստուծո թագավորության ավետիսը տալու:

Նկատելի է, որ մինչև Ս. Հոգիին գալուստը աշակերտները՝ հակառակ Քրիստոսի Հարության ավետիսն առած լինելուն, հակառակ Քրիստոսի այլով կերպարանով հայտնության ականատես լինելուն, տակավին վախի ազդեցության տակ էին, փակ դուռներու ետև կտնտնային, միայն իրարու հետ կփախային ... Ամբողջ հիսնակի միջոցին անոնք Աստուծո արքայության գալուն ավետիսը չէին տար և մարդերը դարձի չէին հրավիրեր:

Մինչ այդ, աշակերտներու ականջին կրհնէր Հիսուսի քարոզած կենաց բանը, բայց անոնք տակալին փողհարներ չէին Ավետարանին:

Անոնք ականատես եղած էին աշխարհի վրա երևցող ամենեն կատարյալ և գեղեցիկ կյանքին, բայց տակալին չէին վկայեր Հիսուսի մասին:

Անոնք տեսած էին աշխարհի ամենեն բախտորոշ մեկ պարսարը՝ Գողգոթայի վրա Հիսուս Քրիստոսի խաչելությունը՝ բայց դեռ անոնցմե ոչ ոք համարձակած էր հայտարարել «Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ի խաչ եղաւ է, եւ ես աշխարհի» (Գղտ. Զ 14):

Անոնք լեցված էին պատմության ամենեն սքանչելի եղելություններեն մեկուն՝ Քրիստոսի Հարության հրճվանքովը, բաւ տակալին աշխարհի առջև չէին հնչեցներ կյանքի և հաղթության մեծ ավետիսը:

—Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

Անոնք տեսած էին Հիսուսի վերքերը որ ուրիշներ կբուժէր, գիտեին մահը որ դատակնիքն էր մահվան, լեցված էին ուրախությամբ մը՝ որ կզլեր կանցնէր բոլոր մյուս ուրախությունները, բայց մինչև Ս. Հոգիին իրենց վրա իջնելը՝ անոնք դեռ կմնային շվարած ու ձեռնթափ:

Հոգեգալուստին՝ աշակերտները ինչ որ մինչև այդ ուսած, լսած և տեսած էին՝ կյուրացնեն և կսկսին կիրարկել:

Հոգեգալուստին օրը բոլորովին կնորոգվի և կկազմավորվի աշակերտներուն կյանքը: Ադոր համաձայն ալ կփոխվին ու կրփայլին իրենց վարքն ու բարքը: Անոնք

դեմ հանդիման կուգան աշխարհին անօրինակ կորովով և բաշտությամբ: Պենտեկոստեին անոնք համարձակ դուրս կնետվին Սիոնի վերնատունեն, կցրվին դեպի աշխարհի չորս ծագերը տարածելու համար փրկության ավետիսը:

Առ այդ աշակերտները զարմանալիորեն կարհամարհեն աղքատությունը, կխնդան հարվածներու տակ, կպարծենան իրենց քաշած տանջանքներով: Անոնք Քրիստոսի սիրուն հոժարությամբ կտանին ամեն չարչարանք, նեղություն, բանտ և զրկանք: Անտրտունջ կբալեն խաչի ճամբեն: Ուրախ և երջանիկ կզգան երբ որևէ գինով կարենան վկայել ճշմարտության և իրենց ունեցած առավել կյանքի փորձառութենեն բաժին հաճել ուրիշներուն:

Այս հեղաշրջումն արդյունք է աշակերտներուն Ս. Հոգիով լեցվելուն, անոնց վերածնունդին, նոր մարդ, նոր արարած դառնալուն իրողության:

ԱՍՏՎԱԾ ՄԵՐ ՄԵԶ

Ս. Ծնունդին՝ Հիսուսի մարդեղությամբ՝ Աստված մեզ հետ կլինի: Էմ-Մանու-էլ:

Պենտեկոստեին Ս. Հոգիին գալուստով Աստված մեր մեջ կիջնէ:

Աշակերտները զԱստված կզգենուն, Անով կաղբերանան, տարբեր լեզուներ խոսելու, այլազան ազգերէ հասկցվելու, բժշկություն ընելու ձիրքով կօծովին, կարհանան:

Անոնք Հոգեգալուստին հրաշալի փորձառությամբ թրծված կկատարեն բացումը աշխարհն Ավետարանով լուսավորելու գործին: Եկեղեցին կծնի: Աստուծո թագավորության ավետիսը կսկսի ծավալի:

Ներսէս Ծնորհալի այս հրաշալիքը կերգէ Կենդանաբար Աստուած շարականով, որուն վերջին տունն է հետևյալը.

—Հոգեւորական սուրբ մկրտութեամբ, նոքօք զարդարեցեր զսինեզերս


ի զգեստս լուսափայլս և նորափետուրս:

Երբ եկեղեցին ներսով դուրսով կլեցվի և կզարդարվի Սուրբ Հոգիին շնորհքով, ան կդառնա անպարտելի ուժ մը, զոր չեն կրնար հաղթահարել աշխարհի բռնավորները՝ դրունք դժոխաց:

Երբ եկեղեցին լեցուն է Սուրբ Հոգիով՝ ավելի հզոր է քան ատոմային, ջրածնային և նյութորոն գորությունները, որոնք պետք է օգտագործվին միայն մարդերու բարիքին և աշխարհի խաղաղության համար:

Այս է հրամայական պահանջքը Աստուծո թագավորության գալուն:

ԶԳՈՆ ԵՊՍ. ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ
Նյու Յորք



«ՍԻՈՆ» ԱՄՍԱԳԻՐԸ

1979 թվականին լրացավ Երուսաղեմի հայոց պատրիարքության պաշտոնաթերթ «Սիոն» ամսագրի նոր շրջանի հրատարակության 53 տարին:

1927 թվականին, լուսահոգի Ս. Եղիշե պատրիարք Դուրյանի (1920—1930) օրով, Երուսաղեմում, հայոց վանքի տպարանից հրատարակվում էր «Սիոն» ամսագիրը «որպես պաշտոնաթերթ պատրիարքության հայոց Երուսաղեմի, կրոնական, գրական, բանասիրական» բովանդակությամբ, Ս. Բաբկեն եպիսկոպոս Կյուլեսերյանի խմբագրապետությամբ, որը և 1930 թվականին Կիլիկյան Աթոռի աթոռակից կաթողիկոս ընտրվելով՝ թողեց խմբագրությունն ու մեկնեց Անթիլիաս:

1930-1932 թվականներին «Սիոն» ամսագիրը խմբագրեց Ս. Տիրան վարդապետ Ներսիսյանը:

Այնուհետև հոգեւորյա Ս. Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանի (1932—1939) օրով, նրա յոթնամյա պատրիարքության շրջանին, նրա խմբագրապետության տարիներին, «Սիոն» ամսագիրը շարունակվեց հրատարակվել և ճշմարտապես դարձավ «Հայ Եկեղեցու ծանր հրետանին» պատրիարքական նրա սքանչելի խմբագրականներով, և բովանդակայից «Նորք և Նիշք»-երով, որոնցում ընդգրկվում էր պայծառամտությամբ սփյուռքի ազգային-եկեղեցական ողջ հայ կյանքը՝ իր կարևոր իրադար-

ձություններով, ժամանակակից բազմապիսի հրատապ հարցերի լուսաբանությամբ:


Ս. Թորգոմ պատրիարքի օրով «Սիոն»-ը հանդիսացավ լուրջ հրատարակություն, եկեղեցական, մշակութային ուղագրով երեվոյթ հայ լրագրության պատմության և Հայ Եկեղեցու ժամանակակից տարեգրության մեջ:

«Սիոն»-ը իր էջերը լայնորեն տրամադրեց կրոնական, եկեղեցագիտական, պատմա-բանասիրական, ազգային-եկեղեցական, եկեղեցական արվեստի ու պատմության նշվիրված արժեքավոր հոդվածների և ուսումնասիրությունների հրատարակությանը:

Թորգոմ պատրիարքի խմբագրական, հրապարակախոսական գործունեության հավատամքն էր՝ սփյուռքի մեջ «հայ ազգության պահպանումը Հայ Եկեղեցու միայն»:

Արդարև մեծ է և եզակի «Սիոն»-ի կատարած դերը մեր Եկեղեցու ժամանակակից պատմության մեջ, որպես եկեղեցագիտական, դավանաբանական մտքի հանդիսարան, որպես Հայ Եկեղեցու ինքնուրույնության, լուսավորչական ուղղափառության, ավանդույթների պաշտպանության ամբիոն:

Թորգոմ պատրիարքի մահից հետո, 1939 թվականի փետրվարին, «Սիոն»-ի վերոհիշյալ եկեղեցական, մշակութային, հրապարակախոսական ավանդությունը շարունակ-



ԻՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
ՍՏՐԻԱՐՋՈՒԹԵՍՆ
ՀԱՅՈՉ
ՆՐՈՒՍԱՂԷՄԻ

ԾԳՒ ՏՄԻԻ

Ե. Բ

1979



վում է անխափան մինչև այսօր: Ավելի քան 40 տարիներ «Սիոն»-ը ձեռնհաստրեմ խմբագրել է Թորգոմ պատրիարքի բազմաշնորհ և հարազատ աշակերտ Եղիշե վարդապետ Տերտերյանը՝ Եղիվարդը՝ Երուսաղեմի հայոց արդի պատրիարքը:

«Սիոն»-ի էջերում տպագրվել են 1930-ական թվականներից սկսած Եղիվարդի բանաստեղծական, գրական, քարոզչական անդրանիկ էջերը, որոնք հետագայում Երուսաղեմի հայոց վանքի տպարանից լույս տեսան առանձին գրքերով, ինչպիսիք են «Մագդաղիկեն մեղրամոմե», «Լեռան վրայեն», «Անոն որ չեն մեռնիր», «Անցորդը», «Խորտակված երկինքներ», «Օտարականը», «Սուրբ Մեսրոպ», «Հեթանոսաց Սոաքյալը», «Կարմիր Զորավար», «Ընտիր էջեր» և այլն: Իսկ շուտով լույս կտեսնեն «Հայրենականը», «Պողոս առաքյալ», «Լուսամատյան» և այլ գործեր:

1957—1960 թվականներին «Սիոն»-ը խմբագրել է Տ. Շնորհք եպիսկոպոս Գալուստյանը:

Այժմ ցանկանում ենք «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանը ներկայացնել «Սիոն» ամսագրի 1979 թվականի վեց միացյալ համարների հարուստ և հետաքրքիր նյութերի համառոտ բովանդակությունը:

1979 հունվար-փետրվար միացյալ համարը (էջ 2—48) բացվում է ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարք Հոր Սուրբ Ծննդյան պատգամով (էջ 2—4), խոսված հունվարի 19-ին, ուրբաթ գիշեր, «Բեթղեմի սուրբ այրեն»:

Պատրիարք սրբազանի Ծննդյան պատգամը ուղղված է հայոց ժողովրդին, «որ լերտաաղբի, ի Հայաստան և ի սփիռս աշխարհի»:

«Կխոսիմ ձեզի աշխարհի ամենեն նվիրական սրբավայրեն, Բեթղեմի Սուրբ Ծննդյան Այրեն, ուր մոտ երկու հազար տարիներ առաջ ծնավ սիրո և խաղաղության իշխանը՝ աշխարհի Փրկիչը:

...Արյունի և խոռվքի այս օրերուն, երբ ամեն ինչ նյութի և ույծի կնիքով է կնքավոր, երբ մեր կյանքը գեղեցկացնող հոգեկան արժեքները այլևս նվազման ու ընկրկումի են ենթարկված, ավելի քան մխիթարական է ձորեն բանալ մեր հոգին հրեշտակներու պատգամին, «չերկիր խաղաղությոն և ի մարդիկ հաճությոն»:

«...Ոչ մեկ ատեն երկիրը չէ ունեցած այսքան արցունք և արյուն, և մարդկությունը այսքան տառապանք... Մարդկությունը իբրև բարոյական հասկացողություն հոգեվարքե մը կանցնի, նման անոր՝ գոր ունեցավ հին աշխարհի վախճանին, երբ

քրիստոնեությունը այդ կործանումին կբերեր կարելի փրկությունը, նյութեն և քայքայումեն դուրս քաշելով անդնդասույզ ոգեղենը մարդուն»:

«...Մեղմելու համար նյութին, ույծին և երկաթին ճնշումը մեր ուսերեն և հոգիներեն, մենք պետք ունինք, ինչպես միշտ, քրիստոնեական հրամայականներուն, սիրո և խաղաղության, որոնց մարմնացումը եղավ այս գիշեր վերստին ծնող մանուկը, վերակազմելու մարդուն աղարտված դիմագիծը...»:

Ծննդյան իր պատգամի մեջ, պատրիարք սրբազանը չի մոռացել նաև հայոց ժողովրդին, «Դո՛ւն, դարերով խաղաղության ծարավն ու իղձն ես ունեցեր, ազատության տենդանքին չափ ու բուռն ու երկինքին չափ խորունկ...: Ծարունակե հավատալ Հիսուսի Ծննդյան ու մարդուն աստվածացումին և մայրացուր հոգիդ այս գիշերվան մեծ խորհրդով, նման քու աստվածաբայալ պապերուդ, որոնք գիտեին գեղումի հանել գիշերները, բանալու դռները երկնքին, իջեցնելով Աստվածորդին իրենց սրտերուն մեջ և մտքի գաղջ ընտանությանը»:

Ամսագրի 8—9 էջերում «Փոխան խմբագրական»-ի հրատարակվել է դարձյալ Եղիշե սրբազան պատրիարք Հոր 24 սեպտեմբեր 1978 թվակիր «պատրիարքական կոնդակը» «վսեմաշուք տիար Ալեքս Մանուկյանի ուղղված Մոնտրեալի մեջ կառուցած (Արմեն Բեպեք Մանուկյան) վարժարանի բացման առիթով»:

Սրբազան պատրիարքը իր կոնդակում ողջունում է «սրտի ամհուն գոհունակությամբ ազգին անգուգական և մեծ բարերարը, մեր օրերու ամենեն պատկառելի և բազադիկ արժեք ներկայացնող դեմքը... մին մեր ազգային այն բարերարներեն և պարծանքներեն, որը գիտե դիմավորել իր ժողովրդին կարիքները կիրթ և ազնվական զգաստմանով: Իրեն համար դրամը ույծ մը չէ միայն, այլ արժեք մը՝ կիրարկվելու արժեքներու ի խնդիր: Առանց այս փրկարար փոխարենին, ղեղին մետաղը գույն մը և ձան մըն է միայն...»:

«...Սրտի և մտքի անստգուտ հատկություններով օժտված մարդ, որ վառժված է միշտ մտածելու թե ի՞նչ ժողովրդին մեռալանգումի և գոառնման առնեն նեմալան լծակը առավելաբար կրթությունը կորուստ ույալ, և առ պատճառով իր ամենեն գորովագեղ ուշադրության առարկա ըրած է ազգային կրթության գործը»:

Սիոն-ի միացյալ սույն համարի հաջորդ նյութը (էջ 10—12) նկարագրում է 1978 թվականի դեկտեմբերի 9-ին, Նյու Յորքում «Հայ Բարեգործական Ընդհանուր ազգա-

պարձան Միության ցկյանն նախագան տիար Ալեքս Մանուկյանի 25-ամյա պաշտոնավարության նվիրված արձաթյա հոբելյանի» և մեծարանքի հանդիսությունը:

Հանդիսության ժամանակ ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ Ս. Թորգոմ արքեպ. Մանուկյանը կարդում է այս առթիվ մեծ բարերարին ուղղած Ամենայն Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակը և հոբելյարի կուրծքը զարդարում է «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով՝ «Ի գնահատություն Հայց. Եկեղեցիի պաշտոնության և շինարարության ի նպաստ անոր կատարած մեծագումար ծառայությանը»:

Հորեկյանական հանդիսությունը ներկա են եղել նաև անձամբ Թորքիայի հայոց ամենապատիվ Ս. Շնորհք սրբազան պատրիարքը, որը հովվական այցելությանը այդ օրերին գտնվում էր ԱՄՆ-ում, Ս. Տիրան, Ս. Թորգոմ, Ս. Ծափե արքեպիսկոպոսները, «որոնք մասնավորապես ծանրացան սրբ. Մանուկյանի Հայաստանաց Եկեղեցիին կատարած մեծագումար նվիրատվությանը վրա»:

Սիոն ամսագրի 1979 թվականի համարները հարուստ են նաև քերթողական գեղեցիկ և բովանդակային էջերով:

Եղիվարդը 1979 թվականի ամսագրի բոլոր համարներում հավատարիմ իր բանաստեղծական խառնվածքին, հանդես է եկել դարձյալ տերտերյանական շնչով և թափով գրված ընտիր և խոհական քերթվածներով, ինչպիսիք են «Երբ կնայիս» (էջ 14), «Մեծ Պահքը» (էջ 59), «Մարգարիտներ» (էջ 104), «Վերջապույս» (էջ 104), «Երևան» (էջ 169), «Գեղարդ» (էջ 211):

Բանաստեղծական էջեր են ստորագրել նաև Մուրադ Մանուկյանն ու Գ. Ծարտաբը:

Հարուստ է նաև Սիոն-ը կրոնական հոդվածների, քարոզների, խորհրդածությունների, գրական էջերի հրատարակությամբ: Կրոնական բովանդակությամբ հոգեչեն հոդվածներ են գրել Ռումիհայի և Բուդղարիաի հայոց միացյալ թեմերի առաջնորդ Ս. Տիրայր եպիսկոպոս Մարտիրոսյանը, Վաչե վրդ. Իգնատիոսյանը (Մարսել), Մերոսյ արքեպ. Մուրաֆյանը (Երուսաղեմ), Գեորգ Ա. Ժիհիվիզյանը (Երուսաղեմ) և ուրիշներ:

Սիոն ամսագրի «Բանասիրական բաժնի» բերքը նույնպես առատ է եղել 1979 թվականին, պատմա-բանասիրական, հայագիտական, կենսագրական, լեզվաբանական, ձեռագրական, մատենագրական, գրախոսական, հայկական վանքերի պատմության նվիրված արժեքավոր ուսումնասիրությունների և բնագրերի հրատարակությամբ:

Առաջին գծի վրա երախտագիտությամբ

պետք է ճիշել Նորայր արքեպ. Պողարյանի (Ծովական) վաստակը: Հարգելի գիտնականը ամսագրի յուրաքանչյուր համարում հանդես է եկել 1—2 հոդվածների հրատարակությամբ, ինչպիսիք են «Ստեփանոս կաթողիկոս Աղթամարյ» (էջ 22), «Ղուկաս վարդապետ Խարբերդցի» (էջ 67), «Յովհաննէս քհն. Մանկասարեանց» (էջ 108), «Խաչատուր արքեպ. Կեսարացի» (էջ 172), «Կոմրուկ թաղի դպրատունը» (էջ 215), «Հայկական ծածկագրեր» (էջ 261):

Չափազանց արժեքավոր են նաև Նորայր սրբազանի համառոտ ուսումնասիրությունները «Հայկական վանքեր»-ի, նրանց տեղագրության, պատմության և նրանց մշակութային գործունեության նվիրված ակնարկներում, ինչպիսիք են «Ամենափրկիչ վանք Նոր Զուղայի» (էջ 69), «Ա. Աստվածածին վանք Անկյուրիո» (էջ 119), «Ա. Կարապետի վանք Տարոնի» (էջ 178), «Արմաշու վանք» (էջ 227), «Ա. Նշան վանք Սեբաստիո» (էջ 276): Նորայր սրբազանը ամսագրի «Գրախոսական» բաժնում հրատարակել է նաև «Իրենեոսի «Նորագիտ հատումներ»-ը, գրախոսելով Ծարլ Ռեմոնի ուսումնասիրությունը, որ «կներկայացնե Իրենեոսի Ընդդէմ Հերձուածողաց և Ցոյցք» հորջորջված երկերուն հայերեն թարգմանությանը մնացորդները» (էջ 38):

Ամսագրի բանասիրական բաժնում հրատարակվել են նաև Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի կրթական տեսուչ Փայլակ Անթուրյանի հետևյալ արժեքավոր ուսումնասիրությունները. «Պատմություն Բարադամու Հովասափա» (հայերեն թարգմանության նորահայտ մի հնագույն ընդօրինակության մասին, էջ 25—28), «Պատմություն և խրատք Խիկարա Իմաստուն» (էջ 110), «Վարդան Արեւիկցու «Հաւաքումն պատմութեան» կորած աղբյուրներ (էջ 265), «Հայերեն նորայայտ ձեռագիր» (ձեռագրագիտական, էջ 216):

Ա. Հ. Սրճունի բանասիրական բաժնի «Մատենագրական» ենթաբաժնում Ս. Նորայր արքեպիսկոպոսի հսկողությամբ հրատարակել է «Նորին Թեոփիլոսի [Ալեքսանդրիայի Հայրապետի Դ. դար]» արի և քաջ վարդապետի, ասացեալ վասն Պահոց» (էջ 29—34), «Ի Սուրբ Բառասունքն և ի խորհուրդ. Պահոց քառասունորդաց» (էջ 114—118), «Ի կիճն պոռնիկ... յաւետարանական սլատմութենէ... որ արդարացաւ աւծմամբ իոյ[ւ]ն» (էջ 174—177, 222—226) բնագրերը:

Սիոնի-ի 1979 թվականի համարներում հրատարակվել են երեք խմբագրականներ՝

Ծաֆե արքեպիսկոպոսի ստորագրությամբ, որոնցից առաջինը (էջ 54—56) նվիրվել է Մայր Աթոռի Հաղորդագրության «Ս. Հոփսիսիմե վանքի պարսպի տակ անցյալ տարի գտնված հնադարյան դամբարանում կատարվող պեղումները հայտնաբերել են գերեզմաններ՝ աճյուններով գլխատված մարմինների» մասին:

Սիոն ամսագիրը այս առթիվ իր խմբագրականի մեջ սրտի մեծ գոհունակությամբ է ողջունում Հայոց Հայրապետի «ավետավոր հեռագիրը» և ընդգծում, որ Դ դարում, Տրդատ Գ թագավորի օրով, «Հոփսիսիմեյանց նահատակությունը եղավ անկյունադարձը հայոց քրիստոնեացումի պատմության և Վաղարշապատ մայրաքաղաքի մոտ թափված արյունը մաքուր կույսերում, եղավ արևելքը նոր հավատքի արշալույսին»:

Սիոն-ի երկրորդ խմբագրականը կրում է «Դպրոցական տարին» (էջ 98—100) վերնագիրը՝ նվիրված Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի կրթական-դպրոցական գործունեության:

Այս մտածումների լույսի տակ Ս. Ծաֆե արքեպիսկոպոսը ամսագրում հրատարակել է «Երեք շարունակական ակնարկ Ժառանգավորաց վարժարանի պատմության» (էջ 150—158, 199—206, 251—256), Ս. Հակոբյանց վանքի Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի մասին, 1843—1979 թվականներին, նշվելով նաև այդ տարիներում վանքում կատարված վարդապետական, քահանայական և սարկալագական ձեռնադրությունները:

Վերոհիշյալ հետաքրքիր ուսումնասիրության մեջ հոդվածագիրը մասնավոր կարելիություններ կապեցել է ամենապատիվ Ս. Եղիշե սրբազան պատրիարք Հոր տեղապահության և մանավանդ գահակալության տարիներին (1960—1979) Ժառանգավորաց վարժարանի պատմությունը, ուսումնական նոր ծրագիրը, դասախոսական կազմը, աշակերտության թիվը:

Ս. Եղիշե սրբազան պատրիարք Հոր գահակալության 1965—1979 թվականներին, Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի 27 շրջանավարտներ ձեռնադրվել են հոգևորականներ, որոնցից 24-ը՝ կուսակրոն, և երեքը՝ ամուսնացյալ քահանաներ:

Ամսագրի համարներում տպագրվել են նաև «Դպրոցական տարին» խմբագրականի հետ կապված ամբողջական և հետաքրքիր տեղեկություններ Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի, ինչպես նաև Ս. Թարգմանչաց երկրորդական վարժարանի մասին (էջ 124 և 130):

Սիոն ամսագրի 1979 թվականի երեք

հաջորդական համարների մեջ (էջ 146, 194 և 244) Ս. Ծաֆե արքեպիսկոպոսը ստորագրել է հետաքրքիր, շահեկան, «քիչ մը համարձակ» և որոշ հարցերում վիճելի երեք խմբագրականներ, «Եկեղեցական դասը» վերնագրով, որոնցով փորձում է յուրահատուկ կերպով «վերլուծել և մատնանշել» մեր օրերին սփյուռքի կյանքի մեջ «այն խոր փոփոխությունները» և «այլափոխումը Հայ Եկեղեցիին և անոր ծառայող հայ եկեղեցականության նկարագրին մեջ»:

Հոդվածագիրը նախ նշում է, որ 1915 թվականի Ապրիլյան եղեռնի օրերին Հայ Եկեղեցին նույնպես ապրեց իր արյունոտ Գողգոթան. «Զարնվեցավ Հովիվը և ցրվեցան ոչխարները»:

Եղեռնից հետո, Երուսաղեմում Ս. Եղիշե Դուրյան պատրիարքի, Անթիլիասում Ս. Բաբկեն աթոռակից կաթողիկոսի և Կ. Պոլսում Ս. Գարեգին պատրիարք Խաչատուրյանի գահակալության տարիներին սրտառույ ջանքեր գործադրվեցին անցյալի օրինակով և դաստիարակությամբ եկեղեցական նոր սերունդների հոգևոր և բազմակողմանի պատրաստության ուղղությամբ «և ազգային եկեղեցական նկարագրի ուրակով»: Սակայն, արձանագրում է Ս. Ծաֆե արքեպիսկոպոսը, «կես դար ետք, պետք է ունենանք քաջությունը խոստովանելու թե ոչ միև այդ երեք կեղծոճներն փոխարինեց Արմաշը և տվավ խումբեր հոգևորական առաջնորդող դեմքերու, որոնք մեր ժողովուրդը հաջողեին պահել իր հավատքի ամրության, իր կրոնական բարեպաշտության և իր ավանդական սովորություններու ժառանգության մեջ...»:

Նույն ձևով հասկնալ Հայ Եկեղեցիին և իր ինքնությունը, երեկ և մանավանդ այսօր... Նույն ոգիով ըմբռնել Եկեղեցիին առաքելությունը այսօրվան հայ աշխարհի ցրվածության մեջ...:

Հոդվածագիր սրբազանը «Եկեղեցիին այս աղքատացումը» վերագրում է ոչ այնքան որպես «արդյունք՝ լոկ մեծ աղետին», ոչ այնքան «արդյունք՝ հոգևորական ուսուցիչներու պակասին», որքան «հետևանքը այն խոր փոփոխության որուն ենթարկվեցավ մեր Եկեղեցիին նկարագիրը: ...Կրոնական հաստատություն մըն էր... եղավ ազգային հաստատություն մը, հավատքի ուժը շփոթած ավանդական ձևականություններու հետ», Եկեղեցին «ծիսակատարության արվեստի գեղեցկությամբ շփարված անկեղու մարմին մը եղավ...»:

«Եկեղեցիին նկարագրի փոփոխությունը այլափոխեց նաև եկեղեցականին դիմագիծը: Ան վերածվեցավ Հայ Եկեղեցի կոչված

ազգային հաստատության, ազգային մարմիններու թոշակավոր պաշտոնյայի»...

Տ. Շահե արքեպիսկոպոսի այս «համարձակ» մտորումների հիմնական միտքը այն է, որ մեր օրերին սիյուրքում մանավանդ վերջին 80 տարիների ընթացքում, Հայ Եկեղեցին «ազգային դերը կհակադրվի քրիստոնեական վարդապետության» և Եկեղեցիի դերի և առաքելության «հիմնական այս աշխարհայությունը կսկսի Եկեղեցիին աշխարհականացումն և ավելի կխորանա Եկեղեցիին քաղաքականացումով» (Ընդգծումը սրբազանինն է):

Սիոն ամսագրի յուրաքանչյուր միացյալ համարի վերջին էջերը, «Սուրբ Յակոբի ներսէն» վերնագրով, նվիրվել են «Եկեղեցական-բեմական» լուրերի, որոնք կարդացվում են մեծ հետաքրքրությամբ: Այդ լուրերը կազմում են սուրբ Աթոռի ժամանակակից պատմությունը, վանական կյանքի հետաքրքիր առօրյան: Չափազանց ուրախալի է, որ սուրբ Աթոռի երեց և երիտասարդ «զինվորյալ միաբանները» ոչ միայն արիությամբ և պատվով պահում պահպանում են ազգապարծանք Սուրբ Տեղյաց հայկական դարավոր իրավունքները հանապազօրյա եկեղեցական արարողություններով և անձանձրույթ ժամապաշտությամբ, այլ նաև միշտ կենդանի են


պահում եկեղեցական բեմը, իրենց ոգեշունչ, «Կենաց Բանին» քարոզներով, ամեն կիրակի և տոնական առիթներով: Սուրբ Աթոռի միաբանները իրենց սրտագին և աթոռանվեր ծառայությունն են բերում վանական և կրթական ծառայության ճանապարհին:

Մանավանդ երիտասարդ միաբաններից ոմանք սիյուրքի զանազան թեմերում կատարում են նաև հովվական-հոգևոր շնորհակալ առաքելություն և ծառայություն:

Սիոն ամսագրի 1979 թվականի վեց միացյալ համարները ունեն նաև «Յիսուն տարի առաջ» «Սիոն-ի լուսաբանությունները», «Այլ և այլ» հետաքրքիր ենթաբաժինները, որոնք նույնպես կարդացվում են հարաճուն հետաքրքրությամբ:


Ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարքի զահակալության 20 տարիների ընթացքում, նրա անմիջական ղեկավարության ներքո, 1960—1980 թվականներին, հոգևոր, աթոռանվեր, կրթական, հրատարակչական, շինարարական բազում «Գրոց արժանի, արության գործեր» կատարվեցին սուրբ Աթոռի մեջ, որոնց կենդանի, հետաքրքիր, ամբողջական և ժամանակակից տարեգրությունն են հանդիսանում Սիոն ամսագրի էջերը:

Ա. Հ.





ԺԶ դարի սուրբ խաչքարի ստորին մասում Պատարագի և Քրիստոսի ծնունդը: խաչքարն ինչ-
 ինչ Պատարագի, Մանգե և Թերակար: խաչքարը բերվել է ՄԱՅՐ ԱԹՈՐ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՉՈՐ
 (ՉՈԹ) ԲՆԱԿԱՎԱՅՐԻՑ:



ՆՇԽԱՐՆԵՐ ՈՐՈԳԻՆԵՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ*
Բ

1»

ԽԱՒՍՔ ՈՐՈԳԻՆԵՍԻ: ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Բանք աստուածայինք ամենայն արդիւնագործք են և շահաւոր և ի ձեռն քաջաց և առաքինեաց ցուցանի աշխարհի գոչողական ձայնի՝ հարթ և կազմ, զսկիզբն և զմէջ և զծայրն, [բոլոր]րովին յերեսս բերելով լուսա-
1» [փայլ] յայտնական տեսիլ, // գոր այժմիկ մեծն Մովսէս արեգակնաբար ծա-
ւալեցոյց ի միտս մեր բան լուսափայլ առ ծնունդն Յակոբայ: Յուդա լաղ-
բել[ր]ն կենարար բխման, ի ծարաւի և ի մեռեալն, զայրն Քանանու տալ
մասն կենդանութեան և մանաւանդ առնուլ զմեռեալն և խառնել ի կեն-
դանութիւն: Քանզի ասէ ընդունակ խոստման Արքաիւն, թէ «քեւ օրհնե-
ցին ամենայն ազիւնք»¹: Եւ առ կին ի դստերացն Քանանու, և եղեն երեք
որդիք, և ոչ ոք ընգալաւ մասն բարութեան: Մանաւանդ երկուքն յոյժ չարու-
թեամբ սատակեցան մինչ ոչ ունի յայտնութիւն առ ի տեսութիւն մեր //
2» աչացս: Բայց ո՞չ այսպէս և առ Աստուած է իմանալ, այլ առ հասարակ
բոլորքս: Որպէս արեգակն լոյս է /// աստուածայինն ի լոյս է Աստուծոյ, և
աներևոյթ մերում տեսութեանս՝ եղեալքս և լինելոցս: Քան մեզ Աստուծոյ
յայտնի է զերկին և երկիր՝ գոր կոխեմքս, և որք գեր ի վերոյ կոնքածն տա-

* Ծարուակված «Էջմիածին» ամսագրի 1979 թ. համար Բ-ից:

Հրատարակությունը՝ Եզնիկ քահանա Պետրոսյանի և Հայկազուն արեղա Նաչարյանի:
Այս հատվածը, որ Մենդոց ԼԲ 6—19 հատվածի մեկնությունն է, հրատարակվում է
մեզ հասած միակ օրինակից՝ Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
№ 8086 ձեռագրից (Էջ 1ա—9բ), գրված 1371 թ.ին:

Հիմնականում տեքստը պահպանված է նույնությամբ:

Ուղղված է «է»—«ե»-ի, բառալերջի «յ»-ի և «ա»-ի ուղղագրությունը: Հատուկ անուն-
ները պահպանված են նույնությամբ:

ԾՆԹ. Ձեռագրում «ա»-ի փոխարեն գրված է «օ»: Այսպես՝ հետևեց փխ. հետևեցաւ,
առօղ, փխ. առաւիղ, թագօրն, փխ. թագատրն:

Տեքստում ընդգծված բառերը երկրաչափական գաղափարագրերի կամ տղագրությունների
վերծանություններն են:

Հիմնականում տղագրությունները տարված են գլխագիր սև տատերով:

Տեքստին կից տրված են ձեռագրի թյուրընթերցման հատվածների լուսապատճենները:

¹ Հմմտ. Մենդոց ԻԲ 17:

- ճարին Աստուծոյ, յառաջ քան զխորհել և զիմանալ յանդիման տեսանի: Տի՛նայ յառաջ քան զլինել աշխարհիս ընդրեաց զվեհսն ի վատթարէն, այսր աղագաւ ոչ արար արժանի գաւակագործել խառնում չարի: Էր և Անան ըստ իրում չարութեան արձակեալ ի տերուն պատգամն, պատմեալ խաչ-տառակի: Եւ իրովի իսկ հր // ածեշտ տունալ ի խմորոյն կենաց պատա-
 2բ հեցաւ դառն մահու: Իսկ Թամար, որ էր իգական բնութիւն, արու գտեալ յառաքինութիւն հետևեցաւ երջանիկ և ստենչալի օրհնութեան, զոր տեսանէր հոգոյն աչօք: Եւ հայրապետս աստուածաբաղաքս զնոսա գործեալ, յառա-
 քինութիւն լինելուածովք առաւել քան զերկինս զարդարուն և պայծառ և զԱստուած ի ներքս բնակեալ ոչ մնաց ի յապաղումն հեղգութեան, այլ շու-
 տաբար հնարս ջանայր գտանել, որով կարասցէ ի մայրաքաղաքն հասանել և զբնակեալ թագաւորն ի քաղաքն տեսանել և գիրկընդիստն իսկ ընդ մմա
 3ա համբարել: Ոչ մնա լսելով մմա, թերևս // գիտաց զանարժանութիւն, որպէս առ իր խնդիրն թողեալ զսուքն և զարդարեալ իբրև ի լկտի կերպարանս: Եւ անցեալ մտեր յանցս Յուդայ ի երթալոյ ի յաշն հովտան հանդերձ ի կտորս ոչխարաց: Խոտորի առ մմա Յուդա իբրև առ բոզ և խոտանայ կապէնս ու մի այծից, և գրաւ խնդրէ՝ գինդ և մատանի և գաւազան: Արդ, պարտ է զխնդիրս զայս յԱստուած ընգեանով և մովալ խուզել. երկասիրու-
 թեամբ աղօթիք: Նախ ասել, եթէ ընդէ՛ր ոչ ծանեալ Յուդա, երկրորդ՝ թէ ընդէ՛ր բոզ անուանեցաւ, երրորդ՝ թէ ընդէ՛ր ու կապէնս, և չորրորդն՝ թէ
 3բ ընդէ՛ր երիս առնու գրաւականս, հինգերորդ՝ // գինտ, մատանի և գաւազան, վեցերորդ՝ ընդէ՛ր դարձեալ այրութեան հանդերձ զգեցաւ:

Առաջինն՝ զի ծածկեաց զայրութեան կերպարանս զարդարանօքն առ ի չճանաչել թէ Թամար իցէ: Ունի իմն և այլ խնդիր, փափագման վայրս իբրև խտրոց ի մէջ անգաւ առ ի ճանաչելոյ զնա, թէ ո՛չ իցէ, զի թէ ի բա-
 ցէ տեսանելով՝ ոչ ճանաչէ: Իսկ յարելովն ի մա ընդէ՛ր ոչ կարաց ճանաչել ստուգիս: Այլ ինձ աչպէս թուի, թէ ի տարայցուցէն է իմանալ: [—]² աչն առ Յակոբ: Նա ի ձև ուլենեացն և սա ի ձև զարդու թէպէտ և կերպարանացն
 4ա իբրև ձայն Յակոբայ բաղբաղէր այլ զարդն իբրև զուլենիսն վրիպեց // ոյց³, մանաւանդ թէ ոչ վրիպումն իսկ գործ կատարիր: Այլ ըստ արժանատրութեան իրքն յօրհնէին: Աստ և այլ իմն տարացուց է իմանալ. որպէս ի դրախտին չար օձն իբրև պատրուակ արկեալ և խաբեաց զկինն և սպան և ի բոլոր աշ-
 խարհ տարածեցաւ մահ, այնպէս Թամարայ զգեցեալ զմերկացեալն Եւայի և խաբեաց ոչ զՅուդա, այլ զմահ սպան և զկեանս գիր ըմբռնեաց: Այլ պարտ է յայտնապէս իսկ ասել. յայրութեան էր Էկեղեցի և տրտում: Եւ տեսեալ զայն որ ի Յուդայէն ծագեաց, յոյժ ուրախ եղև ըստ ասացելում[ն] մարգարէին. «Ու-
 4բ րախ լեր ամուղ, որ ոչ ծնանէիր»²:// Եւ դիմեալ արեգականն արդարութեան, զարդարեցաւ առաքինութեամբն յիրմէ: Եւ մերձենալով ի մա ի ձեռն առա-
 զանին մաքրութեան, որպէս և փողն [Ս.] Հոգւոյ Պօղոս վկայէ ասելով. «Որ ի Քրիստոս մկրտեալ էք, զՔրիստոս զգեցեալ էք»³, և «ուր առաւել եղեն մեղքն, առաւել յաճախեցին շնորքն»⁴:

Երկրորդն՝ եթէ ոչ վայրասպար կոչիր բոզ: Քանզի արդարև իսկ Քա-
 նան բոզ առ հոմանիսն. ևս վաղ փոխէր առ կոտսն: Քանզի կին պրոնիկ և

² Եսայի Ե՛ր. 1:

³ Գալաթ. Գ. 27:

⁴ Հոմ. Ե. 20:

²²—ձեռագրում կա անվերձանելի գաղափարագիր:

²³—ձեռագրում վրեցոյց:

յաղտեղություն էր և զայս մեզ մարգարէն հաստատապէս ցուցանէ առ ///
ողաւ և առ Հեղիբայն: Բայց այս ամանությունն է բան, իսկ առ ճշմարտությունն
500 ոչ այսպէս, այլ զարդարեալ յառաքինությունն // ոչ ևս բոզ, այլ կատարեալ
համեստ ի հարսնության Բրիստոսի:

Երբեակն է՝ ընդէ՞ր կապէնք ունէ, և այս իրաւաբար յորժամ բոզ
անուանեցաւ ու կապէնս, իսկ յորժամ ոչ բոզ, ոչ ևս ու. անուամբ բոզ և
անուամբ ու, այլ արդ ոչ ևս բոզ ու կապէնս, այլ երեք գրաւականքս:

2որբեակն է բանս: Սոքա բերեն զճշմարիտ կատարեալ բարին,
զսկիզբն և զմէջ և զկատարած: Նախ վկայք գոյ ի դէպ ժամանակի, և
եղիցի տեսեալ զմիակն ընգալաւ զերրորդությունն կատարեալ. ոչ ընդունի
505 գոյն ձախակողմանն, իբրև եղև ամուսին Բրիստոսի: Այլ ընդունի ըստ եր-
րորդ բանին՝ զգինդն և զմատանին և զգաւագանն՝ զայն զոր կորուսեալ էր
առաջին կուսին. զգինդն լսելով օձին, զի ունկան զարդ է, և զմատանին և
զգաւագանն ձգելով ի ծառն չհրամայել: Վասն զի մատանի և գաւագան
ձեռացն գործի և զարդ էառ հոգւոյ լսելումն և ժառանգել զպատրաստեալ
արքայությունն ի սկզբանէ, և մատանի համարձակաբաց լինել երկնային
գանձուն: Եւ մանաւանդ ըստ առակին. «Դիք զմատանին ի մատինն անոռ»
ունելով զմատանի արքունի, ամենայն արքունիքն անոռ են: Եւ գաւագան
զիշխանական բերել և տի՛նա թագաւորական է կամակարություն: Եթէ ևս
յայտ բերից զբանս գիտնաւ ետիք Գաբրիելի, զոր եբեր կուսին. Հոգին
600 սուրբ // եկեացէ առ քեզ և զարությունն բարձր[ելոյն]՝... և մատանի և գա-
ւագանն անյնպէս յայտական կայ առաջի խաչն տէրունական, որ զերկուց
բերէ ձև՝ մատանի՝ զի սովաւ եբաց առագակն զորախտն, և գաւագան՝ վա-
նել զթշմամին և տէր կացուցանել ի վերայ, քանզի յերկուց փայտից մա
գործեցաւ կանգն /// աւոր և կողմնակի զմատանոյ և զգաւագանի՝ բերել
կերպարան:

Իսկ վեցերորդ բան՝ եթէ ընդէ՞ր այրության կերպարան զգեցաւ. այս
օրինակ է ճշմարտութեանն: Հնարս գտանէր որպէս զի մարթաւցէ զգողա-
ցեալն արժանաւորութեամբ անել յերևոյթս ի դէպ ժամանակի. իսկ հոգի ոչ
605 անյնպէս, այլ // միշտ է զարդարեալ առաքինութեամբ: Բայց եթէ առցէ
զկերպարանս խումարիութեան, այլ ոչ այրության զարդարեալ ի Բրիստոսէ
մերձեալով առ մա և խոնարհութեամբ ընգալեալ առաւել ևս սլալծառացու-
ցանէ օր ըստ օրէ:

Եթեւերրորդ բան, որ է առաւել զարմանալի, եթէ հրաման տուեալ Յու-
դայի, եթէ այրեցի Թամար հրով: Զի ազդ եղև, թէ յղի է և ի՞նչ իւր կա-
րացէ ապրել: Ասէ անօրէն պետք յառաջ ասացեալ վկայից: Երբեակ թիւն
ըստ օրինաց տայ տանել զգինդն և զմատանին և զգաւագանն, որպէս ասէ
700 գրինն եթէ ի ձեռն երկուց և երից հաստատ // եցի ամենայն բան: Իսկ սա
յառաջ քան զգրեալսն ինքն ուսոյց բանի ընգալաւ զբարեպաշտությունն: Ե-
րանելին Յոր եթեամեայ ցաւքն. զեթեադարեան վիշտս կրեալ բերէ ի դէմս
Բրիստոսի և յութեակ ամսն զդարձրն յառողջությունն, որ անճառ տնօրէնու-
թեանն է խորհորդ: Զվերագործությունն անգործողին հրաշագրէր բանի
զիւրությունն, որ սովեցելոցս ի Տեսնէ ստուգի կեանս հացին: Եւ յուս
յորն Յորայ Ռ սբանչելագործեալ յազգաց Պ. յորն մարմնացելոյ Բանին. և
եկին ուսել և ըմբել ծանաւից ընդ մմայ. Պ սրբոցն ի տան Աստուծոյ ծա-


⁵ Դով. ԺԵ 23:

⁶ Դով. Ա 35:

- 7^բ նուցել // ոցն գՔրիստոս և վայելելն և ուրախանալ ի զոհս բարեկամաց հրամանաւն Աստուծոյ: Պ տերունական մարմինն, որ պատարագ սրբութեան, երջանիկ բարեկամացն եղեալ և փրկութիւն բոլոր աշխարհի բարոզեալ: Իսկ նպաստ ընծայիցն Յոբայ մէն մի որոջ և չորէքորամեան սատերն անգիր զորս առ աստուածաբանն է նուիրել իւրաքանչիւր ոք. Պ մէն ընդ միոյ լինելով. զինքն ընծայեցէ. Բ սո:րբ որոջակքն: Բժ: պատարագելիք, այլ և զսկիզբն աճեցելոցս ի Քրիստոս հօտից: Իսկ չորէքորամեանն անձնայաւոր
- 8^ա մարդկութիւնս չորէքրիստեան անգիրն մինչև // լուացեալն վերջստին զգեղեցիկ պատկերին զգիր ոչ ոք ունէր. այլ ըստ լուանալն է ի մաքրելն տպաւորի գիրն և բոլորի պատկերն ի Քրիստոս և ի չորէքծագեան աշխարհիս Աւետարանն ի չորից բարոզի և ծնունդքն բազմատարած արջառոցն հր[է]ից և իշուցն հեթանոսաց և ուղտոցն արաբացոց և սկիւթացոց, որ յամենայն ազգաց եկին հրաւիրանաւն և օրհնեցան ի Հօրէ և բազմացան լաւ հօտք ի Քրիստոս և ըստ հազարաւոր լուծս է զանցն սուրբ առաքեալքն լծեցան ի Տեառնէ հազարաւորօք յընդիրս և եղին զակաւս**** ի մարդկութեան դաշտիս և սերմանեցին զբանն հասար // ակաց, յոր սակս դաշտք մեր լցցին պարարտութեամբ, որ գեղեցիկ բուսոցն է վերածմունք, որով առաքինականացն հովիտք բազմացուցին զցորեան և կենօք Հոգոյն մեծ աղաղակ ձայնի օրհնէին գՔրիստոս: Այլ եւթն ուստերքն Յոբայ կրկին գան ի տեսման հոգիով. զի չև մարդիկ յանսուտն թուին, այլ եւթնաշրջան կենացս կենասիրին զսինքն ի լաւին: Եւ երեք դասերքն ի գեղեցիկս զովեալք, զերից որոշումն ժամանակաց տրամադրէ իսկ զբանն և այժմուս և ի հանդերձէ-
- 9^ա լումն ըստ երից պարզիցն, որ ի Սողոմոնէ, և որով երիւք շարժի***** և ի // չորրորդին որ ինչ կատարածին ասի գործ: Բայց զգեղ երից անուանցն նոցա, որ ի Հօրէ նոցա հրաշագրեցաւ տեսցուք աստանօր: Զմիւսն տիւ, զմիւսըն տաշխ, զմիւսն ամեթեղջեր, որ իմանալիք լեալ մեզ բանն գիտէ ի դասեր Սիոնի լուսաւորեալ: Տիւն ի լոյս Երուսաղէմի: մակագրի կերպ ծնընդական իմոյ: Իսկ միւսն անուշահոտութիւն հոտոցն տաշխն առ Սուրբ Հոգի ուղղագրի, ուստի մաքուր է գործականն, հոտ անոյշ գՔրիստոս ինքն ունի, այր և գլուխ: Իսկ յոլովաբան եղջեր մաղթեա մեզ զկուսականն տարբերէ դէմս // ուստի գեղջիւրն փոխան անտի գոյաւորեցաւ մարմինն այլ ևս զվերին իմանալին Սիոն զորս Քրիստոսի է անդ. բնակելն ամենայն սրբովք ի փառս և զծնունդս ծննդոց տեսեալ երանելոյն, և զամս երկիրոց և քառասնից լցեալ և զկնի հրաւիրացն հասեալ և չորէքտասնեկօք զխորհուրդս պատուիրանին յինքն արձանագրեաց: Եւ երկեակ չորեկաւքն զութսն բարդելով որ է վիհ միութեանն ի Քրիստոս նմա փառք յաւիտեանս յաւիտենից. զանպիտան գծողս զՄկրտիչ քահանայ յիշեա՛ ով, սո՛րբ ընթերձող և Աստուած զքեզ յիշէ:

****—արդյո՞ք պիտի լինի՝ զսուակս:

*****—նուագրում կա անվերջանալի գաղափարագիր?:



ՄԻ ՔԱՆԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՐՅՈՒՆՈՏ ՕՐԵՐԻՑ *

Հայ զինվորն ալ այն սև բաղդին ենթա-
կա եղած կան: Արդեն ասոնք ամենքն ալ
զինաթափ եղած ճամբաներու շինության
կաշխատացնեն ադ կողմերը: Ստույգ տե-
ղեկություն ունենք, որ Կարնո նահանգին
հայ զինվորները, որ Կարին և Երզնկա
ճամբուն վրա կաշխատացնեին, ամենքն ալ
ջարդված են Տիգրանակերտի նահանգին
զինվորներով: Տիարպեքիր—Ուրֆա և
Տիարպեքիր—Խարբերդ ճամբաներուն վրա
ամբողջովին կոտորված են: Խարբերդեն
մեկ անգամեն միայն 1800 հայ երիտա-
սարդներ իբրև զինվոր ճամբա հանված են
դեպի Տիգրանակերտ, հոն աշխատել տա-
լու համար և Արզնիի կողմերը ամենքն ալ
կոտորված են: Մյուս կողմերեն տակավին
լուր չունենալով, բայց անոնք ալ անտա-
րակույս նույն բաղտին են ենթարկված:

Զանազան տեղեր բանտերու խորը մնա-
ցած քանի մը այրեր հետզհետե կախաղան
կհանվին: Կեսարիա, Խարբերդ, Սեբաս-
տիա, Կարին, Ադանա և այլն, վերջին մեկ
ամսվան մեջ քանի մը տասնյակ հայեր
կախաղան հանված են: Ծառ տեղեր հայ
ժողովուրդը իր կյանքը փրկելու համար իս-
լամության դիմեց, բայց նախորդ մեծ կո-
տորածի ատեն եղածի պես դյուրությամբ
չընդունվեցան այս դիմումները: Սեբաստիո
մեջ իսլամներու դիմողներուն սա պայման-
ները առաջարկվեցան. մինչև 12 տարեկան
իրենց զավակները հանձնել կառավարու-

թյան, որ որբանոցները դրվին և իրենք
հանձն առնեն իրենց տեղեն ելնելով կա-
ռավարության ցույց տեղը բնակիլ:

Խարբերդի վիլայեթին մեջ այրերու իս-
լամանալը չէ ընդունված, իսկ կիներու
մուսլամության դիմելու ատենը, զինքը ա-
մուսնության առնող իսլամի մը պատրաստ
գտնվելը պայման դրված է: Բազմաթիվ
հայ կիներ իրենց ծծկեր մանուկներով ինք-
զինքնին Եփրատի ալիքներուն հանձնած
են կամ իրենց իսկ տուններուն մեջ ինքնաս-
պան եղած են: Եփրատ և Տիգրիս հազա-
րավոր հայերու գերեզման եղած են:

Սև ծովի եզերքի քաղաքներուն մեջ՝
Տրապիզոն, Սամսոն, Կերասոն և այլն, իս-
լամացողները անմիջապես// հեռացուցած
են ներքին գուտ իսլամական վայրերը:
Ծալին-Գարա-Հիսար զինավարժության և
տեղահանության դիմադրած ըլլալուն հա-
մար, թնդանոթի բռնված և քաղաքի ու
դաշտի բոլոր ժողովուրդը չարաչար կո-
տորված է՝ իր առաջնորդովը միասին:

Վերջապես Սամսոնեն սկսյալ Սդերդ և
Տիգրանակերտ, այսօր ոչ մեկ հայ մնացած
է, մեծագույն մասը ջարդված, մեկ մասը
առևանգված և փոքր մաս մը՝ իսլամացած:

Պատմությունը երբեք չէ՝ տեսած, չէ՝
պատահած այսպիսի նախահիր մը, որուն
համար հիմա սկսած են սուլթան Համիտի
ժամանակները մեր երջանիկ ժամանակնե-
րը համարել: Վերջին ամսվան մեջ իմա-
ցանք, որ մեր զավառական առաջնորդեն
Անանիա Ծ. վ. Հազարապետյան՝ կախա-
ղան հանված է հոն առանց նույնիսկ

* Ծարուհանված «Էջմիածին» ամսագրի 1980
թվականի № 7-ից:

թյուն մը հատուկ պաշտոնով և իր ընտանիքը տեսնելու պատրվակով Պոլկարիա անցած ըլլալով, մեզ ներկայացավ և ավելի մանրամասն տեղեկություններ հաղորդեց գավառի մերազանց տեղահամակած դժբախտներու դառն կացության մասին, որոնք անդորության ճիրաններուն տակ օգնություն կաղաղակեն:

Հիշյալ պաշտոնական անձնավորություն հայտնեց թե՛ եթե նյութական օժանդակություն չփութացվի Էսկիշեհիրեն մինչև Գոնիա, Էրեջլի, Պողանթի, Տարսոն, Ատանա, Հալեպ, Ջոր, Ուրֆա և մինչև Մուսուլ և Պաղատ եղող հարյուր հազարավոր անմեղ տեղահամակած մեր հայրենակցաց, գիտցե՛ք թե, ըստ, մեկ երկու ամսեն, ձմեռն անցա՛ց իսկ, սովամահ պիտի ըլլան:

Այս մահաարտու տեղեկությանց վրա էր, որ եղած հանձնարարությանց համաձայն հեռագրեցի Ջերդ Վեհափառության գոնե 10,000 (տասը հազար) ոսկի հեռագրով փութացնելու մեզ՝ Պոլիս հղվելու համար, զի պատրիարքարանի միջոցները, նույնիսկ բոլոր ավանդ դրամները սպառած են:

Ջայսուսիկ հաղորդելով Ջերդ Վեհափառության և ակնդետ սպասելով ձեր բարձր հրահանգաց կմնամ միշտ Ջերդ Վեհափառության և տարաբաղդ ազգիս անձնվեր առաջնորդ պոլկարահայոց

Ղևոնդ եպ. Դուրյան:
(Էջ 47—48):

7. Բուդղարիայի հայոց առաջնորդ Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանին ուղարկած տեղեկագրությունը:

օգոստոս 25/7 սեպտեմբեր 1915
Պատմեն

Գերաշնորհ Տ. Ղևոնդ եպիսկոպոս
Դուրյան
Առաջնորդ պոլկարահայոց
ի Ֆիլիսպե

Գեր[աշնորհ] եղբայր,
Օգոստոս 2 թվականով մամակս անշուշտ ստացած եք: Անկե ի վեր ոչ մի միջոցարական և ապահովիչ լուր ունիմ տալիք: Ընդհակառակը, եկած լուրերը լիովին կհաստատին մախորդ մամակիս պարունակությունը:

Հալեպեն վստահելի աղբյուրն կգրվի հուլիս 19 թվականով. «...Տիգրանակերտ գաղթողներեն լուր չկա դժողք գացողներու պես: Այնթափի և Քիլիսի գաղթն ալ ազդարարվեցավ և այս գիշեր 51 ընտանիք Այնթափեն հասան: Այս կրկին քաղաքացի հայ բնակչությունը Դամասկոսի Հավրան

գավառը կտեղափոխվի: Այս գավառի բնակչությունը կհեռացվի արաբներն և դյուրզիներն կթաղկանա»:

«Ուրֆայեն ալ, թերևս Տիգրանակերտցի, ուր հարյուր հոգի հասնելու վրա են: Քղիեն, Խարբերդեն, և այլն բերվածներն Րաս-յուլայենն ուղղակի Տեր էլ Ջոր կղրկվին: Հիվանդությունը համաճարակ է, երկիցս դեղ և մասստ ղրկվեցավ, սակայն կաթիլ մը օվկիանոսեն: 20,000-են ավելի են այդ գավառի գաղթականք: Հալեպի մեջ համախրոնված են ավելի քան 15,000 և օր ըստ օրն հեղեղի պես կհասնին»:

«Անդթությունը հիվանդության չափ կոտորած կընե. ամեն կողմ հաց կաղաղակեն: Կամ Քրիստոսի հրաշագործ գորությունը և կամ թագավորական գանձ պետք է կես միլիոն կիլիկեցիք ապրեցնելու համար: Թողունք Ամերիկայի և Եվրոպայի մարդասերները, ի՞նչ կընեն տարաբնակ, եգիպտաբնակ և ամերիկաբնակ հայերը. ժամանակ է, որ գաղթականաց հոսանքի պես մասստի հոսանքներ կազմվին. աշխարհ տեսած չէ և չպիտի տեսնա այսքան արհավիրք, այսքան թշվառություն և կարոտություն...»:

«Կոտորած, բռնաբարությունը, երկսեռ մանուկներու անհամար առևանգությունը, գեղատես կանանց, հարսներու և կույսերու վաճառում, մինչև անգամ՝ երեք մեծիդիեի, չհամարվեր, չբացատրվիր ...Խորհուրդ տվեք, մե՞նակ եմ, խեղճ չմնաց գլուխս, արտասուք չմնաց աչքերուս մեջ, զգացում չմնաց սրտիս մեջ: Չորս կողմն, գիշեր և ցերեկ մերկություն, անթուրեմն մվաղում, լաց ու վայնասուն...»:

Ստորագրություն:

Իսկ հուլիս 28 թվով կգրվի մույն աղբյուրն «...Ամբողջ ազգը բնաջնջվելու վրա է, որքանոց չմնաց, Տեորթ Եոլի որքանոց՝ կառավարական պետքերուն հատկացված է ու որբերը ցրված: Հաճընինը՝ վաղուց փակված է, Հասան Պելիլինը՝ մասամբ: Առայժմ կա Մարաշինը՝ 100 երկսեռ որբերով, բայց այն ալ պիտի փակվի, քանի որ Մարաշի հայերն ալ պիտի ցրվին և արդեն ազդարարված է: Այնթափի և Քիլիսի գաղթը սկսած է: Այնթափեն եղած առաջին երկու կարավանները բոլորովին կողոպտված էին մամավանը՝ երկրորդը, որ հարձակման ենթարկված էր և բազմաթիվ սպաննված և վիրավոր ուներ: Եթե միայն Կիլիկիո գաղթումը ըլլար, 400,000-են ավելի պիտի ըլլային թշվառության մատնված հայերու թիվը, բայց արևելյանը՝ մահաճանքի հարյուր հազարավոր այրիներն և երկսեռ մանուկներն զատ, Թամարգայեն և Եոզղա-

տեմ թագմաթիվ կարավաններ եկան Հալևալ, ճանապարհին ամենքն ալ կողոպտված են, հետևաբար ամենքն ալ անոթի են և կատարությունը խիստ անտարբեր է այս անոթության առջև: Ինչպես նախորդներով, ներկայիս ևս կկրկնեն, աղետքին առաջին առնել անկարելի է. դիմում, աղաչանք, լաց ու ողբ, ո՛չ միայն անգոր են, նաև ծաղր ու ծանակ ու ծիծաղ կպատճառեն, միայն աշխատելու ենք ողջ մնացածներն ապրեցնելու: Հազարավոր մերկեր ու բորիկներ կան, ներսերեն եկած այրիներու ոտնամաններն անգամ կողոպտված էին, ամենքն ալ մաշված, վիրավորված և ուռած աչքերով հասան: Օրական մահերու թիվը անհաշվելի է: Անսահման գումարներու պետք կա՝ հացի, զգեստի, դեղի, բժշկի և այլն: Եթե պահեստի գումարներ կան, ի՞նչ անուճով ալ ըլլան, պետք է այս նպատակով հատկացնել...: Ուրֆայի համար ալ արյունոտ լուրեր սկսան հասնիլ. առաջին անգամ 42 երևելիներ, որոնց մեջ պատվելիներ և քարոզիչներ, նաև առաջնորդը՝ նահատակված են... անկե վերջը 17 հոգիի համար ալ ըսվեցաւ: Դրամ հասուցեք, Տեր Զորի տասնյակ հազարավոր հայերը անոթություններ և հիվանդություններ կշարդվին:

Հ. Գ.

Այս րոպէիս ստույգ տեղեկություն առիմք՝ թե Մարաշէն 15—45 տարեկան բոլոր այրերը Այնթափ դրկած են դեպ ի Տեր Զոր փոխադրելու համար, կվախցվի, որ անոնց կյանքը վտանգի կենթարկվի: Երեկ երեկո ալ Սվազի և Կարնո շրջակայքը գտնվող գյուղերեն 2000-ի չափ այրի կիներ և որբ տղայքներ հասան հոս: Տղայոց տարիքը 11-ը չանցներ: Ծանապարհին առեկանգված աղջիկներ ու տղայքներ անհաշվելի են, ասոնց ապրելուն հնարավորություն ու հույս չկա, անհրաժեշտ դարմանի կկարոտին:

Ստորագրություն

Սամուսացի ճանապարհորդ հետևյալը պատմեց մեզի անձամբ:— Բնիկ Սամսոնեն եմ և Չարշամպա գիւմրական ծառայություն կկատարեի: Հոն լսելով, թե ամենուրեք հայերը տեղահան կըլլային և ճամբուն վրա զոհ կերթային չեթիներուն հարձակմանց, և աղջիկները ու կիները կառեկանգվին և կլկվին, չարշամպացիք սարսափած որոշեցին իսլամանալ առժամանաբար: Կատարությունը նախ ընդունեց և պաշտոնական գործողությունը կատարվեցան, բայց հետո ամենքն ալ տեղահան ըլլալով դեպի Մուսուլ քշվեցան հուլիսի

սկիզբը: Ես Սամսոն փախա ընդանիքիս բով: Հոն հրամայվեցաւ հայոց վտարումը: Տեղացի երևելիներեն 120 ընտանիքի չափ իսլամության դիմեց, սակայն չընդունվեցաւ: Առաջնորդ Համագասպ վարդապետ իսլամացումի այս միտումը տեսնելով, հայտարարեց. «Ով որ քրիստոնյա մնալ կուզե, թող ինձի հետևի»: Եվ առաջին առիթով երկու քահանա և 400 տուն մեկնեցան դեպի Մուսուլ: Վերջին խումբը հուլիս 7-ին մեկնեցաւ, որուն մեջ կգտնվէի ես ալ: Ծամբուն թշվառությունն ու տառապանքն աննկարագրելի են: Առաջին օրերուն իսկ ծերեր և գերեր ճամբուն վրա մնացին, մայրեր իրենց մանկիկները լքեցին: Ոստիկաններու մտրակը շատերու մահվան պատճառ եղաւ: Ութ օրեն հասանք Ամասիա, ուր ոչ մեկ հայու հանդիպեցանք: Քանի մը իսլամացած հայ ընտանիքներ թեև ժամանակ մը մնացած են, սակայն հետո պատահած ահռելի հրդեհին պատճառ նկատելով, անոնք ալ վտարված են: Ժողովուրդին 100ին 30-ը արդեն փչած էր երբ հասանք Եվդոկիա: Հոն ոչ մեկ հայ մնացած էր, ոչ ալ՝ Սեբաստիա: Իսլամի անցագիր մը ձեռք ձգելով, Սեբաստիայեն ճամբորդեցի դեպի Պոլիս գիւմրական սպայի մը և Երզնկայեն եկած Գատրին հետ: Գատրն հետևյալն պատմեց. «Երզնկայի կողմերը հայոց դեմ գործված արարքները ո՛չ գուրանը կընդունի և ոչ ալ շերիաթը: Երզնկայի կառավարիչ Մեհմետ պէյ հայերը կողոպտելով 50,000 լիրա (ոսկով) տեր եղաւ և հիմա ալ ի վարձ յուր գործած վայրագությանց, կուսակալ կարգվեցաւ Քաթեմոնի: Սըրտի մորմոքումով կպատմեր թե ինչպես Երզնկայի և շրջակայներուն 30,000ե ավելի հայերը բնաջինջ եղան քաղաքեն, կես ժամ հեռու, նույնիսկ կիներ և մանուկներ ողջ ողջ թաղվեցան: Եփրատ գետը հարյուրավոր կիներ և այրեր նետվեցան: Հազարավոր այր մարդիկ սպաննվեցան և բռնաբարվեցան, իսկ մանուկներ թուրքերուն բաժանվեցան: Երկինքի վրեժխնդրությունը ուշ կամ կանուխ պիտի հասնի մեզի, կըսեր:

Եկող ճանապարհորդները կպատմեն թե Խարբերդէն Սեբաստիա, ժամերով և օրերով, դիակներու հոտը օդը բոլորովին ապականած է, մինչև իսկ ճանապարհորդներ իրենց ձիերուն չեն կրցած ջուր տալ:

Կեսարիո մեջ ցարդ 80ե ավելի մարդիկ կախվեցան. քանի մը բժիշկներ և երևելիներ, որոնց մեջ նաև Համբարձում Պոյաճյան (Մուրադ)՝ ազգային երեսփոխան և երբեմն օսմանյան քարավանների մեպուս: Կախվողներեն տեղացիները կախաղան են վար առնելու պարտականությունը իրենց ազգականներուն է, մորը, հորը, կնոջը և

այլն: Չափահաս աղջիկներուն և երիտաւարդ կիներուն միայն իսկամոթոյունը ընդունեցին:

Տեղահանումը արդեն Պոլսո ղռները հասավ, հարյուր հազարավոր հայեր Պաղտատի երկաթուղիի գծի վրա լեցված են ծայր աստիճան թշվառոյթյան մեջ և հետզհետե կորկվեն դեպի Տարսոն-Հալեպ՝ անկե Միջագետքի և Արաքիո անապատները ցրվելու համար: Մեզի հասած տեղեկոյթոյունները ցույց կուտան, թէ հիվանդոյթոյունը և անդոթոյթոյունը այժմեմ սկսած են մահերու պատճառ ըլլալ: Ընկերացող և հսկող ժամդարմներու և այլ պաշտոնեից գաղթականաց տված տանջանքները քստմեցուցիչ են:

Մեր դիմումներու վրա Արմաշի աշակերտները Պոլիս բերվելով մեզի հանձնըվեցան, իսկ վանահայրը, երեք վարդապետները և երեք ուսուցիչները ու սարկավագները տարագրելոց խառնվեցան: Արմաշի վանքը իր գույքերով գրավեցին և նույնիսկ Մեսրոպ եպիսկոպոսին ծախած ոչխարներեն և այլ կենդանիներեն ու գույքերեն գոյացած 400 ոսկվո մոտ գումարը բռնի առած է կառավարոյթյան պաշտոնյան:

Պոլսո գավառցի ամուրիներուն տարագրումն ալ սկսված է երկու շաբաթե ի վեր: Ցարդ 4—5000 մարդ տարագրվեցան հանկարծական կերպով՝ իրենց գործերը երեսի վրա ձգելով: Ասոնց մեջ ընտանիքի տեր ալ կա: Այսա և Չանդրի աքսորվածները ողջ ողջ թաղված են: Դեսպանատանց կողմե եղած դիմումները բոլորովին անգոր կմնան:


Ամսույս սկիզբը սոսկալի ջարդ մը տեղի ունեցած է Էնկյուրեի մեջ: Անխ հայոց այր մարդիկը հավաքելով ճամբա հանված են և ջարդված ամբողջովին, իբր 500 մարդ: Այնուհետև քաղաքին մեջ նախաճիրը սկսած է, որուն զոհ գացած են ավելի քան 5000 հոգի՝ այր, կին, մանուկ: Սպանված են 17 երկաթուղվո պաշտոնյա, 10 քահանա հայ կաթողիկաց, անոնց եպիսկոպոսը, մեր ա-

ռաջնորդին փոխանորդ Թեոդորոս վարդապետը, քահանաներ և այլն: Հայտնի է, թէ իբր հայ եկեղեցվո զավակ հազիվ 4—500 տուն գտնվի հոն, մինչ հայ կաթողիկները՝ 2000 տունն ավելի են:

Ասոնք իբրև վերջին երեք շաբաթվան լուրեր ձեզ կհաղորդեմ: Պետք է ընդունել, որ մեր կորուստն ավելի պիտի ավելնա, ցորչափ այս հալածանքը շարունակվի և մեր ժողովուրդը ծայրահեղ կարոտոյթյան մեջ մնալով հետզհետե հազարավորներ զոհ պիտի տա անդոթոյթյան, թշվառոյթյան, հիվանդոյթյան և խժոժոյթյան: Քանի որ քաղաքակիրթ ազգերը այժմյան կացոյթյան մեջ իրենք իրենցմով միայն կրնան զբաղիլ և մեր մահվան գալարումներուն միայն հանդիսատես են՝ առանց կարենալու որևէ կերպով մեր այս տառապանքներուն մեղմացում մը իսկ առաջ բերել, աշխատեցեք և դիմեցեք ամեն կողմ՝ թէ արտասահմանի հայոյթյան և թէ օտար մարդասերներուն, որ իրենց նյութական օժանդակոյթյամբ կանքեր փրկեն: Զգացուցեք, թէ առաջիկա ձմեռ հազարավորներ անդոթոյթյան զոհ պիտի երթան: Մեր այս բնաջնջումին ու մահացումին հաշիվը մոտավոր ապագային կմնա, ազատենք հիմա, ինչ որ կրնանք: Նպաստ հասցնելու է, ամենուն սիրտը բաղխեցեք, մեր մայրերն ու եղբայրները անդոթի կմեռնին: Պատրիարքարանը ըրավ, ինչ որ կրցավ գայծմ: Մեր ձեռքի տակ օտնված գումարները անխտիր կգործածվին, քայց կարոտոյթոյունը և պահանջը այնքան շատ է, որ մեր ունեցած ավանդ գումարները ալ չբավեցան: Ըսեք մեր եղբայրներուն, իրենց 10 փարան անգամ հալու մը օրական ապրուստն է, ըստ այսմ, գրեթե Եփեսոս, Ամերիկա, Ռումանիա և ամեն տեղ, ուր հայ կա և ըսեք նաև առկառահայոց զոհողոյթյան ժամը հիմակ է, իր Աստվածն ու ազգը սիրողը թող ձեռք երկարե մեզի...

Ստորագրոյթոյուն:
(Էջ 49—56):





A CATALOGUE OF MEDIEVAL ARMENIAN MANUSCRIPTS
IN THE UNITED STATES, BY AVEDIS K. SANJIAN,
UNIVERSITY OF CALIFORNIA PRESS, BERKELEY.
LOS ANGELES. LONDON, 1976, H XIX—863

ՊՐՈՖ., ԴՈԿՏ. ԱՎԵՏԻՍ ՍԱՆՃՅԱՆ, ՄԻԱՑՅԱԼ
ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ՑՈՒՑԱԿ, ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ, ԲԵՐԿԼԻ. ԼՈՍ ԱՆՋԵԼՈՍ. ԼՈՆԴՈՆ.
1976, ԷԶ XIX—863

Հայերեն ձեռագրերի համաշխարհային գանձարանը հարստացավ ևս 180 ձեռագրերով: Սփյուռքում վերջին տասնամյակում լույս ընծայված հայերեն ձեռագրացուցակների հարուստ թվի վրա ավելացավ մեկը ևս: Այդ Կալիֆորնիայի համալսարանի հայագիտական ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոկտոր Ավետիս Սանճյանի կազմած և նույն համալսարանի կողմից ապակետիպ հրատարակված «Միացյալ Նահանգների միջնադարյան հայերեն ձեռագրերի ցուցակ» ստվարածանալ հատորն է: Հարուստ ավանդույթների տեր հայ ձեռագրագիտությունը ձեռագրացուցակագիտության ասպարեզում մեծ ճանապարհ է անցել, սկսած հատկապես բազմախոս Հ. Հակոբոս Տաշյանի կողմից 1895 թ. ստեղծված Վիեննայի Միխայիլյան մատենադարանի կոթողային ձեռագրացուցակից: Նրանից հետո անցնող ավելի քան ութ տասնամյակների ընթացքում բազմաթիվ ձեռագրացուցակներ են լույս տեսել, որոնց կազմողներից ոմանք աշխատել են պահպանել Տաշյանի ավանդույթները, իսկ ոմանք էլ, ելնելով իրենց հնարավորություններից, հանդես են եկել ավելի համառոտ բնույթի ցուցակներով:

Հայ ձեռագրագիտության համար բոլոր ձեռագրացուցակներն էլ հիմնականում ու-

նեն ճանաչողական արժեք: Սակայն անհրաժեշտ է միաժամանակ նշել, որ ժամանակի գիտության քննությանն են դիմացել միայն այն ձեռագրացուցակները, որոնց կազմողները կարողացել են նրանցում արտացոլել իրենց նկարագրած յուրաքանչյուր գրչագրի բոլոր մանրամասները և անպատասխան չեն թողել ոչ մի հարց, կապված տվյալ ձեռագրի ինչպես արտաքին հանգամանքների նկարագրության, այնպես էլ նրա ներքին բովանդակության հետ: Այս առումով էլ կարելի է նկատել, թե ինչ մեծ կորուստ է ունեցել անցյալում մեր ձեռագրագիտությունը, երբ մի շարք վայրերի ձեռագրերի նկարագրությունները ավելի համառոտ են կատարվել, ձեռագրեր, որոնք հայագիտության համար ընդմիշտ անհետացած կարելի է համարել, քանի որ դրանք մեծ մասամբ ոչնչացվեցին անխնայորեն Մեծ եղեռնի օրերին: Էլ չենք խոսում այն մասին, որ բազմաթիվ հայկական ձեռագրական կենտրոններ անգամ բախտ չունեցան թեկուզ համառոտ իրենց ձեռագրացուցակը ունենալու, և ձեռագրերը առհավետ ոչնչացվեցին անհույս կերպով...

Այս առումով էլ շատ ողջունելի է Սանճյանի սույն ձեռագրացուցակը, որն ունի երկակի արժեք, քանի որ այն ոչ միայն իր մեջ բերված հիշատակարան-հիշատակա-

գրությունների հարազատ գրաքար բնագրով բավարարում է հայ հետազոտողի պահանջները, այլև իր նկարագրություններով հրապարակված լիակատար և լեզվով, հայերենին անտեղյակ կամ սակավ ծանոթ հայագետների համար առաջին անգամ լիակատար շրջանառության մեջ է դրվում հայ միջնադարյան ձեռագրերի մի կենտրոնին վերաբերող միանգամայն հարուստ նյութեր, որոնք մեծ մասամբ հայտնի չեն եղել հայագիտությանը և ավելին, բոլորովին գրեթե անմատչելի են եղել այլ լեզվով:

Մասնավորելով մեր խոսքը պրոֆ. Սանճյանի սույն ձեռագրացուցակի մասին պետք է նկատել, որ ամենից առաջ աչքի է ընկնում այնտեղ կազմողի այն մեծ ջանքն ու եռանդը յուրաքանչյուր ձեռագրի մանրամասն նկարագրությունը տալու ուղղությամբ: Ցուցաբերելով մեծ նախաձեռնություն և բարեխղճություն, կազմողը ամենայն մանրամասնությամբ կանգ է առել ձեռագրի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին նկարագրության վրա: Մի առ մի ցույց են տրված գրչագրի նյութը, մագաղա՞թ է, թե՛ թուղթ, թերթերի քանակը, էջերի չափերը, միայն գրված տարածության չափերը, գրի տեսակը, պլաների, ինչպես նաև տողերի քանակը և այլն:

Այդ բոլորից հետո մանրամասնորեն տրվում է նաև կազմի նկարագրությունը, ձեռագրի այժմյան վիճակը: Քաղելով տրվյալ ձեռագրի հիշատակարանից ու հիշատակագրություններից (եթե այդպիսիք կան), ինչպես նաև այլ օժանդակ նյութերից, տրվում է ձեռագրի ընդարձակ պատմությունը, նրա ծագման օրից մինչև տրվյալ հավաքածուում նրա մուտք գործելը: Ապա մանրագին կերպով էջ առ էջ կանգ է առնվում ձեռագրի բովանդակության վրա, ցույց են տրվում թերթերը և կամ չգրված էջերը: Ընդարձակորեն կանգ է առնվում նաև ձեռագրի նկարագրողումների վրա, նշվում են բոլոր մանրանկարները, խորանները, լուսանցազարդերը, իսկ վերջում բերվում են ձեռագրի գրչի ծաղկողի, կազմողի, ստացողի հիշատակարանները, ինչպես նաև հետագայի փրկողների, ստացողների, կազմողների, նորոգողների՝ հիշատակագրությունները: Ձեռագրի նկարագրությունը եզրափակվում է ընդարձակ մատենագիտությամբ, ուր ցույց են տրվում ինչպես առանձին գրքերով, այնպես էլ հայ և օտար պարբերական մամուլում տվյալ ձեռագրի մասին եղած հիշատակությունները և ուսումնասիրությունները:

Թեև նախապես այնպիսի հայտնի ձեռագրագետներ, ինչպիսիք են Հ. Ղ. Ալիշանը, Գարեգին կաթողիկոս Հովսեփյանցը, Հ.

Քյուրտյանը, Հր. Աճառյանը, Սիրարիկ Տեր-Ներսեսյանը, ինչպես նաև Զավեն վարդապետ Արզումանյանը, Մ. Սեմերճյանը և օտար մի շարք գիտնականներ համատուր կամ ընդարձակորեն անդրադարձել

A CATALOGUE OF MEDIEVAL ARMENIAN MANUSCRIPTS IN THE UNITED STATES

By Avedis K. Sanjian

UNIVERSITY OF CALIFORNIA PRESS
BERKELEY • LOS ANGELES • LONDON
1976

Էին ԱՄՆ-ի տարբեր քաղաքների զանազան հաստատություններում պահվող որոշ թվով հայերեն ձեռագրերին, կանգ առնելով հիմնականում նրանց հիշատակարանային և կամ արվեստագիտական արժեքի վրա, սակայն այնուամենայնիվ ԱՄՆ-ի տարբեր նահանգների և քաղաքների զանազան հիմնարկություններում ցրված հայերեն բոլոր ձեռագրերի գիտական ամբողջական մի ցուցակի պակասը վաղուց զգալի էր դարձել հայագիտության համար, ուստի և Սանճյանի սույն ձեռագրացուցակը միանգամայն սպասված և հույժ օգտակար մի գործ է: Այն արդյունք է հեղինակի կողմից կատարված երկարամյա որոնումների և անխոնջ աշխատանքի:

Անհրաժեշտ է հիշատակել, որ սրանից առաջ դարձյալ պրոֆ. Ա.վ. Սանճյանի շնորհիվ է, որ լույս տեսավ «Հայերեն ձեռագրերի հիշատակարանները 1301—1480 թթ.» (1969) ծավալուն աշխատությունը, որի շնորհիվ հայ պատմության ականջալուր վկաները հանդիսացող մեր միջնադարյան գրիչների կարևոր վկայությունները, որոնք արժեքավոր են ոչ միայն հայերի և Հայաստանի, այլ նաև շատ ու շատ ժողովուրդների և երկրների պատմության համար, առաջին անգամ լինելով շրջանառության մեջ դրվեցին անգլիերենով և սեփականություն դարձան համաշխարհային գիտությանը: Ահա թե ինչու պրոֆ. Սանճյանի այդ գործը միահամուռ գնահատանքի արժանացավ թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում, այնպես էլ օտար գիտնականների կողմից: Դարձյալ պրոֆ. Ա.վ. Սանճյանի գրչին են պատկանում նաև «Ալեքսանդրեոս-Սանճաքում Ֆրանս-թուրքական հարաբերությունների մասին», «Հայ համայնքները պատմական Սուրիոյ մեջ՝ Օսմանյան տիրապետության տակ» և այլ կարևոր մենագրություններ, ինչպես նաև բազում գրականագիտական, ձեռագրագիտական և այլ բնույթի հոդվածներ և ուսումնասիրություններ:

Մասնավորելով մեր խոսքը գրախոսվող ներկա աշխատության մասին, ասենք, որ սույն հատորը բաղկացած է 863 էջից և ունի առաջաբան (էջեր VII—XV), աղբյուրների համառոտագրություն (XVII—XIX), ներածություն (1—38), ձեռագրերի տախտակ ըստ իրենց պահպանված վայրերի (39—47), ձեռագրացուցակ (49—786), մատենագիտություն (787—802), ձեռագրերի ժամանակագրական տախտակ (803—806), ընդհանուր անվանացանկ անգլիերենով (807—825), անվանացանկ հայերենով (827—863), որոնցից՝ անձնանունների (827—858) և տեղանունների (858—863):

Պրոֆ. Սանճյանի տվյալների համաձայն մինչև վերջերս ԱՄՆ-ում զանազան հաստատություններում և առանձին անձանց մոտ պահվող հայերեն ձեռագրերի թիվը կազմում է շուրջ 800, որոնցից Միացյալ Նահանգների գրադարաններում՝ 174 ձեռագիր, Կալիֆորնիայի Լոս Անջելոս համալսարանի գրադարանում՝ 150, բազմապատակ հայագետ, այժմ հանգուցյալ Հարություն Քյուրտյանի (Կանգաս Վիչիտա) հավաքածում՝ 300¹, Գևորգյան հավաքա-

ծում (Նյու Յորք)² 60, Հազարյան հավաքածում (Նյու Յորք Սիտիում)³ 60, տարբեր անհատական փոքր հավաքածուներում՝ 50: Անշուշտ հիշյալ ձեռագրերից բացի ԱՄՆ-ի տարբեր մասերում պետք է լինեն նաև հայերեն այլ գրչագրեր ևս⁴:

Սույն ձեռագրացուցակում նկարագրված 178 գրչագրերը պահվում են ԱՄՆ-ի 13 նահանգների 38 տարբեր հաստատություններում, այդ թվում ամենից ավելի մեծ թվով

422, № 11, էջ 409—422): Հ. Քյուրտյանի կտակի համաձայն իր գրչագրերի հավաքածուն նրա որդիների կողմից տեղափոխվեց Վենետիկ, Ս. Ղազար, Մխիթարյան Միաբանության մատենադարանը: Քյուրտյան ձեռագրական հավաքածուի ամբողջական ձեռագրացուցակը կազմված նվիրատուի կողմից պետք է հրատարակվեր Վենետիկի Մխիթարյան Միաբանության տպարանից:

² Բանասեր Բ. Լ. Չուգասյանը լինելով ԱՄՆ-ում իր «Հայերեն ձեռագրեր Ամերիկայի Միացյալ Նահանգներում» հոդվածում (Տես «Բաներ Մատենադարանի» № 12, Երևան, 1977) տեսել և նկարագրել է 42 ձեռագրեր, այդ թվում Լոս Անջելոսում Արշակ Տիգրանյանի մոտ 8, Նյու Յորքում Հ. Փ. Բրատուի մոտ՝ 2, ժյուլեն Հովսեփյանի մոտ՝ 1, Սան Ֆրանցիսկո. Ն. Մարտիկյանի մոտ՝ 6, Վաշինգտոն. Կոնգրեսի գրադարան՝ 6, Նյու Յորքում, Տ. Տիրան արքեպիսկ. Ներսիսյան՝ 1, Արսեն և Արմանտ Փուշմաններ՝ 3, Ալիս Գալուպյան՝ 1, Վարդան Վարդանյան՝ 1, Տիգրան Տեյիմեզյան՝ 1, Էդվարդ Բաղդասարյան՝ 1, Հայոց առաջնորդարան՝ (սեփյ. Յոհաննեսյան) Հարավ Աֆրիկա՝ Գրիգոր Տեր-Պալյան՝ 2, Գրիգոր Մագստոսյան՝ 1, Ֆրեդերիկ Ս. Երրորդություն Մայր եկեղեցում՝ 5, Միքայել Փափազյան՝ 1, Վաշինգտոն՝ Բաբկեն Ե. ախյ. Վարժապետյան՝ 1, Չիկագո՝ Ոսկան և Լուսին Խաչիրյանների մոտ՝ 1, Ուեսթ-Հարթֆորդ, Բեառնթիքթոն՝ օր. Ժողեֆին Պարթ՝ 1, Բոստոն՝ Հ. Թոփուլյանի մոտ՝ 1, Նյու Ջերսի՝ Պերս և Արմինե Սրագներ և Արտեմիա Տեմիրջյան՝ 1, Թենեսիսյալ Նյու Ջերսի՝ Պետրոս Նորհաս՝ 1:

1977 թ. օգոստոսին գտնվելով Սան Ֆրանցիսկոյում Ալբեր Նալբանդյանի հավաքածուում ցուցակագրել ենք 15 հայերեն գրչագիր և հմայիլ, որի ձեռագրացուցակը հրատարակելու ենք հետագայում: Նույն Սան Ֆրանցիսկոյում բնակվող ումիհանայ Տիգրան Թավադյանի մոտ տեսել ենք 2 հմայիլներ: Լոս Անջելոսում ևս ծանոթ ումիհանայ հավաքող հանգուցյալ Վարդան Բարակյանի հետնորդների մոտ ևս տեսանք 1 հմայիլ: Լոս Անջելոսի ազգային գործիչ և բարերար Արշակ Տիգրանյանից նվեր ենք քերել Երևանի Մաշտոցյան Մատենադարանին մագաղաթա մի Ավետարանի երկթերթյա երկաթագիր պատմական (9—10 դդ.) և հաբեշերեն մի ձեռագիր: Անշուշտ ուշադիր պրպտումները հետագային ևս համոզված ենք, որ նորանոր բազմաթիվ գրչագրեր ևս պետք է որ ի հայտ բերեն ԱՄՆ-ում:

¹ Հ. Քյուրտյանը իր «Համառոտ ցուցակ հայերեն գրչագիրներու Քյուրտյան հավաքածուի ի Ուիլիամ, Կանգաս, ԱՄՆ» հոդվածաշարում հրատարակել է իր հավաքածուից 46 ձեռագրերի նկարագրություն (Տես «Բաներ Մատենադարանի» № 10, էջ 409—

հայերեն ձեռագրեր են ներկայացվել Նյու Յորքի տարբեր հաստատություններից թվով 39 գրչագիր, ապա Քոնեքթիկուտ անհանգից՝ 27, որոնք պահվում են երկու տարբեր հիմնարկություններում, Վաշինգտոնում 18 ձեռագիր, երեք տարբեր հիմնարկություններում, Իլինոյս և Պենսիլվանիա անհանգների չորս հիմնարկություններում՝ 17, Մասսաչուսեթսի և Նյու Ջերսիի անհանգների 7 հիմնարկություններում՝ 16, Մերիլենդում՝ 11, Վալիֆորնիայում (հինգ հաստատություններում)՝ 7, Միչիգանում՝ 6, Այովայում՝ 2, Ինդիանայում՝ 1, Հյուսիսային Բարդիմայում՝ 1, իսկ ԱՄՆ-ից դուրս նկարագրված է միայն Կանադայից 2 ձեռագիր։ Սույն ցուցակից հայտնի է դառնում, որ հայերեն բազմաթիվ ձեռագրեր են պահվում ԱՄՆ-ի թանգարաններում և գրադարաններում։ Այսպես օրինակ, հայերեն գրչագրեր կան այժմ Չիկագոյի, Ինդիանայի, Այովայի, Հարվարդի, Միչիգանի, Կոլումբիայի և այլ գրադարաններում, Ուալտեր արվեստի թանգարանում (Բալտիմոր), Մետրոպոլիտենի արվեստի թանգարանում, Նյու Յորքի հանրային գրադարանի Սպենսերի հավաքածուում, վերջինիս ձեռագրական բաժնում, Ֆիլադելֆիայի արվեստի թանգարանում, Վաշինգտոնի Կոնգրեսի գրադարանում, նույն քաղաքի Ֆրիր գալերի արվեստի թանգարանում, Մոնրեալի համալսարանի գրադարանի հատուկ հավաքածուում և այլն։

Նկարագրված գրչագրերից 111-ը լրիվ են, 41-ը՝ թերի, իսկ 22-ը պատահական են։ 101 ձեռագրերի գրչության ժամանակը ճշտված է նրանց հիշատակարանների ընդհանուր տվյալների հիման վրա, իսկ մնացյալ գրչագրերինը մոտավորապես ճշված է նրանց գրման ժամանակը, ելնելով յուրաքանչյուր ձեռագրի հնագրական հանգամանքներից։ Ըստ գրչության ժամանակի ձեռագրացուցակում նկարագրված ձեռագրերը ներկայացնում են հետևյալ պատկերը. 9—10 դդ. են գրված 2 ձեռագիր, 10 դ. 2, 11 դ. 2, 12 դ. 4, 13 դ. 19, 14 դ. 14, 14—15 դդ. 2, 15 դ. 10, 15—16 դդ. 12, 16 դ. 20, 16—17 դդ. 8, 17 դ. 64, 17—18 դդ. 6, 18 դ. 15, 18—19 դդ. 1 և 19 դ. 4 ձեռագիր։

Ըստ բովանդակության վերոհիշյալ ձեռագրերը հետևյալ պատկերն ունեն. Ավետարան՝ 73, Նոր Կտակարան՝ 2, Սաղմոս՝ 6, Մաշտոց՝ 2, Ծարակնոց՝ 15, Հայտնավորք՝ 4, Ժամագիրք՝ 2, Տոնացույց՝ 2, Գանձարան՝ 3, Ծառոց՝ 4, Խորհրդատետր՝ 2, Պարզատումար՝ 2, Մանրումունք՝ 1, Բարոզգիրք՝ 1, Ժամագիրք—Ծարակնոց—Տումար՝ 1, Ժողովածու՝ 1, Սաղմոսարան—

Ժամագիրք՝ 1։ Կան նաև Գրիգոր Լուսավորչի, Դավիթ Անհաղթի, Ներսես Շնորհալու, Սարգիս Շնորհալու, Գրիգոր Տաթևացու, Առաքել Սյունեցու, Թովմա Մեծփեցու և այլոց, ինչպես նաև Դիոնեսիոս Արիսպագացու, Կյուրեղ Երուսաղեմացու, Կյուրեղ Աղեքսանդրացու, և այլ մատենագիրների գործերը։

Նկարագրված ամբողջական ձեռագրերից հնագույնը 966 թ. գրված մագաղաթյա երկաթագիր Ավետարանն է, որի գրիչն է եղել Սարգիս քահանան, իսկ ստացողը՝ Թորոս քահանան։ Հետաքրքրական է, որ 16-րդ դարում այդ ձեռագիրը հասել է Երևան, ուր ստացել է Հակոբ քահանան և «Ի գողաքաղաք լերևանաք» 1575 թ. կազմվել է նորից տեղի Ներսեսի կողմից։ Ավելի ուշ, 19-րդ դարի առաջին կեսին, այդ նույն ձեռագիրը պատկանում է Պարսկաստանի Նոր Ջուղայի միսիոնար Վրթանես Ելուզյուքյանցին, 1844 թ. այն Թավրիզում է, ուր ունի Հովհաննես Ամիրխանյան գտնելու համար սույն ձեռագրի գրչության թվականը, փոխանակ հայոց 415 թվականի վրա գումարելու 551 տարի, սխալմամբ 415 հայկական թվականը հանում է 1844 թվականից և գտնում, որ ձեռագիրը 1429 տարեկան է, որն ակնհայտ սխալ է։ Նույն Ամիրխանյանն էլ միջնորդությամբ վերոհիշյալ միսիոնար Վրթանես Ելուզյուքյանցի նվիրում է այն Հռոմի Ս. Գրիգոր Լուսավորչի վանքին։ Այս ձեռագիրը տարվել է Կ. Պոլիս և մաս է կազմել Անտոնյան վանքի ձեռագրական հավաքածուին, որից էլ մեզ անհայտ պատճառներով անցել է ԱՄՆ և այժմ պահվում է Մերիլենդ անհանգի Բալտիմոր քաղաքի Ուոլտեր արվեստի գալլերիի հավաքածուում 537 համարի տակ։ Հայ և օտար գիտնականների կողմից իբրև հայ գրչության հնագույն նմուշներից մեկը այդ ձեռագիրը հաճախ է, որ ուսումնասիրության է ենթարկվել։

Հատկապես բացառիկ արժեք է ներկայացնում հայ մանրակարչության և գրչության արվեստների առումով վերոհիշյալ հաստատությունում համար 539-ի տակ պահվող մագաղաթյա Ավետարանը, որի գրիչն ու ծաղկողն է Կիլիկյան հայկական պետության հանձարեղ մանրանկարիչ Թորոս Ռուդինը։ Այն գրված է 1262 թ. Հռոմ կայսրում երկաթագրով և ունի 67 մանրանկարներ, 12 խորաններ և այլ զարդեր։ Այս Ավետարանը Կոստանդինոպոլիսի հովանավորությամբ գրված իններորդ գրչագիրն է, և որի ստացողն է եղել վերջինիս եղբորորդի Թորոս քահանան։ Նրա առաջին կազմողն է եղել դարձյալ Կիլիկյան Հայաստանի համբավավոր կազմարար Ա.

ուաքել Հնագանդենցը, որը նույն 1262 թ. կազմել էր մի այլ ձեռագիր Ավետարան, որը դարեր շարունակ պահվելուց հետո Ռումինիայի Ռոման քաղաքի հայոց եկեղեցում, 1955 թ. այլ ձեռագրերի հետ ումինահայերի կողմից նվիրաբերվեց Երևանի Մաշտոցյան Մատենադարանին (այժմ № 9509): Անշուշտ Ռուսիայի կողմից գրված և նկարազարդված հիշյալ Ավետարանը պետք է որ ձեռագրին արժանի կազմ ունենար, քանի որ Ռուսիան իր հիշատակաբանում նշում է, որ այն պատվական քարերով էր զարդարված. «Ընդելուզեալ քարամբք պատուականաւք» (էջ 282):

Սույն մեծարժեք ձեռագրում հիշվում են հայոց Հեթում Ա թագավորը և Զապել թագուհին: Այն կարևոր տեղ է գրավում նաև հայերեն ձեռագրերի պատմության մեջ: Ձեռագիրը փրկվել է 1602 թ. ամենայն հավանականությամբ ջալալիների արշավանքի ժամանակ սեբաստացի Պատվականի կողմից. «Որ ազատեաց զսուրբ Աւետարանն ի ձեռաց այլազգեաց», իսկ 1626 թ. այն վերստին կազմվել է Սեբաստիայում Մելիքսեթ դպրի կողմից Ս. Աստվածածին տաճարում և մաս է կազմել Թորգոմ արքեպիսկոպոսի Գուշակյանի Սեբաստիայի ձեռագրացուցակին³ (№ 15): Անհրաժեշտ է այս առթիվ նշել, որ Ռուսիայի այս հուշակապ Ավետարանը դարեր շարունակ պահպանվել է Սեբաստիայում և մինչև Մեծ եղեռնը մեծ հոգատարության առարկա է եղել սեբաստացիների կողմից: Միաժամանակ նա իր մանրանկարների և խորանների նրբագեղությամբ և ճոխությամբ ներշնչման աղբյուր է դարձել սեբաստացի ծաղկողների համար: Սեբաստիայի հայտնի գրիչ և ծաղկող Բարադամը և ապա վերջինիս որդի Միքայելը և անշուշտ դեռ ուրիշներ ևս իրենց ստեղծած մոր ձեռագրերի համար մեծ չափով օգտագործել են Ռուսիայի հուշակապ նկարազարդումները: Այդ ձեռագրերից են Բարադամ գրչի կողմից 1636 թ. նկարազարդված Աստվածաշունչը (Գուշակյան ցուցակ թիվ 1), դարձյալ Բարադամ գրչի նկարազարդած Ավետարանը, վերջինիս որդի Միքայելի կողմից 1668—1673 թթ. նկարազարդված Ավետարանը⁴, որը հայտնի է նաև իբրև Ենի Խանի Ավետարան անունով, որի մասին խոսք կլինի ստորև:

Սակայն վերոհիշյալ նկարագրություններով վերջ չի գտնում Ռուսիայի այս չքնաղ Ավետարանի ողիսականը: Այն հրաշքով փրկվելուց հետո եղեռնից, ինչպես նշում է

քանասեր Հ. Բյուրտյանը, և ամենեկնի կերպով Կ. Պոլսի Պատրիարքարանին վերադարձվելուց հետո, սրանից շուրջ երեսուն տարի առաջ վաճառվել է նախ հույն և նրանից էլ հայ մի հնավաճառի (իմա Տ. Քելեկյան—Փարիզ), որն էլ այն վաճառել է ամերիկյան վերոհիշյալ հաստատությանը⁵:

Ինչպես հայտնի է, 1896 թ. ջարդերից հետո Սեբաստիայի հոգևոր առաջնորդ Պետրոս եպիսկոպոս Սեբաստիայից մի շարք ձեռագրեր է ստիպվել վաճառել Փարիզում բնակվող հնավաճառ Մ. Ինճուհյանին՝ ջարդերի պատճառով տուժած դպրոցների և այլ հաստատությունների վերաշինության համար: Այդ ձեռագրի մեջ էր գտնվում հնադարյան մի Ավետարան մանրանկարներով զարդարված, որը սակայն ներկայումս մասերի բաժանված գտնվում է տարբեր վայրերում: Հիշյալ ձեռագիրը Փարիզում Սվաճյան հավաքածուից մաս կազմելուց հետո, տարվել է Նյու Յորք՝ հնավաճառ հանգուցյալ Գրիգոր Միմասյանին, որը գրչագրից Դուկասի Ավետարանը իր սկզբնագրով, ինչպես նաև հինգ կանոնախորաններով և մեկ էջի վրա ամփոփված չորս ավետարանիչների մանրանկարներով ծախել է Վաշինգտոնի Ֆրիթ Արվեստի Գալերիին, ուր այժմ պահվում է և նկարազարդված է Սանճյան գրախոսվող ներկա ձեռագրացուցակում № 165-ի ներքո: Այն հանգամանակից կերպով ուսումնասիրվել է հայ մանրանկարչության բազմավաստակ մասնագետ, Հայկ. ՍՄՀ Գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ պրոֆեսոր Սիրարիի Տեր-Ներսեսյանի կողմից (տես Sir r.: Der Nersesian, Armenian Manuscripts in the Freer Gallery of Art, Smithsonian Institution, Freer Gallery of Arts Oriental Studies, no. 6, Washington, D. C. 1963, էջ 88—101): Մնացյալը ձեռագրի կազմի հետ Միմասյանի մահից հետո ծախվել է հայագետ Հ. Բյուրտյանին⁶:

Ինչ վերաբերում է վերոհիշյալ Սեբաստիայի մոտ գտնվող Ենի Խանում պահվող ձեռագիր Ավետարանին, որը Սեբաստիայի մյուս գրչագրերի հետ ուսումնասիրել էր 1914 թ. հայ ձեռագրագիտության մեծանուն երախտավոր Գարեգին Ա. կաթողիկոս Հովսեփյանը և որն այժմ պահվում է Վաշինգտոնի Ֆրիթ Գեղերի արտոմ: Այն նկարազարդող սեբաստացի Բարադամ գրչի որդի Միքայելը իրեն իբրև նախագաղափար է ունեցել Ռուսիայի վերոհիշյալ ձեռագիրը: Անճյան ձեռագրացուցակում մեջբերված Միքայելի հիշատակարանում գրված է. «Ա-

³ Տպ. Վիեննա, 1961:

⁴ Թորգոմ արքեպ. Գուշակյան, Յուզակ հայերեն ձեռագրաց Ս. Նշանի վանոց ի Սեբաստիա, Վիեննա, 1961, էջ 21:

⁵ «Բազմակերպ», Վենետիկ, 1966, էջ 69:

⁶ «Հանդես ամսօրնայ» 1965, էջ 233:

դաշեմ յիշել և զպատուական գրիչն Թորոս՝ մականունն Ռոսիին կոչեցեալ՝ զծաղկող օրինակիս, և ստացողն՝ զԹորոս քահանայն» (էջ 755):

Սանճյան ձեռագրացուցակի միջոցով տեղեկանում ենք նաև, որ ԱՄՆ-ում պահված հայ նշանավոր ծաղկողների գործերից են նաև № 126 Հայսմավուրքը, գրված 1348 թ., որի ծաղկողը Սարգիս Պիծակն է և № 10 Ավետարանը, գրված 1307—1331 թթ., որի գրիչն ու ծաղկողն է եղել Մոմիկը (Նորավանքում), սակայն վերջինս իր աշքերի տկարության պատճառով չի կարողացել ավարտել այն և նրա համաբարբառն ու ոսկեկարները կատարում են Հովհաննես գրիչն ու Թորոս Տարոնացի հայտնի ծաղկողը: Ապա 1331 թ. Մոմիկը իր աշքերի լույսը վերագտնելով գրում է ձեռագրի հիշատակարանը տեղ Ստեփանոս Տարսայիճի հրամանով (էջ 86):

Դարձյալ ԱՄՆ-ում է պահվում նաև հայ նշանավոր գրչուհի Բրաբիոն Նոտարի կողմից ընդօրինակված մի գրչագիր 1774—1775 թթ. գրված (էջ 413):

Սույն ձեռագրացուցակի ուշագրավ հիշատակարաններից է Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկի գրչի հիշատակարանը որը մեզ ի հայտ է բերում, որ նրա նախագաղափարը պատկանելի հնություն ունեցող մի ձեռագիր է եղել, որի մասին գրիչ Լաջին Կիլիկեցին 1706 թ. գրել է Եվդոկիայում հետևյալը. «Ծնորդիս տեսան և ողորմութեամբ նորին՝ գրեցի և կատարեցի զծաղկահաւաք մատենանս սրբոյն Կիրիլի, որ կոչի Կոչումն Ընծայութեանն, որ էր գրած ի սուրբ արանց ի հին ժամանակի, եւ անարգ ընկեցեալ կայր ի մէջ աղքիւսաց եկեղեցւոյ. եւ իմ առեալ՝ թափ տվի ի յաղթէն, եւ տեսի փտեալ և ցեց կերեալ, եւ գիրն անոպայ երկաթագրին յանարմարն. մանաւանդ թէ՛ վասն գրին անընդունելիութեան՝ ընկեցիկ եղեալ էր ...Ո՛վ իմ խոհեմ եղբայր, զայս գիրքս՝ որ ես գտի՝ գրեալ էր ի վաղեմի ժամանակաց ի յառաջին թագաւորաց Հայոց. եւ յիշատակարանս նորա գրեալ էր՝ թէ երկրորդ. նորոգումն գրոյս եղել ի թվին ՆՂԸ(1049), Սանճյան ձեռագրացուցակում սխալմամբ այս թվականը կարդացված է 949 (էջ 123, ծանոթ. Ս. Բ.): Եւ դարձեալ գրեալ էր՝ թէ երրորդ. նորոգումն եղել գրոյս ԸԾԸ(1359) եւ չորրորդ. նորոգումն էր ՌԾԴ(1655) թվին էր: Այսպէս անմեծ մատենաիս ոչ կարդացող կայ, ոչ քննող կա...»: Սույն մեջբերված հիշատակարանին շատ նման մի այլ հիշատակարան է մեզ հանդիպել Կյուրեղ Երուսաղեմացու վերոհիշյալ երկի 9-րդ դարի պատուոհիկներին նվիրված մեր ուսումնասիրությունը գրելու ժամանակ, երբ մեջ ենք

բերել նաև Մաշտոցյան Մատենադարանի № 1718 ձեռագրի հիշատակարանը գրված Երուսաղեմում 1625 թ.⁷: Պետք է կարծել, որ երկու գրիչներն էլ նույն նախագաղափար ձեռագիրն են օգտագործել:

Սանճյան ձեռագրացուցակում հիշատակված նշանավոր գրիչներից է Ստեփանոս Գոյներիցանցը, որը Կիլիկյան Հայաստանում է գործել, 14-րդ դարում և Կիպրոս կղզում Թովմաս քահանայի թաղմանը գրել է Նոր Կտակարան (№ 37): Պետք է նշել, որ Ստեփանոս Գոյներիցանց գրչի կողմից գրվածն այլ Նոր Կտակարան էլ մեզ հանդիպել է Գեոլա հայաքաղաքի թանգարանում դարձյալ ընդօրինակված Կիպրոսում 1310 թ.: Հայտնի մատենագիր Ստեփանոս Լեհացու գրչով է գրված մի Խորհրդատետր 1648 թ. Էջմիածնում (№ 63) և դարձյալ վերջինս գրչով է գրված 1662 թ. Էջմիածնում իր կողմից լատիներենից թարգմանված Դիոնիսիոս Արիսպագացու «Յաղագս երկնայնոցն քահանայապետութեան» երկը (№ 161):

Բացի Թովմա Մեծոփեցու Լանկ Թամուրի պատմությունից գրված 1590 թ. (№ 25) կան նաև պատմագիտական արժեքի այլ նյութեր ևս, ինչպես օրինակ 1648 թ. Կ. Պոլսում գրված Հայսմավուրքի հիշատակարանը (№ 31), որը ուշագրավ տեղեկություններ է տալիս Կ. Պոլսում պատահած հրդեհի և երկրաշարժի ու զահակալական պայքարի մասին: Նյութեր կան նաև Գրիգոր Տղա կաթողիկոսի գործունեության, Սալադինի արշավանքների, տեղեկություններ Սեբաստիայի նոր շրջանի պատմության մասին և այլն (№ 56, 172): Հայ գաղութների պատմության համար ուշագրավ են տարբեր գաղթավայրերում գրված ձեռագրերի նկարագրությունները: Սանճյան ձեռագրացուցակում կան տվյալներ Կ. Պոլսում, Երուսաղեմում, Կաֆալում, Սպահանում, Հալեպում, Բաղդադում և այլ վայրերում գրված գրչագրերի մասին: Օրինակ 1678 թ. Կ. Պոլսում մի Ծարակնոց է ընդօրինակվել «Պելիգրատոցի Յակոբ երեց»-ի կողմից (№ 64), ուրեմն 17-րդ դարում Բելգրադում եղել է հայ քահանա և հայ գաղութ:

Ձեռագրերի նյութական արժեքի վերաբերյալ ուշագրավ է 1274 թ. Սսում ամենայն հավանականությամբ Ստեփանոս Վահկացու կողմից ընդօրինակված Ավետարանը, որը նախ գնվել է Տրդատ եպիսկ. Պալյանի կողմից Կեսարիայում Հարություն Էփ.

⁷ Տես Ս. Բուրմեջյան, Նորահայտ պատմական երկեր Երուսաղեմացու Թ. դարի մի գրչագրից, «Բանբեր Մատենադարանի», № 5, Երևան, 1960, էջ 206:

Կյուրիմյանից 1890 թ. փետրվարի 14-ին, իսկ 1920 թ. նույն ձեռագրագետ Պալյան եպիսկ. ստիպվել է վաճառել Հայկազն Հայեջյանին 171 օսմանյան ոսկեդրամի փոխարեն Մաղմիսայում (№ 130, էջ 595):

Ինչպես նշեցինք, գործը կատարված է մեծ բարեխղճությամբ, բացված են գրիչների կողմից կատարված բոլոր համառոտագրությունները, պահպանված են անգամ գրիչների թույլ տված տառասխալներն ու գրչության վրիպումները, ոչ ճիշտ բառի կամ տառի տակ միշտ ընդգծված է զծի-կով: Ձեռագրացուցակում զգացվում է նաև գիտական մոտեցում, կատարված են անունների ճշգրտումներ, ժամանակի պարզաբանումներ և այլն: Ամեն մի գրչագրի վերջում ի հայտ է գալիս կազմողի կատարած հսկայական աշխատանքը տվյալ ձեռագրի վերաբերյալ մատենագիտական տեղեկություններ, հայ և օտար գրականություն և պարբերական մամուլից նյութեր քաղելու ուղղությամբ: Այս բոլորը էլ ավելի են մեծացնում ձեռագրացուցակի գիտական արժեքը և ուսումնասիրողներին նյութ են ընձեռում այդ ուղղությամբ հետազոտ հետազոտություններ կատարելու համար:

Նկատվում են մանր թերիներ: Մի տեղում Մանկտառագր համարվել է անձնանուն (էջ 842), այնինչ միջնադարյան Հայաստանում կտրիճների եղբայրության դեկավարն է եղել, այսինքն այն պաշտոն է եղել: Այստեղից էլ բերված. «Եւ եղբորն Խաչատուրին՝ Մանկտառաքին» պարբերությունը (էջ 493) պետք է կարդալ «Եւ եղբորն՝ Խաչատուրին՝ Մակտառաքին»: Տեղանունների ցանկում Ստամբոլի մոտ նշված է նաև տես նաև Բյուզանդիա և Կոստանդնուպոլիս, այնինչ հիշյալ վերջի երկու անունների կողքին չեն ցույց տրված նախորդ նույն անունները: Անվանացանկում բացակայում է պատմիչ Թովմա Մեծոփեցու անվան հիշատակությունը, որի սակայն պատմության օրինակը նկարագրված է. ինչպես տեսանք, սույն ձեռագրացուցակում: Նշված թերիները այնքան չնչին են, որ երբեք որակ չեն կազմում և բոլորովին էլ ստվեր չեն գցում կատարված շնորհակալ սույն աշխատանքի վրա:

Ցանկալի է, որ ԱՄՆ-ի ձեռագրացուցակի սույն հաջողված անդրամիկ հատորը ունենա նաև իր հաջորդը և ընդգրկի Կալիֆորնիայի համալսարանի, ինչպես նաև այլ վայրերի ու անհատ մարդկանց մոտ

պահվող հայերեն ձեռագրերի նկարագրությունը: Միաժամանակ հետազայի համար ցանկալի կլինեք նկատի ունենալ նաև հետևյալ լրացումները:

1.—Խիստ անհրաժեշտ է տալ յուրաքանչյուր ձեռագրի գրչության և մանրանկարչության ամենակարևոր նմուշների նմանահանություններ, որոնք կոչված կլինեն բացի ձեռագրի արտաքին և ներքին նկարագրություններից, գաղափար տալու նաև նրա գեղարվեստական արժեքի մասին: Նույնը կատարել նաև ձեռագիր հնագույն պատմականների և պահպանակների վերաբերյալ:

2.—Անհրաժեշտ է տալ նաև նշանավոր արժաթապատ և այլ կազմերի լուսանկարները:


3.—Անհրաժեշտ է կցել ավելի մանրամասն տախտակ, ուր տրվեն ոչ միայն ձեռագրի համարը, բովանդակությունը և ժամանակը, այլև նրանց գրչի, ծաղկողի, կազմողի և գրչության վայրի անունները:

4.—Լավ կլինեք, եթե հնարավորության սահմաններում ցույց տրվեն ձեռագրի կրկնագիր թերթերը, իհարկե եթե այդպիսիք կան, նաև լուսադրոշմները, և կնիքները, որոնք խիստ կարևոր նշանակություն կունենան ապագայում այդ հարցերով զբաղվողների համար:

5.—Ցանկալի կլինեք, որ դյուրության համար ձեռագրացուցակի յուրաքանչյուր էջի վերևում տրվեն նկարագրվող գրչագրի թվահամարը և ժամանակը:

Պրոֆ. Ավ. Սանճյանը հրապարակ հանելով սույն ձեռագրացուցակը որը իրավամբ կարելի է անվանել ԱՄՆ-ի հայերեն ձեռագրերի հիմնադիր հատորը, կատարել է երկարամյա տքնաչան աշխատանք, եղել է բազմաթիվ նահանգներում ու քաղաքներում և հիմնարկություններում և նրան հաջողվել է հայ և օտար հայագետների համար հսկա նյութ մատակարարել, որը մինչև երեկ հիմնականում անմատչելի էր համարվում: Ցանկանք նորանոր հաջողություններ հարգելի կազմողին և ուժ ու եռանդ, որպեսզի սկսված սույն օգտաշատ գործին հաջորդի ԱՄՆ-ում ցրված հայերեն գրչագրերի երկրորդ հատորը, որը էլ ավելի կընկապատի աշխարհով մեկ սփռված մեր ձեռագրերի գանձարանի հարստացմանը:

ՍՈՒՐԵՆ Ե. ԲՈՒԱՆՋՅԱՆ



Մ Ա Հ
ՊՐՈՖ. ԱՌԱՔԵԼ ԳԵՎՈՐԳԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ
(1887—1980)

Երկարատև հիվանդությունից հետո, մայիսի 6-ին, վախճանվեց Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, «Էջմիածին» ամսագրի առաջին խմբագիր նորաբաց հոգևոր ճեմարանի (1945) դասախոս, գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունները դոկտոր, պրոֆեսոր Առաքել Գևորգի Առաքելյանը:

Անխնայ ու քաղմավաստակ մանկավարժը ու գիտնականը երկար տարիներ Ս. Էջմիածնում իր սրտագին մասնակցությունն է բերել, 1944 թվականից սկսած, լուսահոգի Տ. Գևորգ Զ կաթողիկոսի և ապա արդի Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի եկեղեցաշեն, կրթական, հայրենասեր գործունեությանը, գործունեություն, որը շատ բարձր է գնահատվել երկու Հայրապետների կողմից և արժանացել Տ. Վազգեն Ա Հայրապետի կողմից «Ս. Գրիգոր Լուսավորիչ» Ա կարգի շքանշանի:

Պրոֆ. Առաքել Առաքելյանը ծնվել է 1887 թվականին Լեռնային Ղարաբաղի Խաչեն գավառի Խանաձախ գյուղում, հողագործի ընտանիքում:

Առաքել Առաքելյանն իր նախնական կրթությունը ստացել է Բալլուջա գյուղի դպրոցում, ապա Շուշի թեմական դպրոցում և այնուհետև, 1899 թվականին, Խրիմյան Հայրիկի օրով, ընդունվել է Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարան, որն ուսումնաստենչ պատանու համար կատարել է համալսարանական կրթության դեր:



Ճեմարանի լրիվ դասընթացը 1907 թվականին ավարտելուց հետո, Ա. Առաքելյանը 1908—1914 թվականներին նվիրվել է լուսավորության և կրթության շնորհակալ գործին, նախ Բալլուջա գյուղում, ապա Իգ-

դիրում, Շուշիի գիմնազիայում, Շուշիի թեմական և Ղարաբաղի հայկական դպրոցներում:

Հուսկ ուրեմն մանկավարժական աշխատանքներ է կատարել Ստեփանակերտի դպրոցում, Բաքվի բանվորական համալսարանում, մանկավարժական ուսումնարանում, հայկական դպրոցներում 1923—1926 թվականներին:

Ա. Առաքելյանի ջանքերով որոշակիորեն բարելավվում է կրթական գործը Ղարաբաղում, բարձրացվում ուսուցչական կազմի պատասխանատվությունը, մեծանում է դպրոցների թիվը:

Պրոֆ. Առաքելյանը 1933 թվականին փոխադրվել է Երևան: 1934 թվականից սկսած պրոֆ. Ա. Առաքելյանի ողջ գիտական-մանկավարժական գործունեությունը կապվում է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի հետ, ուր դասավանդել է ընդհանուր, անոթիկ, հումանկան ու հոմոնեական գրականություն, գրաբար լեզու, լատիներեն և հասցրել բազում աշակերտներ, մանկավարժներ:

Մանկավարժական աշխատանքների հետ պրոֆ. Ա. Առաքելյանը հեղինակել է մի շարք մեծարժեք գիտական ուսումնասիրություններ և բուհական ձեռնարկներ՝ «Հին հումանկան գրականության պատմություն», «Հին Հոմոնեական գրականության պատմություն», «Նյութեր հելլենիստական գրականության», «Կրթությունը Հին Հունաստանում» աշխատությունները:

Մեծավաստակ պրոֆեսորի գրչին է պատկանում նրա գիտական աշխատանքի փառապսակը հանդիսացող «Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն» հինգհատորանի ուսումնասիրությունը: Ցարդ տպագրվել են երեք հատորները: Սույն աշխատության մեջ հարգելի հեղինակը ընդգրկել է հայ մշակույթի բոլոր բնագավառները, սկսած վաղ շրջանից մինչև ԺԹ դարը:

Ա. Առաքելյանի գիտամանկավարժական բովանդակալից կյանքի մի կողմն է ներկայացնում նաև նրա թարգմանչական գործունեությունը:

Վերջին տարիներին հանգուցյալ պրոֆեսորը աշխատել է նաև գրի առնել «Դրվագներ քննադատական մտքի պատմությունից» աշխատությունը: Հարգելի պրոֆեսորը մեծ եռանդով և սիրով պատրաստել է նաև Տ. Տ. Վազգեն Ա. կաթողիկոսի կյանքին և գործունեությանը նվիրված կապիտալ մի աշխատություն՝ Նրա գահակալության 25-ամյակի առիթով:

Իր մահից մի քանի ամիս առաջ նա Վեհափառ Հայրապետին է ներկայացրել 43 մամուլից բաղկացած և Նրա կյանքին ու բազմապիսի գործունեությանը նվիրված այդ աշխատության Ա. հատորը:

Պրոֆ. Ա. Առաքելյանի մահվան առիթով Վեհափառ Հայրապետը հետևյալ ցավակցական հեռագիրը ուղղեց հանգուցյալի ընտանիքին և հարազատներին.

ՍԳԱԿԻՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Երևան

Այս տխուր պահին, երբ հողին է հանձնվում մարմինը հանգուցյալ պրոֆեսոր Առաքել Առաքելյանի, Մենք՝ կաթողիկոս Ամենայն Հայոց, բերում ենք Մեր վերջին ողջույնը սիրո և հարգանքի ու աղոթում՝ նրա հոգու խաղաղության համար:

Սուրբ Էջմիածնում միշտ գնահատանքով պիտի հիշենք պրոֆեսոր Առաքելյանի մեծ ծառայությունները մատուցված մեր հայրենիքին ու ժողովրդին իբրև սիրված մանկավարժ, իբրև հմուտ գիտնական և իբրև հայտնի հեղինակ մնալուն գործերի, նվիրված հայ ժողովրդի հոգևոր մշակույթի պատմության:

Մենք նույն ջերմ գնահատանքով պիտի հիշենք նաև նրա մոտ քառասուն տարիների արդյունաշատ գործունեությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, իբրև գործոն անդամ Գերագույն հոգևոր խորհրդի և առաջին խմբագիր «Էջմիածին» մեր պաշտոնաթերթի:

Օրհնություն և լույս նրա մեծ վաստակին ու նրա անմոռաց հիշատակին:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին,
6 մայիս 1980 թ.

Մայր Աթոռում միշտ երախտագիտությամբ և շնորհակալությամբ կհիշվի վաստակաշատ մանկավարժի և գիտնականի պայծառ անունն ու գործը:

Մայիսի 18-ին, կիրակի օրը, Մայր տաճարում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, կատարվում է մասնավոր հոգեհանգրստյան կարգ. պրոֆ. Առաքելյանի հոգու խաղաղության համար, նրա հարազատների ու ընկերների ներկայությամբ:

Հարգանք նրա անվան, գործին և հիշատակին:

ՄԱՀ ԲԱՐՍԵՂ ԹԱՇՉԱՆԻ (1919—1980)

Մայիսի 13-ին, երեքշաբթի օրը, հանկարծամահ եղավ Մայր Աթոռին առընթեր Վերստուգիչ հանձնաժողովի անդամ և հոգևոր ճեմարանի դասախոս ու թղթակցությունների քարտուղար Բարսեղ Թաշչյանը: Հանգուցյալը ծնվել է 1919 թվականի օգոստոսի 20-ին Կահիրեում (Եգիպտոս), բնիկ կեսարացի ծնողների ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է Կահիրեի Գալուստյան Ազգային վարժարանում, որն ավարտել է 1934 թվականին և նվիրվել կրթական-հասարակական գործունեության: Հետագա տարիներին նա ինքնագրագրված հարստացրել է իր գիտելիքները:

1951—1964 թվականներին պատասխանատու աշխատանքներ է կատարել Կահիրեի Ազգային առաջնորդարանում՝ որպես ընդհանուր քարտուղար:

Հանգուցյալը ջերմ սիրով զբաղվել է մանավանդ հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությամբ: 1950 թվականին Կահիրեում լույս է տեսնում նրա երկար տարիների աշխատանքների և պրպտումների արգասիքը հանդիսացող և 550 էջերից բաղկացած «Արշակունի Հայաստանի հազարամյա փառքը» երկասիրությունը:

1964 թվականի սեպտեմբերին, որպես հայրենասեր մարդ, ընտանիքով՝ կնոջ ու երկու երեխաների հետ հայրենադարձվում է Սովետական Հայաստան:

1966 թվականի հուլիսից սկսած աշխատանքի է անցնում Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում, որպես ընդհանուր պատմության ու աշխարհագրության դասախոս ու աշխատակցություն մնում մինչև իր կյանքի վերջին օրը:


Որտեղ էլ որ աշխատելիս է եղել Բարսեղ Թաշչյանը, եղել է իր գործին նվիրված անձ ու բարեխիղճ աշխատող:



Հանգուցյալի հուղարկավորությունը կատարվում է մայիսի 15-ին, հինգշաբթի օրը: Տան և թաղման կարգը կատարում է հոգևոր ճեմարանի տեսուչ Ս. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը՝ շրջապատված հոգևոր ճեմարանի ուսանողներով:

Բարսեղ Թաշչյանը բարեջան, ազնիվ անձնավորություն էր, սիրված և հարգված բոլորի կողմից:

Հարգանք նրա հիշատակին:



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ СВЯТОГО
ЭЧМИАДЗИНСКОГО
ПЕРВОПРЕСТОЛА
(май 1980 года)

1. Энциклика Его Святейшества Верховного Патриарха—Каталикоса Всех Армян Вазгена Первого в связи с 60-летием установления Советской власти в Армении.

Его Святейшество в своей энциклике отмечает, что в ноябре текущего года исполняется 60 лет со дня восстановления государственности в Армении—образование Армянской Советской Социалистической Республики.

Шестьдесят прошедших лет явились годами бурного подъема градостроительства, экономики, науки, расцвета национальной культуры в условиях мира и безопасности. В этот период возрождения Родины переродился также возрожденный первопрестольный св. Эчмиадзин, пробужденный духовной жизнью, восстановлением десятков исторических монастырей и церквей, и особенно беспрецедентным великолепием св. Эчмиадзина. Его Святейшество по этому поводу в своей энциклике призывает все армянские церкви в ноябре преподнести восхваление к этой дате с пожеланиями непоколебимости и вечного расцвета Матери—Родины (стр. 3—5).

2. Слова благословения Его Святейшества по случаю ежегодного делегатского собрания Восточно-Армянской епархии США, созываемого в мае с. г.

Его Святейшество в своем послании подчеркивает, что армянский народ на протяжении всей своей истории для сохранения своего существования, своей самобытности, свободы души и независимости уповал на христианскую веру, на благословение св. Эчмиадзина, армянскую церковь, на национальную словесность и культуру.

Его Святейшество завещает представителям епархиально-церковных организаций оставаться верными этим традициям так же и в наши дни (стр. 6—3).

3. Послание Его Святейшества, направленное съезду армянских духовнослужителей Восточно-Армянской епархии США, который также состоялся в мае.

В своем содержательном послании Его Святейшество отмечает, что армянский народ в сво-

ей жизни и истории непорочно сохранил свет Христа, сотворяя свой, особый образ христианина.

Его Святейшество призывает всех духовнослужителей Америки неослабно выполнять свою миссию, чтобы свет веры души оставался гореть в сознании верующих, находящихся под их попечением (стр. 9—12).

4. Письмо-благословение Его Святейшества, направленное годовому епархиальному собранию Западно-Армянской епархии США, состоявшейся в мае этого года.

В своем письме Его Святейшество желает уважаемым участникам епархиального собрания неисчерпаемой энергии в деле продолжения своей богоугодной миссии для возвышения духовной жизни армянского народа под солнцем Америки (стр. 13).

5. Проповедь Его Святейшества в церкви «св. Саркис» г. Еревана, произнесенная 11 мая 1980 г.

11 мая по случаю праздника Победы в Великой Отечественной войне Его Святейшество посещает ереванскую церковь «св. Саркис», где произносит проповедь. В своей проповеди Его Святейшество отмечает мужество сынов армянского народа, героически сражавшиеся на всех фронтах войны в защиту Отечества и свободы (стр. 14—15).

6. Энциклика Верховного Патриарха, Каталикоса Всех Армян Вазгена Первого об утверждении новоизбранного архимандрита Авака Асатуряна, предводителем Иракской армянской епархии.

7. В номере опубликованы следующие благославляющие энциклики Его Святейшества:

а) По поводу пятидесятилетия со дня строительства армянской церкви «св. Григория Провосветителя» в г. Сент-Гетринз (Канада).

б) Об освящении новой церкви «св. Воскресения» в г. Нью-Притон (США).

в) О награждении орденом «Григория Провосветителя» I степени профессора Барунака Товмасына, проживающего в Бейруте (стр. 16—20).

8. По случаю 62-летия героического сражения Сардарапат (май 1918 г.) в кафедральном соборе 25 мая, в воскресенье, преподносится св. литургия, а Его Святейшество в своей патристической проповеди призывает к памяти сынов армянского народа погибших в сражениях во имя Христа и Родины (стр. 21—24).

9. 25 мая в Кентерберийском соборе происходит торжественная церемония интронизации новоизбранного Главы Англиканской церкви Кентерберийского архиепископа Роберта Ранси.

По поручению Его Святейшества в церемонии участвуют также архиепископ Серовбе Манукян из Парижа и епископ Нерсес Позапалян из Лондона. Они вручают новоизбранному архиепископу поздравительное послание Его Святейшества (стр. 25—26).

10. 26 мая Его Святейшество в своей резиденции принимает священников Первопрестола и Араратской епархии. Во время приема Его Святейшество одобряет инициативу архиепископа Комитаса по организации занятий с целью повышения уровня квалификации проповеднической деятельности священников (стр. 27).

11. Под рубрикой «В Первопрестол» сообщается о новостях месяца: церковные служения, произнесенные проповеди, посещение гостей в Эчмиадзин (стр. 28—30).

12. Епископ Згон Тер-Акопян—«Пятидесятница». Проповедь по поводу праздника «Пятидесятницы» (стр. 31—32).

13. Атитян Артур—Журнал «Сион».

В 1979 году исполнилось 53 года нового периода издания официального органа Иерусалимского армянского патриаршества журнала «Сион».

В данной статье журнал знакомит читателей с опубликованными в 6 объединенных номерах журнала «Сион» за 1979 г. религиозными, церковными, проповедническими, литературными, историко-филологическими материалами (стр. 33—38).

14. В номере опубликована статья членов Эчмиадзинской конгрегации священника Езника Петросяна и иеромонаха Айказуна Наджаряна «Отрывки армянских переводов Орогяна» о дошедшей до нас единственной рукописи «Речь Ворогина—Книга пятая», находившаяся в государственном хранилище древних рукописей—Матенадарана им. Месропа Маштоца под номером 6036 с примечаниями и иллюстрациями (стр. 39—44).

15. В номере продолжается публикация статьи проф. Ашота Абрамяна о геноциде армян (стр. 45—49, начало см. в номере 4).

16. Следующая статья Сурена Коланджяна о книге проф., доктора Аветиса Санджяна «Список средневековых армянских рукописей в Соединенных Штатах» (изд-во Калифорнийского университета, Беркли. Лос-Анджелес. Лондон, 1976, XIX—863 стр.), (стр. 50—56).

17. Последние материалы в номере—некрологи по случаю смерти проф. Аракела Аракеляна (1887—1980) и Барсега Тацьяна (1919—1980).

„ETCHMIADZIN“ OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN (MAY 1980)

1. The Encyclical of His Holiness the Catholicos of all Armenians Vasken I, on the occasion of the 60th anniversary of the establishment of Soviet rule in Armenia. His Holiness noted that the passing six decades were years of urban and economic growth, scientific and cultural development, in conditions of peace and security.

During this period of rebirth the Mother See has also revived with awaking of spiritual life, renovation of a score of historical monasteries and churches and specially with the unprecedented rebirth of Holy Etchmiadzin.

His Holiness the Catholicos invites all the Armenian churches to offer thanks-giving prayers on November, for the stability and everlasting advance of our Fatherland. (3—5)

2. The letter of blessing of His Holiness the Catholicos addressed to the participants of the annual Meeting of Delegates of the Armenian Eastern Diocese of USA, which convened on May of the current month.

His Holiness underlined in His speech that the Armenian people during the entire course of her history has clinged to Christianity and to her Mother Church for the preservation of her spiritual freedom and independance, her national scholarship and culture under the blessings of Holy Etchmiadzin.

His Holiness exhorts the church representatives to remain faithful to those traditions also in our days. (6—8)

3. The speech of his Holiness the Catholicos, addressed to the Conference of Armenian Churchmen of the Eastern Diocese of the USA, which also convened on May. His Holiness notes that the Armenian people during her entire life and history, has preserved the purity of the light of Christ, remaining uniquely and authentically Christian. His Holiness calls on the whole Armenian clergy of the USA, not to weaken on their mission, so as the light of faith of the spirit, remains ever burning among the devout. (9—12)

4. The letter of blessing of His Holiness the Catholicos, addressed to the Conference of the Armenian Diocese of USA, which convened on May of the current year. His Holiness in His speech, wishes the participant members of the Conference unending enthusiasm, in order to continue their God-pleasing mission for the development of the Armenian people's spiritual life, under the benevolent sun of the Christ-loving American country. (13)

5. The sermon of His Holiness the Catholicos delivered at St. Sarkis Church in Erevan, on May 11, 1980.

On May 11, on the occasion of the victory anniversary of the Patriotic War, His Holiness the Catholicos visited and spoke at St. Sarkis Church of Erevan, where He recalled the heroic participation of the Armenian people, on all battle-fronts for the defence of the Fatherland and freedom (14—15).

6. The Encyclical of His Holiness the Catholicos about confirming the office of Right Reverend Father Avak Assadourian, as the newly elected Primate of the Armenian Diocese of Iraq (16—17)

7. In the present issue of the journal the following Patriarchic Encyclical of blessing are published:

- a) On occasion of the 50th anniversary of the construction of „St. Gregory the Illuminator's“ Armenian Church in St. Cathrine, Canada.
- b) On occasion of the anointment of the newly built „Holy Resurrection,“ Armenian Church, in Connecticut, New Britain, USA.
- c) About the granting of the medal of „St. Gregory the Illuminator“ to Prof. Parounag Tovmassian from Beirut (16—20)

8. On Sunday, May 25, the 62nd anniversary of the heroic Battle of Sardarapat, Divine Liturgy was celebrated in the Cathedral of Holy Etchmiadzin. In His patriotic sermon, His Holiness the Catholicos recalled the sacred memory of those who died on the battlefield „for Christ and for the Fatherland“. (21—24)

9. During the Enthronement ceremonies of His Holiness the Primate of All England and Archbishop of Canterbury, Robert Runcie, on May 25, at the Canterbury Cathedral, on behalf of His Holiness Vasken I, Catholicos of all Armenians, His Grace Archbishop Serovpe Manoogian, from Paris, and His Grace Bishop Nerses Bozabalian from London, participated and handed to the newly enthroned Head of the Anglican Church, the congratulatory letter of His Holiness the Catholicos. (25—26)

19. His Holiness the Catholicos received in the Catholicosate the priests of the Mother See and the Araratian Diocese, and welcomed the initiative of His Grace Archbishop Komitas Der-Stepanian, Deputy Primate of the Araratian Diocese, to organize a re-preparation course for the priests, mainly aiming at assisting them in sermon-speaking. (27)

11. Brief ecclesiastical news from the Mother See; Divine Liturgies celebrated and sermons spoken during the current month and official visits. (28—30)

12. Bishop Zkon Der-Hagopian: „Pentecost“ sermon delivered on the same occasion. (31—32).

13. Mr. Artoun Hadidian: „The Sion periodical“; last year, 53 years were completed since the present publication of „Sion“, the official journal of the Armenian Patriarchate of Jerusalem. In the current article the author presents the religious, ecclesiastical, sermonic, poetic, historical-philological materials that have been published in the united six issues of 1979. (33—38)

14. Father Yeznik Bedrossian and Rev. Haigazoun Nadjarian have edited and published an original manuscript entitled „Fragments from Origin's Armenian translation“. (39—44)

15. Prof. Ashot K. Abrahamian's article „A few documents from the tragic days of the Armenian Genocide“, continues in this issue from the last one (45—49)

16. Souren Kolandjian: Literary criticism—A catalogue of medieval Armenian manuscripts in the United States, by Avedis K. Sanjian, University of California Press, Berkeley-Los Angeles—London, 1976, XIX, 863.

17. The current issue concludes with two obituaries, spoken on occasion, of the deaths of Prof Arakel Kevork Arakelian (1887—1980) and Mr Parsegh Tashdjian (1919—1980). (57—59).

**"ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE
D'ETCHMIADZINE (MAI 1980)**

1. Encyclique de Sa Sainteté à l'occasion de la soixantième anniversaire de la fondation du régime soviétique en Arménie.

Dans Son encyclique Sa Sainteté indique qu'en novembre de cette année se terminent les soixante années du nouvel Etat du peuple Arménien, de la République Soviétique d'Arménie. Les soixante années passées ont été des années de fondation des nouveaux cités, de reconstruction économique répandue, des années florissantes dans des conditions de paix et de sûreté.

Dans cette période patrimoniale de renaissance, le Saint-Siège d'Etchmiadzin, aussi a vécu sa renaissance, avec le réveil de la vie spirituelle, avec la restauration d'une dizaine de monastères et églises historiques et surtout avec l'embellissement imprécédent de Ste. Etchmiadzine. Dans Son encyclique Sa Sainteté invite toutes les églises arméniennes de célébrer des souhaits d'action de grâce en novembre pour l'inébranlabilité et fleuraison éternel de la mère patrie des Arméniens.

2. Le message de bénédiction du Catholikos de tous les Arméniens adressé à l'assemblée annuelle des députés de la diocèse orientale des Arméniens des Etats-Unis d'Amérique, convoquée en mai de cette année.

Dans Son message Sa Sainteté souligne, que le peuple Arménien pour garder son existence, son identité, la liberté et l'autonomie de son âme pendant toute son histoire, il est confié à sa foi Chrétienne, sous la bénédiction de la Ste. Etchmiadzine, à sa littérature et culture nationale. Sa Sainteté donne message aux représentants des organisations diocésaines et ecclésiastiques de rester fidèle aussi dans nos jours aux mêmes traditions.

3. La parole de Sa Sainteté adressée à l'assemblée générale des clergés de la diocèse orientale des Arméniens des Etats-Unis d'Amérique, qui est convoquée aussi au mois de mai.

Dans Son message patrilial Sa Sainteté indique que le peuple Arménien a gardé incorruptiblement la lumière du Christ dans sa vie et histoire, en construisant authentiquement sa manière particulière d'être et de vivre Chrétien.

Sa Sainteté fait appel au clergé Arménien d'Amérique, de ne pas s'affaiblir dans le chemin de leur mission, pour que la lumière de la foi de l'âme Arménien soit illuminée, dans la conscience des croyants qui sont livrés à leur sollicitude spirituel (pages 9—12).

4. Le message de Sa Sainteté adressé à l'as-

semblée annuelle de la diocèse orientale des Arméniens des Etats-Unis d'Amérique, qui est convoquée au mois de mai de cette année. Dans Sa parole le Catholikos de tous les Arméniens souhaite aux honorables membres du conseil diocésain une ardeur inépuisable de travail, pour continuer leur mission Dieu-plaisant pour l'édification de la vie spirituelle du peuple Arménien, sous le soleil du pays américain Christ-aimant (page 13).

5; L'homélie de Sa Sainteté prononcée dans l'église St. Sarkis, le 11 mai 1980.

Le 11 mai, à l'occasion de la fête pour la victoire de la Seconde guerre mondiale, Sa Sainteté visite et prêche dans l'église St. Sarkis, évoquant aussi la participation héroïque des fils du peuple Arménien dans tous les fronts de la guerre, pour la défense de la Patrie et de la liberté (pages 14—15).

6 L'encyclique de Sa Sainteté pour confirmer le poste de la prélature des Arméniens de l'Iraq du Révérend Père Avak Assatourian (pages 16—17).

7. Dans ce numéro de la revue "Etchmiadzine" sont publiés quelques encycliques de bénédiction de Sa Sainteté:

a) A l'occasion du cinquantième anniversaire de la construction de l'église Arménienne Saint Grégoire l'Illuminateur de St. Catharines au Canada.

b) A l'occasion de l'église Ste. Ressurrection, nouvellement construite au New Britain (Connecticut, Etats-Unis d'Amérique).

c) Attribution de décoration de "Saint Grégoire l'Illuminateur" du premier ordre à Prof. Baranak Tovmassian de Beyrouth (pages 16—20).

8. Dimanche, le 25 mai, à l'occasion du 62-ième anniversaire de la héroïque bataille de Sardarapat du mai 1918, s'est célébré la Ste. messe dans la Cathédrale de Ste. Etchmiadzine et à cette occasion Sa Sainteté par Son homélie patriotique évoque la mémoire des soldats et des généraux Arméniens qui sont sacrifiés "pour Jésus et pour la patrie" (pages 20—24).

9. Le 25 mai à l'occasion de la cérémonie de l'avènement de l'archevêque Robert Runcie, le nouvel élu métropolitain de Canterbury et le Primat de tout l'Angleterre, dans la Cathédrale de Canterbury, au nom de Sa Sainteté ont été présent de Paris Mgr. l'archevêque Sérovbé Manoukian et de Londres Mgr. l'évêque Nersès Bobakalian, qui présentent au nouvel élu le message de félicitation du Catholikos de tous les Arméniens (pages 25—26).

10. Sa Sainteté reçoit le 26 mai les prêtres de la Saint-siège et de la diocèse d'Araratian au Résidence Patriarcale et félicite l'initiative de Mgr. l'archevêque Komitas, le vicaire du prélatu-

re, d'organiser des cours de préparation des prêtres, dont le but réel est d'aider aux pères spirituels dans l'affaire de préparer l'homélie (page 27).

11. Saint-Siège, différentes informations mensuelles à propos des cérémonies ecclésiastiques, homélies et visites (pages 28—30).

12. Mgr. l'évêque Zgon Ter-Hagopian: "l'entécote" homélie à l'occasion de la fête de Pentécôte (pages 31—32).

13. Hadidjan Artoun "Le mensuel "Ston": en 1979 s'est terminé les 53 années de la nouvelle période de la publication de la revue "Ston", organe officiel du Patriarcat Arménien de Jérusalem. Dans cet article s'est présenté à l'attention des lecteurs du mensuel "Etchmiadzine" les matériels religieux, ecclésiastiques, des homélies, des poésies, d'histoire et de philologie, qui sont publiés dans les six numéros unis du mensuel "Ston" de l'année 1979.


14. Dans ce numéro du mensuel les membres de la congrégation du Saint-Siège prêtre Eznik Petrossian et Rev. Haygazoun Nadjarlan ont pu-

blié le manuscrit du Maténadaran, la bibliothèque d'état au nom du St. Mesrop Machtlotz, qui a le numéro 6036 "Des fragments de la traduction arménienne d'Origène", "Parole d'Origène—Livre cinquième", le texte original avec des annotations et photos (pages 39—44).

15. Dans ce numéro s'est continué la publication de l'article du professeur Achote Abrahamian "Quelques documents des jours sanglants du Grand Génocide", dont la première partie est publiée dans le 4-ième numéro de ce mensuel (pages 45—49).

16. Souren Kolandjian, Critique littéraire, Doct.-Prof, Avédis Sandjian, Catalogue des manuscrits arméniens médiéval des Etats-Unis, publication de l'université de Californie, Berkeley-Los Angeles—Londres, 1976, page XIX—863, (page 50—56).

17. Le dernier matériel du mensuel se sont deux nécrologues: du professeur Arakel Guévorg Arakellian (1887—1980) et Barsegh Tachdjian (1919—1980) à l'occasion de leur mort (pages 57—59).



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման վաթսուամյակի առթիվ	3
Նորին Սրբություն Ս. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը՝ ուղղված Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի պատգամավորական ժողովին	6
Վեհափառ Հայրապետի խոսքը՝ ուղղված Միացյալ Նահանգաց Բողոքականաց համագումարին	9
Վեհափառ Հայրապետի օրհնության գիրը՝ ուղղված Հյուսիսային Ամերիկայի հայոց արևմտյան թեմի թեմական տարեկան համագումարին	13
Վեհափառ Հայրապետի քարոզը Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցում	14
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ օրհնության կոնդակը Իրաքի հայոց թեմի նորընտիր առաջնորդ Ս. Ավագ վարդապետ Ասատուրյանի առաջնորդական պաշտոնը հաստատելու մասին	16
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ օրհնության կոնդակը Կանադայի հայոց Սենթ Գեորգիոզի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինության հիմնադրման առիթով	17
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ օրհնության կոնդակը ԱՄՆ-ի Նյու Պրիթլեն Գլենթիքսթի Ս. Հարություն նորակառույց եկեղեցու օծման առիթով	18
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ օրհնության կոնդակը բեյրության պրոֆեսոր Բարունակ Թովմասյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» Ա կարգի շքանշանով պարգևատրելու մասին	19
Մարդարապատի հերոսամարտի ոգեկոչումը Մայր Աթոռում	21
Համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ Քեմթրեբերի նորընտիր Արքեպիսկոպոս Ռոբերտ Ռանսի գահակալությունը	25
Վեհափառ Հայրապետը ընդունում է Մայր Աթոռի և Արարատյան թեմի քահանա հայրերին	27
ՄԱՅՐ ԱԹՈՐՈՒՄ—եկեղեցական քեմ. լուրեր	28
ԶԳՈՆ ԵՊՍ. ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ—Հոգեգալուստ	31
Ա. Հ.—«Միոն» ամսագիրը	33
Նշխարներ Որոգինեայի հայկական թարգմանություններից	39
ԴՐՈՖ. Ա. Գ. ԱՐԱՎԱՍԵՅԱՆ—Մի քանի վավերագրեր Մեծ եղեռնի արյունոտ օրերից ՍՈՒՐԵՆ Ե. ԲՈՂԱՆՋՅԱՆ—Պրոֆ., դոկտ. Ավետիս Սանճյան, Միացյալ Նահանգների միջնադարյան հայերեն ձեռագրերի ցուցակ, Կալիֆոռնիայի համալսարանի հրատարակչություն, Բերկլի. Լոս Անջելոս. Լոնդոն, 1976, էջ XIX—863	50
Մահ պրոֆ. Առաքել Գևորգի Առաքելյանի	57
Մահ Բարսեղ Թաշչյանի	59
«Эчмιάдзин» официальный журнал Святого Эчмιάдинского Престола	60
„Etchmiadzin“ official journal of Holy Etchmiadzin	61
„Etchmiadzine“ organe officiel du Saint Siege d'Etchmiadzine	63

ԽՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱՇԻՆ

«ԷՋՄԻԱՇԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмιάдзин, Редакция журнала «Эчмιάдзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie. URSS

Հանձնված է արտադրության 10.06.1980 թ.: Ստորագրված է տպագրության 24.07.1980 թ.:
Տպագրական 4 մամուլ + 4 ներդիր, թուղթ 80×84¹/₃, պատվեր 599:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1980 թ.